

ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վարդան Էդուարդի Սախկալյան

Իրավունքի էությունը և սոցիալական նշանակությունը.
պատմական-տեսական վերլուծություն

Ատենախոսություն

ԺԲ. 00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,
պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. Սաֆարյան

Երևան - 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ

ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՍԿՊԵԿՏՆԵՐԸ

- 1.1. Իրավունքի գիտական ճանաչողության հիմնախնդիրները. մոտեցումների համեմատական վերլուծություն.....10
- 1.2. Իրավունքը սոցիալական կյանքի նորմատիվ կարգավորիչների համակարգում.....21

ԳԼՈՒԽ 2

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ, ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- 2.1 Իրավունքի էության և բովանդակության ասպեկտները.....43
- 2.2 Իրավունքի էական հատկանիշները.....53
- 2.3 Իրավունքի սոցիալական նշանակության հասկացությունը.....69

ԳԼՈՒԽ 3

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ

ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- 3.1 Իրավունքը որպես հասարակական (սոցիալական) բարիքի նորմատիվ ձև. պատմատեսական վերլուծություն.....85
- 3.2 Իրավունքի սոցիալական նշանակության հայեցակարգի հիմնախնդիրը իրավունքի տեսությունում.....126

ԱՄՓՈՓՈՒՄ145

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....149

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Մարդկային հասարակությունը իրենից ներկայացնում է բարդ, բազմամակարդ, հակասական, շարժվող, դինամիկ սոցիալական օրգանիզմ: Երբ այն հայտնվում է ճգնաժամային պայմաններում և դրանց ձևավորման նոր բազմաքանակ ձևերում, ապա ցանկացած սոցիալական խնդիր դառնում է բավականին դժվար ճանաչելի, քանի որ իմացաբանորեն հասնել դրա էությանը, որը պարունակվում է անորոշությունների և փոփոխական իրավիճակների համակարգերում, և միևնույն ժամանակ փոփոխված և արդիականացված պրոցեսներում, որոնցում գտնվում է հետազոտվող առարկան, բավականին դժվար է: Բացի դրանից, վերլուծվող առարկան ևս փոփոխական է, իսկ հետևաբար դրա ներքին բովանդակությունը զգում է իր վրա ոչ միայն արտաքին ճգնաժամային «ճնշումներ», այլ նաև ծագում են ներճգնաժամայինները: Այդ փոխկապված իրադարձությունների, երևույթների դիալեկտիկական բնականաբար արտահայտվում է գիտնականների վերլուծական և այլ տեսական գործունեության պրոցեսների վրա:

Հասարակական ճգնաժամային զարգացման հատվածում գիտական իմացության տարածությունում ի հայտ են գալիս բազմաթիվ սոցիալ-իրավական խնդիրներ: Անցումային հասարակությունում դրանք էականորեն ավելացնում են իրենց ծավալը, բովանդակությունը և տարածականությունը: Նախկին խնդիրները, որոնք հարաբերականորեն լուծված էին, դառնում են նոր բովանդակությամբ «պարուրված» և նորովի մոտեցումների, լուծումների անհրաժեշտություն է առաջանում: Տեսությունը չի հասցնում պրակտիկայի հետևից, իսկ պրակտիկան տեսությանը «հում նյութ» է մատակարարում, որը իր չզարգացվածության, և չձևավորվածության ուժով կարող է հանգեցնել տեսական եզրակացությունների խեղաթյուրման:

Այստեղից, գիտության ցանկացած ոլորտի հետազոտողների առջև ծառանում են բազմաթիվ խնդիրներ ոչ միայն կոնկրետ թեմայի վերլուծության պլանում, այլ նաև դեպի նպատակը՝ իրականության նկատմամբ շարժման մեջ: Ընդհանուր խնդրի բազմաոլորտային իրավական իմացության շրջանակներում ծագում է այն գիտական ոլորտի հետազոտության օբյեկտիվ և սուբյեկտիվ անհրաժեշտություն և պահանջ, որն

ունակ է ավելացնել իր տեսական-գործնական պոտենցիալը և, իրականացնելով դա, թեկուզ մեղմացնել ճգնաժամային պրոցեսները: Դրան, անկասկած, անհրաժեշտ է դասել իրավաբանական գիտությունը և հատկապես պետության և իրավունքի տեսությունը և պատմությունը:

Օրենսդրության որակից, իրավական նորմերի՝ որպես պաշտպանիչների և անհրաժեշտ կարգավորիչների իրականացումից, մեծամասամբ կախված է հասարակության, նրա իրավական ինստիտուցոնալ համակարգի բնականոն իրավաչափ կենսագործունեությունը: Նույնիսկ այդ պայմաններում չի նվազում, այլ հակառակը, մեծամասամբ գործնականում իրականացվում և հաստատվում է տեսակետ, որին համապատասխան ցանկացած հասարակական խնդիր պետք է դիտարկվի օրենքի, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների առաջնության տեսանկյունից: Եվ եթե մեր երկրում իրավունքը երբեք հանդես չի եկել արժեքի դերում բազմաթիվ անձանց, սոցիալական խմբերի, խավերի համար, ապա սպասել տվյալ իրավիճակի արագ փոփոխությանը միամտություն է: Սակայն դժվար, ճգնաժամային պայմաններում ստեղծվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնք դառնում են մարդկային այս կամ այն խնդրի արմատական փոփոխման նախադրյալ, և իրավունքի դերը դրանում կարող է դառնալ վճռորոշ, էական: Այլ խոսքերով, իրավական նորմերի և արժանապատիվ մարդկային գոյության իրավունքի դիալեկտիկ միավորումը գիտատեսական հետազոտության բազայի հիման վրա դրանց փոխլրացնող և փոխհատող գործնական իրականացմամբ կարող է դառնալ ծագած հասարակական խնդիրների լուծման արդյունավետ մեխանիզմ: Իրավունքի սոցիալական նշանակության հիմնախնդիրը հանդիսանում է խիստ արդիական, ինչպես գիտատեսական, այնպես էլ գործնական հարաբերություններում, որը հանդիսանում է օբյեկտիվ անհրաժեշտություն վերջինիս գիտական հետազոտության համար:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության վիճակը անբավարար է, քանի որ, առաջին, իրավագետների մեծամասնությունը իրավունքի սոցիալական նշանակությունը նույնականացնում են դրա գործառույթների հետ, երկրորդ, «սոցիալական» եզրույթը դիտարկում է բառի լայն և նեղ իմաստներով, սակայն նեղը՝

տվյալ հասկացության սեփական բովանդակությունը, որպես կանոն, իրավագիտությունում չի բացահայտվում, երրորդ, այստեղից իրավունքի սոցիալական նշանակությունը նեղ է մեկնաբանվում: Պետության և իրավունքի տեսությունում, չի ստացել հանգամանալից լուսաբանություն և տեսական հիմնավորում, որը բացասական է ազդում իրավաբանական պրակտիկայի վրա:

Իրավունքի սոցիալական ասպեկտի հետազոտությունը այս կամ այն չափով հետազոտվել են Ն.Ա. Ապիյանի, Հ.Մ. Ստեփանյանի, Վ.Վ. Ստեփանյանի, Ս.Ս. Ալեքսեևի, Վ.Մ. Բարանովի, Մ.Ի. Բայտինի, Վ.Գ. Գրաֆսկու, Վ.Ի. Գույմանի, Դ.Ա. Կերիմովի, Յու.Ի. Կոզլիխինի, Օ.Է. Լեյստի, Ռ.Ջ. Լիվշիցի, Վ.Պ. Մալախովի, Ա.Վ. Մալկոյի, Մ.Ն. Մարչենկոյի, Ն.Ի. Մատուզովի, Ի.Վ. Մարտիշինի, Վ.Ա. Մուրավսկոյի, Վ.Ս. Ներսեսյանցի, Ի.Ա. Պոկրովսկիի, Ա.Վ. Պոլյակովի, Ֆ.Ի. Ռայանովայի, Ռ.Ա. Ռոմաշովի կողմից: Իրավունքի սոցիալական հիմքերի հետ կապված հիմնախնդիրներն ուսումնասիրվել են՝ Ա.Վ. Ալեքսանդրովայի, Ա.Ն. Բաբենկոյի, Գ.Կ. Վարդանյանցի, Յու.Ի. Գրևցովի, Ե.Շ Գոնտմախերի, Մ.Ռ. Դեմետրազդի, Վ.Դ. Զորկինի, Ա.Հ. Իվանովի, Ս.Ա. Իվանովի, Վ.Ն. Կուդրևավցևի, Վ.Պ. Կազիմիրչուկի, Ս.Ի. Կուրգանովի, Ա.Ի. Կրավչենկոյի, Վ.Վ. Լապակի, Գ.Վ. Մալցևի, Վ.Մ. Սիրիխի, Վ.Ե. Չիրկինի, Բ.Ս. Իբզևեևի և այլ գիտնականների կողմից:

Իրավունքի սոցիալական նշանակության պարադիգմային հիմունքները ներկայացված են արևմտյան գիտնականների աշխատություններում, Ժ. Բերժեյ, Գ. Բերման, Ռ. Դավիդ, Լ. Դյուգա, Գ. Ելլինեկ, Ռ. Իերինգ, Ժ. Կարբոն, Գ. Կլեններ, Կ. Կուլչար, Ռ.Մյուլլերսոն, Մ. Օրի, Ս. Ռադբրուխ, Ն. Ռուլան և այլ:

Վերը շարադրվածից կարելի է հանգել հետևյալ եզրակացության, որ հետազոտության թեմայի տարբեր ասպեկտներ, ստացել են որոշ արտացոլում գիտական և ուսումնական իրավաբանական գրականությունում: Սակայն տվյալ առարկայական ոլորտը դիտարկվում է միակողմանի, կամ վերացական, դրա համակողմանի և համալիր տեսական վերլուծությունից դուրս: Որոշակի չափով իրավունքի սոցիալական նշանակության գիտատեսական արդիական խնդիրների լուծմանն է կոչված սույն առենախոսական աշխատանքը:

Առենախոսական հետազոտության օբյեկտն է իրավունքի էության և

սոցիալական նշանակության բովանդակության բացահայտումը:

Հետազոտության առարկան է հասարակությունում իրավունքի էության և սոցիալական նշանակության տեսական և գործնական ասպեկտների համալիր վերլուծությունը փոխակերպվող հասարակության պայմաններում:

Ատենախոսական հետազոտության նպատակն է ժամանակակից Հայաստանի ներկայիս զարգացման պայմաններում իրավունքի սոցիալական նշանակության հիմնահարցի համալիր և համակողմանի վերլուծությունը:

Տվյալ նպատակի իրականացումը ենթադրում է հետևյալ **խնդիրների** լուծումները.

- բացահայտել իրավունքի էության և բովանդակության ասպեկտները,
- սահմանել «իրավունքի սոցիալական նշանակություն» հասկացությունը,
- վերլուծել իրավունքի սոցիալական նշանակության խնդիրը պատմական զարգացման համատեքստում,

- բացահայտել իրավունքի սոցիալական նշանակությունը հետխորհրդային ժամանակաշրջանի իրավական համակարգերում և իրավական պատկերացումների մեջ,

- ներկայացնել իրավունքի սոցիալական նշանակության բովանդակության և դրա իրականացման խնդիրը սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները. Ատենախոսության շրջանակում հետազոտությունները կատարվել են համընդհանուր դիալեկտիկայի օրենքների և կատեգորիաների, փիլիսոփայական-աշխարհայացքային ժամանակակից մոտեցումների, համակարգային և ֆունկցիոնալ մեթոդների, ինչպես նաև կոնկրետ իրավաբանական՝ համեմատական իրավական, ձևական-իրավաբանական վերլուծության մեթոդներով:

Աշխատանքի համար տեսական հիմք են ծառայել հայրենական և արտասահմանյան գիտնականներ՝ Ն.Ա. Ապիյանի, Գ.Բ. Դանիելյանի, Ա.Շ. Հարությունյանի, Գ.Գ. Հարությունյանի, Հ.Մ. Ստեփանյանի, Վ.Վ. Ստեփանյանի, Գ.Գ. Սաֆարյանի, Ս.Ս. Ալեքսեևի, Է. Աներսի, Ա. Բարակի, Մ.Ի. Բայտինի, Վ.Մ. Բարանովի, Ժ.Լ. Բերժեվի, Գ. Բերմանի, Ա.Բ. Վենեգրովի, Յու.Ի. Գրևցովի, Ս.Վ. Բոբոտովի, Վ.Գ. Գրաֆսկու, Ա.Ա. Դենիսովի, Կ.Կ. Ժոլի, Ի.Յու. Կոզլիխինի, Դ.Ա. Կերիմովի, Վ.Ն.

Կոպրյավցովի, Վ.Վ. Լապանայի, Վ.Վ. Լազարևի, Վ.Պ. Մալախովի, Գ.Վ. Մալցեի, Մ.Ն. Մարչենկոյի, Վ.Ս. Ներսեսյանցի, Ա.Վ. Պոլյակովի, Լ.Ի. Սպիրիդոնովի, Վ.Ս. Սիրիխի, Վ.Ա. Տումանովի և այլոց աշխատությունները:

Հետազոտության գիտական նորույթը. Ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը նրանում է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին համալիր ու համակողմանի հետազոտություն է՝ կապված իրավունքի էության և սոցիալական նշանակության հիմնախնդիրների հետ: Բացի դրանից, աշխատանքում հիմնավորվում է սոցիալական իրավունքի՝ որպես իրավունքի հատուկ ոլորտի սահմանադրման անհրաժեշտությունը, տեսականորեն բացահայտվում է իրավունքի սոցիալական նշանակության արժեքը, համակողմանի վերլուծված է իրավունքի սոցիալական նշանակության բովանդակությունը միջազգային և ազգային օրենսդրությունում՝ դրանց կիրառման համատեքստում:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները.

1. «Իրավունքի սոցիալական նշանակություն» կատեգորիան բովանդակային առումով բազմապլան է, ինչպես իր ամբողջության, այնպես էլ հարաբերական բնութագրերում: Իրավունքի սոցիալական նշանակությունը՝ նրա գործառույթների, խնդիրների, արդյունքների, նպատակների փոխկապվածության մեջ է, որոնք իրավական-նորմատիվային տարածությունում արտահայտում են մարդկանց, ինստիտուցիոնալ համակարգերի իրավաչափ գործողությունները, նրանց կարիքները և շահերը: Անհրաժեշտ է սոցիալական իրավունքը տեսականորեն առանձնացնել որպես իրավունքի հարաբերականորեն անկախ կատեգորիա:

2. Իրավունքի սոցիալական նշանակության առարկայական դրույթները հստակորեն պետք է արտահայտեն իրավական (իսկ ավելի ճիշտ՝ սոցիալ-իրավական) պետության էությունը, որում բոլոր իրավաստեղծ սուբյեկտների՝ ժողովրդի, պետության, պետական և ինքնակառավարման մարմինների իրավաստեղծ գործունեության բովանդակությունը և էությունը, պետք է արտացոլեն հասարակության, նրա առանձին խմբերի և անհատ անձանց օրինական շահերը:

3. Սոցիալական իրավունքը՝ որպես բարիք, իրավական հարաբերությունների և գործունեության առանձին տեսակների նորմատիվային ոլորտն է, որի

բովանդակությունն է կազմում սոցիալ-իրավական արժեքները՝ սոցիալական արդարությունը, մարդկանց սոցիալական երաշխավորված պաշտպանվածությունը, հասարակության անվտանգությունը և համընդհանուր բարօրությունը:

4. Փոխակերպվող հասարակությունում, որպես կանոն, տիրապետող է իրավական նիհիլիզմը, որը գործնականում արտահայտվում է սոցիալական արդարության և իրավաբանական հավասարության համակարգված խախտումներում: Այս պարագայում սոցիալական արդարության և իրավաբանական (ձևական) հավասարության իրավական կարգավորումը հանդիսանում է ոչ արդյունավետ, որի արդյունքում իրավունքը և դրա ինստիտուտները կորցնում են իրենց սոցիալական նշանակությունը: Արժանապատիվ մարդկային կեցության իրավունքը չի աշխատում: Իրավաբանորեն ամրագրված ձևական հավասարությունը խիստ հետ է մնում փաստացի հավասարությունից: Գոյություն չունի ելակետային հավասար հարաբերություններ մարդկանց համար նրանց կենսական կողմնորոշումների, գործողությունների ոլորտում: Այս առումով ավելի նշանակալի է ներկայանում իրավունքի սոցիալական գործառույթը, նրա սոցիալական ուղղվածությունը, որը բովանդակային առումով պետք է արտացոլվի՝ պետության իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործունեության մեջ:

5. Փոխակերպվող հասարակությունում առավել կարևորվում է պետության և իրավունքի դերը հասարակության էական և ուժեղացող բևեռացման, քաղաքացիների գույքային և այլ սոցիալական անհավասարության աճի հաղթահարման, տարբեր մակարդակների սոցիալական համակարգերի ինստիտուցիոնալ կառուցվածքների գործունեության արդյունավետությունն ապահովելու համար:

6. Առաջարկվում է ընդունել «Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ իրավական ակտերի սոցիալական չափումների մասին» ՀՀ օրենքը, որում պետք է ամրագրել ընդունվող իրավական ակտի վերաբերյալ հետևյալ պահանջները. օրինագծերի բովանդակությունը՝ դրա մարդկային չափման սոցիալական նշանակության առումով, այսինքն ազգային օրենսդրության ելակետային, որոշիչ չափանիշներից մեկը՝ նրա սոցիալական ուղղվածությունը և յուրաքանչյուր օրինագծի գործադրման սոցիալական կառուցակարգը :

Հետազոտության գիտատեսական և գործնական նշանակությունը.

Աշխատանքի գիտատեսական նշանակությունը նրանում է, որ մենագրության ձևով ամփոփված է արդի իրավահասկացության հիմնական տիպերից մեկի՝ իրավունքի սոցիալական նշանակության և սոցիալական հիմնավորվածության հետ կապված համալիր հիմնախնդիրները, որը, անշուշտ ճանապարհ կհարթի հետագա հետազոտողների և ուսումնասիրողների համար:

Գործնական առումով, այն օգտակար կլինի իրավունքի տեսության և պատմության, իրավական ուսմունքների պատմության դասընթացների ուսումնառության ընթացքում, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների աշխատակիցների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Աշխատանքը կատարվել է

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել են դրա քննարկումը և գրախոսությունը:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը. Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է՝ ներածական մասից, երեք գլխից, որոնք ներառում են յոթ ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՍԿՊԵԿՏՆԵՐԸ

1.1 Իրավունքի գիտական ճանաչողության հիմնախնդիրները. մոտեցումների համեմատական վերլուծություն

Իրավունքը առավել բարդ, բազմիմաստային, բազմաշերտային, բազմակողմանի սոցիալական երևույթ է: Իրավունքի էությունը և սոցիալական նշանակությունը բացահայտելու համար, անհրաժեշտ է հանգամանորեն խորամուխ լինել այդ բարդ սոցիալական երևույթի գիտական ճանաչողության հետ կապված հիմնախնդիրների պարզաբանման մեջ: Այս առումով, իրավահասկացության հիմնահարցը կենտրոնական տեղ է զբաղեցնում իրավաբանական գիտության մեջ: Սակայն որքան էլ դա պարադոքսալ թվա, «իրավահասկացում» բուն ֆենոմենը, մեր կարծիքով, հետազոտված է շատ մակերեսորեն: Անբավարար չափով են մշակված իրավահասկացման հարցերը գրականության մեջ, չկա միանշանակ պատասխան «ի՞նչ է նշանակում հասկանալ իրավունքը»¹: Ընդհանրապես, հասկացությունը մտածողության կառուցվածքային ձև է, որն արտացոլում է առարկան իր էական հատկանիշներով²:

Դրան համապատասխան իրավահասկացումը բնորոշվում է որպես իրավական կատեգորիա, որը վերաբերվում է դոկտրինալ իրավագիտակցության և իրավական մշակույթի բնագավառին և ներառում է ողջ իրավական համակարգը, այդ թվում իրավաստեղծ, իրավակիրառ և իրավասահման ոլորտները³:

Ըստ ամենայնի, առաջադրված այս բնորոշումը չի կարելի բավականաչափ հաջող համարել, քանի որ դրանում ակնհայտորեն բացահայտված չեն բուն ֆենոմենի էական հատկանիշները: Հեղինակն, ըստ էության, միայն արձանագրում է, որ իրավահասկացումը վերաբերվում է իրավագիտակցության որոշակի ոլորտին և թվարկում է միայն նրա փորձարարական արտաքին դրսևորումները, այսինքն, նշում է,

¹ Տե՛ս **Шлекин С.И.** Проблема права. Философско-методологический аспект. М., 2013. С. 8-9.

² Տե՛ս **Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ.** Տրամաբանություն: Երևան, 2015, էջ 14:

³ Տե՛ս նաև Соеремненное правопонимание. Курс лекций. Отв. ред. **М.Н. Марченко.** М., 2016, с. 25-26.

թե որ տեսքով է այն «ներկայացված»:

Մարդիկ արդեն հազարամյակներ փորձում են ճանաչել իրավունքը և այդ ճանաչողության արդյունքում տալիս են իրավունքի որևէ հասկացության բնորոշումը: Ճանաչողական այդ գործընթացն իրավագիտության մեջ անվանում են «իրավահասկացողություն»: «Իրավահասկացողություն» կատեգորիան մատնանշում է, ոչ թե իրավունքի հասկացության բնորոշումը, այլ թե ինչ է նշանակում ճանաչել, հասկանալ իրավունքը, ով է ճանաչում իրավունքը և ինչպես⁴:

Ինչպես նշում է ակադեմիկոս Վ.Ս. Ներսեսյանցը. «Իրավագիտության՝ որպես իրավունքի և պետության մասին գիտության համար ելակետային ու որոշիչ նշանակություն ունի դրա հիմքում ընկած իրավունքի հասկացության այս կամ այն տիպը: Հենց իրավահասկացողության տիպն է որոշում իրավունքի և պետության իրավաբանական իմացության պարադիգմը, սկզբունքն ու նմուշը (իմաստային մոդելը), իրավագիտության համապատասխան հայեցակարգի սեփական գիտական-իրավական բովանդակությունը, առարկան և մեթոդը»⁵:

Իրավահասկացողությունը որպես մարդու կողմից իրականացվող ճանաչողական գործունեություն ունի սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն: Դրանք իրավահասկացողության որպես իմացաբանական գործունեության, բաղադրիչներն են:

Իրավահասկացողության սուբյեկտը կոնկրետ մարդն է որպես անհատ, իրավագետը, փիլիսոփան, այսինքն՝ նա ով փորձում է ճանաչել, հասկանալ իրավունքը: Հենց այս հանգամանքն էլ պայմանավորում է իրավահասկացողության դրսևորման բազմազանությունը և միաժամանակ այն փաստը, որ միասնական իրավահասկացողություն գոյություն ունենալ չի կարող, որովհետև ինչքան մարդիկ, այնքան էլ պատկերացումներ իրավունքի վերաբերյալ: Իրավահասկացողության հիմանխնդրում կամ իրավահասկացողության բովանդակության, որպես ձեռք բերված գիտելիքի, հարցում շատ մեծ նշանակություն ունի իրավահասկացողության սուբյեկտի մշակույթի մակարդակը, մեթոդաբանական-փիլիսոփայական գիտելիքները, նույնիսկ սուբյեկտի խառնվածքը:

⁴ Վաղարշյան Արթուր Պետության և իրավունքի տեսություն - 2: Դասախոսություն: Երևան, 2011, էջ28:

⁵ Տե՛ս Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն: Երևան, 2001, էջ 29:

Իրավահասկացողության օբյեկտն օբյեկտիվ իմաստով իրավունքն է, որպես ամբողջական հասարակական երևույթ:

Իրավահասկացողության բովանդակությունը սուբյեկտի օբյեկտի վերաբերյալ ձեռք բերած իմացությունը, գիտելիքն է, այսինքն՝ պատասխանը այն հարցին, թե ինչ է իրավունքը: Իրավահասկացողության որպես մտավոր գործունեության արդյունքը իրավունքի ինչ որ հասկացությունն է: Իսկ այդ հասկացությունը, այսինքն՝ թե ինչ է իրավունքը ունի շատ մեծ և կարևոր տեսամեթոդաբանական և գործնական-կիրառական նշանակություն⁶:

«Իրավունքի» հասկացությունը հետազոտությանը հնարավորություն է տալիս համակարգել բոլոր իրավահասկացությունները, ըստ ընդհանուր և տարբերիչ հատկանիշների, առավելությունների ու թերությունների, առաջադիմական և հետադիմական բնույթի:

Իրավահասկացումը մեր կարծիքով, գիտակարգ է, որն արտացոլում է մարդկային բանականության նպատակաուղղված գործունեությունն՝ ուղղված իրավունքի ճանաչմանը և արժևորմանը:

Ինչպես նշում է ակադեմիկոս Վ.Ս. Ներսեսյանցը. «Իրավունքի հասկացությունը խտացված իրավաբանական տեսություն է, իսկ իրավաբանական տեսությունը՝ իրավունքի ծավալուն հասկացությունն է»⁷:

Այս կապակցությամբ, առաջին հերթին, պետք է ուշադրություն դարձնենք իրավահասկացման առաջարկվող այնպիսի հատկանիշի վրա, ինչպիսին է իրավունքի ճանաչումը:

Ճանաչման տակ իմացաբանության մեջ հասկացվում է գիտելիքներ ձևավորող ստեղծագործական գործունեություն⁸, մեր դեպքում՝ գիտելիք իրավունքի մասին: Ճանաչողական գործունեությունն իր մեջ ներառում է այնպիսի տարրեր (ճանաչման փուլեր), ինչպիսիք են զգացողությունը, ընկալումը, պատկերացումը և հասկացությունը: Այսպիսով, որպես էական հատկանիշ առաջարկվող ճանաչումը իրենով կլանում է մեկ այլ էական հատկանիշ՝ իրավունքի ընկալումը, քանի որ ճանաչումը հնարավոր է միայն

⁶ Տե՛ս Վաղարշյան Ա., Նշվ. աշխ., էջ 29:

⁷ Տե՛ս Ներսեսյան Վ.Ս., Նշվ. աշխ., էջ 30:

⁸ Տե՛ս Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ. Տրամաբանություն: Երևան, 2015, էջ 16:

ընկալման միջոցով: Այստեղից եզրահանգում, տվյալ բնորոշման վերաբերյալ իրավունքի ընկալումը նույնպես հանդիսանում է էական հատկանիշ իրավահասկացության բնորոշման մեջ:

Մեր կողմից բերված բնորոշման մեջ ընդգծվում է նաև իրավունքի արժևորումը՝ որպես արժեհամակարգ: Իրավունքն իր արժեքանական չափման մեջ ոչ թե գաղափարական, քաղաքական, բարոյական կամ կրոնական արժեքների կրող է, այլ հենց իրավական արժեքների՝ արդարության, ձևական հավասարության, ազատության, մարդասիրության խիստ որոշակի ձև է:

Իրավունքի ճանաչումը և արժևորումը իրենցից ներկայացնում են հենց տվյալ ֆենոմենի հանդեպ յուրատեսակ սուբյեկտիվ վերաբերմունք: Իրավունքը նշանակալից է միայն այնքանով, որքանով որ արժևորում է սոցիալական նշանակության ասպեկտով: Այս առումով գործող իրավունքի (պոզիտիվ իրավունքի) արժեքանական ասպեկտը արտահայտվում է պրակտիկայում գործող իրավական նորմերի մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ: Ընդ որում՝ իրավակիրառ և իրավակարգավորումների գործընթացում փոփոխվում, նորացվում և կոնկրետացվում են իրավական նորմերի արժեքային բովանդակությունը: Հարկ է նշել, որ իրավունքի առանձին ասպեկտների արժևորում կարող է դիտարկվել ճանաչողական գործունեության տարր, որը որոշ չափով բնորոշում է ամբողջապես ֆենոմենի մասին ձևավորվող պատկերացման առանձնահատկությունները:

Այսպիսով, իրավահասկացման վերլուծվող բնորոշման գործնականորեն բոլոր հատկանիշները տարրալուծվում են «ճանաչում» հասկացությամբ: «Ճանաչում» կատեգորիայի միջոցով իրավահասկացման բնորոշում է առաջարկում նաև Մ. Ի. Բայտինը, որը, մասնավորապես, արձանագրում է, որ իրավահասկացումը ոչ այլ ինչ է, քան «իրավունքի գիտական ճանաչում ե նրա բացատրում որպես հասարակական հոգևոր կյանքի յուրահատուկ, հարաբերականորեն ինքնուրույն, ամբողջական, համակարգային երևույթ»⁹:

Սակայն մյուս կատեգորիաների վերաբերյալ «ճանաչում» կատեգորիայի ավելի լայն բովանդակությունը դեռ չի նշանակում, որ ճանաչումը իրավահասկացման

⁹ Տե՛ս **Байтин М. И.** Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). М., 2008 . С. 17.

առանձնահատկությունը բացահայտող միակ կամ համարյա միակ հատկանիշն է: Շատ հաճախ իրավահասկացման տակ նկատի են ունենում իրավունքի ճանաչման կառուցվածքի առանձին տարրերը, իրավունքի և իրավական առանձին երևույթների ընկալումը, պատկերացումը իրավունքի մասին և իրավունքի հասկացությունը: ճանաչողական գործունեության հենց այս առանձին տարրերը (փուլերը) հաճախ են ենթադրվում «իրավահասկացում» կատեգորիան օգտագործելիս:

«Գիտելիք» հասկացության մեջ ամրագրվում է զգացմունքների, ընկալումների, պատկերացումների, հասկացությունների և մտածողության բոլոր ձևերի արդյունավետ (սուբյեկտիվ- իդեալական) կողմը:

Այս իմաստով առավել ճշգրիտ և հասկացությունների ձևակերպման տրամաբանությանը համապատասխանող ենք համարում սույն աշխատանքի հեղինակի մոտեցումը, համաձայն որի իրավահասկացումը դիտարկվում է որպես մարդու բանական-ստեղծագործական պրոցես և այդ պրոցեսի արդյունք հանդիսացող գիտակարգ, որը ներառում է իրավունքի ճանաչումը և արժևորումը սոցիալական նշանակության տեսանկյունից:

Տվյալ մոտեցման հիման վրա իրավահասկացումը առաջարկում ենք դիտարկել եռամիասնության իմաստով. առաջին՝ որպես իրավունքի գիտական ճանաչման, դրա էության, հիմնավորման, առաջատար սկզբունքների և հատկանիշների բացահայտման գործընթաց:

Երկրորդ, որպես բանական-ստեղծագործական արդյունք հանդիսացավ:

Երրորդ, որպես իրավունքի արժեքանության ճանաչում և գնահատում:

Այսպիսով, իրավահասկացումը լայն իմաստով կարող է դիտարկվել որպես բանական-մտային գործունեություն, ուղղված իրավունքի ճանաչմանը, ճանաչողական-իրավական գործունեության առանձին տարրերի (իրավական երևույթների ընկալում, պատկերացում իրավական երևույթների և ընդհանրապես իրավունքի մասին, իրավունքի հասկացություն), ինչպես նաև իրավունքի արժեքանության ճանաչման և գնահատման գիտակարգ:

Դիտարկվող ֆենոմենի այսպիսի բնորոշումը, մեր կարծիքով, նախ ներառում է իրավահասկացման ողջ բովանդակությունը, նրա էական բոլոր տարրերը, և, երկրորդ,

ենթադրում է հատկանիշների համակարգված շարադրում (տարրերի հաստատուն կապն է հանդիսանում դրանց ներմուծվածությունը իրավունքի ճանաչման գործընթացին):

Բառարանները տալիս են «իրավունք» բառի երեք հիմնական իմաստ: Առաջին, իրավունքը մեկնվում է որպես «պետության կողմից սահմանվող և պաշտպանվող նորմերի, վարքի կանոնների ամբողջականություն, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունները մարդկանց միջև և արտահայտում են իշխող դասակարգի կամքը: Երկրորդ, իրավունքը՝ «որևէ մեկին կամ ինչ-որ բանին տրված ազատությունն է, գործելու կամ որևէ բանից օգտվելու հնարավորություն, երաշխավորված պետական կամ այլ օրենքներով, որոշումներով և այլն»: Եվ, վերջապես, երրորդ, իրավունքը դիտվում է որպես «որևէ ձևով գործելու, վարվելու հնարավորություն»: Առօրեական և նույնիսկ իրավաբանական-մասնագիտական իրավահասկացման մակարդակների համար նման բնորոշումները կարող են բավարար լինել: Սակայն տեսական, գիտական իրավահասկացման համար նման մեկնումները չափազանց թերի են, ամենևին էլ ոչ անվիճելի, իսկ թվարկված բնորոշումներում բերված հատկանիշները անբավարար են անհրաժեշտ չափով «իրավունք» բառով նշվող ֆենոմենի էությունը բացահայտելու համար: Այսպիսով, բառարանային բնորոշումները չեն արտահայտում «իրավունք» ֆենոմենի գիտական հասկացությունը:

Իմացաբանության մեջ հասկացությունը դիտարկվում է որպես աշխարհի արտացոլման տեսակ, կապված լեզվի կիրառման հետ՝ որպես առարկաների և երևույթների ընդհանրացման առանձնահատուկ ձև: Այդպիսի ընդհանրացումը իրականացվում է ընդհանուր հատկանիշների առանձնացման և ոչ ընդհանուրների բացառման ճանապարհով: Հասկացության նշանակությունը մարդու համար, կայանում է հենց նրանում, որ այն «վերացարկվում է առարկայի պատահական, անհատական, արտաքին, ժամանակավոր հատկանիշներից և արտահայտում է էական, ներքին, մշտական կամ հարաբերորեն մշտական, նրա հետ անքակտելիորեն երևույթների ընդհանրացման սպեցիֆիկ ձև: Այդպիսի ընդհանրացումը իրականացվում է ընդհանուր հատկանիշների առանձնացման և ոչ ընդհանուրների բացառման

ճանապարհով: Հասկացության նշանակությունը մարդու համար, կայանում է հենց նրանում, որ այն վերացարկվում է առարկայի պատահական, անհատական, արտաքին, ժամանակավոր հատկանիշներից և արտահայտում է էական, ներքին, մշտական կամ հարաբերորեն մշտական, նրա հետ անքակտելիորեն կապված հատկությունները: Այս տեսակետից հասկացությունը իրենից ներկայացնում է առարկայի էական հատկանիշների մտովի միացում և արտացոլում է»: Այս բնորոշումը, անշուշտ, տարածվում է նաև իրավունքի հասկացության վրա, որը հանդիսանում է բազում այլ երևույթներից իրավունքի մտովի առանձնացում ըստ նրա որոշակի էական հատկանիշների:

Իրավունքի հասկացությունը կազմում է իրավահասկացման յուրատեսակ կորիզը, որի շուրջ խմբավորվում են իրավական գիտության մյուս բոլոր հասկացությունները և որի հիմքի վրա կառուցվում է դրա կատեգորիալ- հասկացողական ապարատը: Իրավաբանական գրականության մեջ «իրավահասկացում» տերմինով, ըստ էության նշում են ոչ միայն իրավունքի բուն հասկացությունը, առավել ևս դրա բնորոշումը: Այն իր մեջ ներառում է մի ամբողջ շարք ընդհանուր-տեսական իրավական այլ կատեգորիաներ ու հասկացություններ, որոնք ընդգրկում են իրավական երևույթների ողջ համակարգը, ինչպես նաև իրավունքի և սոցիալական այլ երևույթների կապերն ու միջնորդացումները արտահայտող փիլիսոփայական ու սոցիալական այլ կատեգորիաներ: Սակայն այսպես թե այնպես իրավահասկացման որոնումները անխուսափելիորեն վերաբերվում են իրավունքի՝ որպես առանձնահատուկ միասնական երևույթի հասկացությանը և բնորոշմանը¹⁰:

Գիտական տարբեր տեսությունների շրջանակներում փոխկապակցված տարրերի ընդհանուր հիմքի առանձնացման եղանակով ձևակերպվում են իրավունքի սեփական հասկացություններ, որոնց հիմքում ընկած է ընդհանրացնող գաղափարներ: Այդուհանդերձ տեսանելի է նաև որոշակի միտում՝ կատեգորիալ- հասկացողական միասնական ապարատի մշակման ուղղությամբ: Դա վերաբերվում է և բուն իրավունքի հասկացությանը, որը, ինչպես շատ ճիշտ նկատում է Մ.Ն. Մարչենկոն, կազմում է

¹⁰ Ст'ю Современное правопонимание. Под. ред. М.Н. Марченко. М., 2016.

իրավաբանական գիտության կենտրոնական հարցերից մեկը¹¹: Բացի այդ, հարկ է նշել, որ իրավունքի հասկացությունը, իրավական այլ հասկացությունների և կատեգորիաների հետ մեկտեղ, հանդես է գալիս որպես ողջ իրավական համակարգի և իրավական մշակույթի վերաբերյալ հայացքների ձևավորում և դրանց գնահատում:

Համընդհանուր ճանաչում գտած հասկացության մշակման գործում էական խոչընդոտ է հանդիսանում այն, որ տարբեր հայացքների կողմնակիցները իրավունքը դիտարկում են տարբեր տեսանկյուններից: Դրանց բնորոշումներում հաճախակի փորձեր են կատարվում բացահայտել ֆենոմենի որոշակի կողմերը (դրսևորումները), ընդ որում ամեն մեկը ջանում է պաշտպանել իր տեսակետը, բանավեճի բռնվելով ընդդիմախոսների հետ:

Շատ հաճախ բանավեճը ծավալվում է իրավունքի բուն բնորոշման շուրջ, դրա մեջ այս կամ այն հատկանիշը մտցնելու, հատկանիշներից մեկի գերակայության, վերջիններիս հիերարխիայի և այլ հարցերի վերաբերյալ: Երբեմն նման բանավեճը չունի սկզբունքային ոչ մի հենք, քանի որ տվյալ կողմերը, ըստ էության, ելնում են իրավունքի միևնույն հասկացությունից և խոսում են փաստորեն հիմնականում միևնույն կերպ հասկացվող ֆենոմենի տարբեր դրսևորումների մասին: Այս կապակցությամբ գիտական իրավահասկացման համատեքստում կարևոր է «իրավունքի հասկացություն» և «իրավունքի բնորոշում» կատեգորիաների հարաբերակցության առումը:

Հարկ է նշել, որ իրավաբանական գիտության մեջ կարելի է առանձնացնել երկու հակադարձ մոտեցումներ նշված կատեգորիաների հարաբերակցության վերաբերյալ: Այսպես, գիտնականների մի մասը միակարծիք են իրավունքի միասնական հասկացության անհրաժեշտության հարցում, դրա հետ մեկտեղ, սակայն, ընդունելով դրա տարբեր բնորոշումների հնարավորությունն ու նույնիսկ անհրաժեշտությունը: Այսպես, օրինակ, Ս.Ս. Ալեքսևը նշում է, որ «քննարկվող հիմնահարցում կարևորություն են ներկայացնում հետևյալ հարցերը՝ իրավունքի հասկացության և իրավունքի վերաբերյալ գոյություն ունեցող բնորոշման կատարելագործման մասին: Բավականին հաճախ մեր աշխատություններում թույլ ենք տալիս այս փոխկապակցված, բայց

¹¹ См'у **М.Н. Марченко** Тенденции развития права в современном мире. М., 2015, с. 4-5.

միննույն ժամանակ տարբեր հարցերի շփոթում: Կարծում ենք, որ իրավունքի հասկացությունը պիտի լինի միակ, իսկ հասկացության սահմանումները՝ մի քանի»¹²:

Համանման կարծիքի է նաև, օրինակ, Վ. Ա. Տումանովը: Նա նշում է, որ «գործնական-կիրառական նպատակներով իրավաբանական գիտությունը միշտ էլ ձգտել է իրավունքի նորմերում պարունակվող հասկացությունների և կատեգորիաների բնորոշումների միանշանակության: Սակայն չի կարելի իրավունքի նորմի միատեսակ կիրառման նպատակ հետապնդող գործնական-կիրառական մոտեցմանը ենթարկել իրավագիտության՝ որպես հասարակական, աշխարհահայեցողական գիտության տեսական-ճանաչողական գործունեությունը»¹³: Մեկ այլ դիրքորոշում է զբաղեցնում, օրինակ, Ա. Ա. Վասիլյևը: «Իրավունքի մասին մեր գիտելիքների առաջընթացի տրամաբանությունն այնպիսին է,- գրում է գիտնականը,- որ ճանաչման ընթացքում իրավունքի առումներից մեկը դուրս է գալիս առաջին պլան: Սակայն դա չի նշանակում իրավունքի հասկացությունը ներկայացված է միայն այս առումով: Իրավունքի կոնկրետ հասկացության մեջ պետք է հավասարակշռված լինեն բոլոր կողմերը, բոլոր իրավադրսևորումները, բոլոր կապերը: Ընդհանրացված տեսքով տվյալ հասկացությունը արտահայտվում է իրավունքի ընդհանուր տեսությամբ:

Իրավունքի հասկացությունը իրենից ներկայացնում է արստրակտ բնորոշումների մի ամբողջ շարքի միասնականություն, որոնք մշակվում են դրա բոլոր կողմերի և դրսևորումների ուսումնասիրման արդյունքում: Հետևաբար իրավունքի տարբեր բնորոշումները ոչ միայն հնարավոր են, այլև անհրաժեշտ, և իրավունքի հասկացությունը անհնար է հանգեցնել դրանցից որևէ մեկին: Իրավունքը հատվածաբար բնորոշող բնորոշումների հետ մեկտեղ գիտությունն ու պրակտիկան պահանջում են իրավունք հասկացության ընդհանուր բնորոշում... Իրավունքի ընդհանուր բնորոշումը կարծում ենք, չի կարող տրվել միմիայն «մաքուր» գիտության դիրքերից: Այն պետք է լինի պրակտիկ՝ այս բառի խոր իմաստով, պետք է լինի նաև «աշխատող» ողջ իրավաբանական գիտության, նրա յուրաքանչյուր ճյուղի և իրավունքի հանդեպ հասարակության անդամների գիտակցված վերաբերմունքը ձևավորող

¹² **Алексеев С.С.** Общая теория права. М., 2008, с. 48-49.

¹³ **Туманов В.А.** Избранное.... М., 2013, с. 413-414.

իրավաբանական պրակտիկայի պահանջմունքները բավարարող»¹⁴:

Մեր կարծիքով, անշուշտ, հարկ է համաձայնվել այն բանի հետ, որ «գիտությունն ու պրակտիկան ծարավ են իրավունքի հասկացության ընդհանուր բնորոշման»: Սակայն, դրա հետ մեկտեղ, որոշակի կասկածներ է հարուցում իրավունքի տարբեր բնորոշումների անհրաժեշտությունը, այն էլ իրավունքը «հատվածաբար որոշումները: Համարում ենք, որ իրավաճանաչման գործընթացը հենց «մաքրագերծում» է հատվածային բնորոշումներից, յուրատեսակ առաջընթաց շարժում դեպի պրակտիկ, աշխատող ընդհանուր հասկացություն, որը կբավարարի իրավական գիտության, նրա յուրաքանչյուր ճյուղի և իրավունքի հանդեպ հասարակության անդամների գիտակցված վերաբերմունքը ձևավորող իրավաբանական պրակտիկայի պահանջմունքները: Այդ իսկ պատճառով ավելի ճիշտ ենք համարում Ա. Վ. Միցկևիչի տեսակետը, որի կարծիքով, իրավաբանական գիտությունը պահանջում է ոչ միայն իրավունքի ընդհանուր հասկացություն, այլև իրավունքի ընդհանուր բնորոշում: Նա մասնավորապես նշում է, որ իրավունքի տարբեր կողմերի արստրակտ բնորոշումները պատկերացում չեն տալիս դրա՝ որպես միասնական ամբողջի, հատուկ երևույթի կամ երևույթների համակարգի հասկացության մասին: Վերջին հաշվով իրավունքի բազմապիսուությունը կարող է ամբողջապես արտահայտվել միայն «բազում բնորոշումների, հետևաբար՝ բազմապիսության ամբողջականության սինթեզի միջոցով»¹⁵: Նման սինթեզը հասանելի է միայն ընդհանրապես իրավունքի զարգացման շնորհիվ և դրսևորվում է նրա կատեգորիաների համակարգում: Սակայն իրավունքի, որպես սոցիալական առանձնահատուկ երևույթի, գոյությունը կարող է և պետք է արձանագրվի կոնկրետ կենդանի ամբողջ արտահայտող հասկացության մեջ: Առանց դրա հետագա ուսումնասիրությունը կարող է շեղվել ճշմարտությունից, գիտության կողմից էմպիրիկ կողմից այդ երևույթի հատկանիշներից: Դրա հետևանքով էլ առաջանում է իրավունքի միասնական հասկացության անհրաժեշտություն՝ հասկացության, տրամաբանորեն ամրագրված նրա ընդհանուր բնորոշման մեջ, ինչը թույլ կտա նույնացնել ճանաչվող նոր երևույթները իրավունքի հետ և սահմանազատել իրավունքը դրա հատկանիշները չպարունակող երևույթներից:

¹⁴ Տե՛ս **Васильев А.А.** Правовые категории. М., 1986, с. 27-28.

¹⁵ Տե՛ս **Мицкевич А. В.** Источники права. М., 1988, с. 31.

Մեր կարծիքով, խոսքն իսկապես պիտի գնա ոչ թե միայն «իրավունք» ֆենոմենի ընդհանուր գիտական հասկացության, այլև հենց բուն ընդհանուր բնորոշման մասին: Հասկացությունը իրենից ներկայացնում է միտք, որը ընդհանրացված ձևով առանձնահատուկ և ընդհանուր հատկանիշների արձանագրման եղանակով արտացոլում է իրականության երևույթները և կապերը դրանց միջև, ընդ որում որպես այդպիսիք հանդես են գալիս երևույթների հատկությունները և դրանց միջև գոյություն ունեցող կապերը¹⁶: Իսկ բնորոշման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն հանդես է գալիս որպես «գործիք միջնորդայնացված, դիսկուրսիվ, լեզվի օգնությամբ իրականացվող ճանաչման համար»¹⁷: Այդ իսկ պատճառով գիտականորեն հիմնավորված բնորոշումը պետք է իրենից ներկայացնի մի կողմից, ճանաչողական գործունեության որոշակի արդյունք, իսկ մյուս կողմից որոշակի ելակետ է դառնում այլ երևույթների ճանաչման և նոր հասկացությունների ու բնորոշումների գիտական հիմնավորման համար:

Այս առումով, իրավունքի բնորոշման ձևակերպման հետ կապված հարցի լուծումը մեծ նշանակություն ունի իրավական երևույթների հետագա հետազոտման, իրավունքի զարգացման հեռանկարների ու օրինաչափությունների բացահայտման, ինչպես նաև ընդհանրապես համապատասխան իրավական տեսության զարգացման համար: «Ինչպես սերմի մեջ տրված է ապագա որոշակի բույսը, - շատ ճիշտ նկատում է այս կապակցությամբ Վ. Ա. Ներսեսյանցը, - այնպես էլ իրավունքի հասկացության մեջ տեսական-վերացական ձևով պարունակվում են որոշակի իրավական տեսություն, և իրավունքի մասին ուսմունքի հայեցակարգի (և տիպի) տեսական- իրավական իմաստը և բովանդակությունը»¹⁸: Մեր կարծիքով, միայն իրավունքի մասին համակարգված ամբողջական ուսմունքն է ի զորու տալ իրավունքի հասկացության բովանդակության և իմաստի բացահայտումը:

Հարկ է նշել, որ, մեր կարծիքով, նման ընդհանուր բնորոշումը կարող է մշակվել միայն պետության և իրավունքի տեսության՝ որպես բազային մեթոդաբանական գիտության շրջանակներում: Նշված առանձնահատկության պատճառով հենց

¹⁶ Ст'у Философский энциклопедический словарь. М., 2014, С. 513.

¹⁷ Ст'у Теория познания. М., 2013, С. 14-15.

¹⁸ **Нерсесянц В.С.** Общая теория права и государства. М., 2015, с. 69.

իրավունքի ու պետության տեսության կարևորագույն խնդիրն է ձևակերպել այնպիսի բնորոշում, որը կհամապատասխանի ողջ իրավական գիտության, նրա յուրաքանչյուր ճյուղի և իրավաբանական պրակտիկայի պահանջմունքներին, ինչպես նաև կնպաստի իրավունքի հանդեպ մարդկանց գիտակցված վերաբերմունքին:

Դրա հետ մեկտեղ տեսական նման բնորոշումը հազիվ թե կարողանա պատասխանել պրակտիկայի պահանջներին իր իսկ բարդության պատճառով:

Հետևաբար այն, ըստ երևույթին, պետք է ներառի ինքնուրույն պրակտիկ նշանակություն ունեցող բաղադրամասեր: Դա թույլ կտա տեսական բարդ կառուցվածքից առանձնացնել ավելի պարզ մասերը, այսինքն, իրավունքի բնորոշումներ, որոնք անմիջական նշանակություն ունեն իրավաբանական գործունեության համապատասխան տեսակի համար: Դրանք պետք է լինեն հանրամատչելի որոնց, մի կողմից կարող են հղումներ անել իրավաստեղծ և իրավակիրառ սուբյեկտները, անմիջական իրավահրագործման սուբյեկտները, իսկ մյուս կողմից՝ այդ սահմանումները, որոնք բնորոշում են իրավունքի ֆենոմենի համապատասխան առումները, չպետք է հակասեն ընդհանուր-տեսական, գիտական բնորոշմանը, այլ պետք է կազմեն իրավական ֆենոմենի կողմերից մեկը արտացոլող մասը:

1.2 Իրավունքը սոցիալական կյանքի նորմատիվ կարգավորիչների համակարգում

Սոցիալական կարգավորումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում մարդկանց վարքագծի կանոնակարգումն է, սոցիալական կարգը կանխորոշող գործընթացը: Կոնկրետ սոցիալական կարգը որոշակիացվում է տարաբնույթ տարրերի գործադրման արդյունքում, որոնց դերում հանդես են գալիս սոցիալական նորմերը, որոնք հանդիսանում են սոցիալական հանրույթի մասնակիցների վարքագծի կանոններ՝ սովորույթներ, ավանդույթներ, ծիսակատարություններ և այլն¹⁹:

Ընդհանրապես, մարդկային հասարակությանը բնորոշ է սոցիալական իշխանություն և հասարակական նորմերի համակարգ: Սոցիալական նորմերի

¹⁹ Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան: Երևան, 2014, էջ 319:

համակարգը (սովորույթներ, ավանդույթներ, բարոյական նորմեր, կրոնական կանոններ և այլն) ձևավորվում են հասարակության կազմավորմանը զուգընթաց: Հասարակական նորմերը, հասարակության անդամների հարաբերությունները հասարակական կյանքը կարգավորող նմուշային վարքագծի կանոններ են: Ե՛վ սոցիալական իշխանությունը, և՛ հասարակական նորմերը մարդկային հասարակության անհրաժեշտ տարրերն են: Սոցիալական նորմը ապագային ուղղված պատշաճ կանոն է: Ի տարբերություն անհատական հրամանների, կոնկրետ հարցով կարգադրությունների սոցիալական նորմը հասցեագրված է ոչ թե առանձին անձի, այլ անձանց անորոշ շրջանակի: Սոցիալական նորմի գործողությունը չի սահմանափակվում մեկանգամյա կենսագործմամբ, այլ նախատեսված է անսահմանափակ դեպքերի համար: Այն նախատեսում է կոնկրետ փոխհարաբերություններում մարդկանց հնարավոր կամ անհրաժեշտ վարքագծի սահմանները:

Հասարակական կյանքում սոցիալական կարգավորիչները (իրավունքը, բարոյականությունը, սովորույթը և այլն) կատարում են կարևոր և նշանակալի գործառույթներ²⁰: Դրանցից առաջնային է կարգավորիչ առաքելությունը: Սոցիալական կարգավորիչները, դրսևորվելով սոցիալական նորմերի տեսքով, կարգավորում են հասարակության, նրա անդամների ու կազմակերպությունների փոխգործակցությունը և դրանով իսկ երաշխավորում են հասարակության կայուն գոյատևումը, հասարակական հարաբերությունների կարգավորված կացությունը:

Հասարակական հարաբերությունների կարգավորման և կազմակերպման համար կարևոր միջոց են սոցիալական նորմերը՝ իրավական նորմեր, բարոյական նորմեր, կրոնական նորմեր, սովորույթներ, ավանդույթներ: Սոցիալական նորմերը մարդկանց վարքագծի և կազմակերպությունների գործունեության կարգավորման կանոններ են: Սոցիալական նորմերն անհրաժեշտ են հիմնականում մարդկանց խաղաղ

²⁰ Ինչպես իրավունքը, այնպես էլ հասարակական հարաբերությունների սոցիալական այլ կարգավորիչները, բացի կարգավորիչ գործառույթից, կատարում են նաև գնահատողական գործառույթ (օրինակ բարոյական նորմերը չափանիշ են այս կամ այն գործողությունները գնահատելու, արժեքավորելու համար, վեր հանելու համար բարոյականը և անբարոյականը), ինչպես նաև փոխանցող, դաստիարակող և այլ գործառույթներ:

փոխհամակեցության և համագործակցության պահպանման համար²¹: Սահմանափակելով ամեն առանձին մարդու անչափավոր պահանջները՝ նրանք թույլ են տալիս հաստատել հասարակական կարգուկանոն, պաշտպանել թույլին ուժեղի ճնշումից և սովորեցնել մարդկանց գործել մտածված և հաշվեկշռված ձևով: Ենթարկվելով այդ կանոններին՝ մարդիկ աստիճանաբար սովորում են չոտնակոխել մյուսների շահերը, այլ համակերպվել իրեն նմանների իրավունքների ու բարիքի հետ և իր վարքը համաձայնեցնել մարդկային համակեցության հիմնական խնդիրների հետ: Այդ կանոնները դաստիարակում են մարդուն սանձահարել իր կրքերն ու նկրտումները, սովորեցնում են ապրել մյուս մարդկանց հետ համատեղ:

Սոցիալական կարգավորիչները (նորմերը) մարդկանց կամքի ու գիտակցության հետ կապված, նրանց սոցիալական փոխգործակցության ձևերը կարգավորող ընդհանուր կանոններ են, որոնք ծագել են հասարակության պատմական գոյության և զարգացման գործընթացում, համապատասխանում են տվյալ հասարակության մշակույթի տիպին ու կազմակերպման բնութագրին²²:

Յուրաքանչյուր հասարակությունում գործող սոցիալական նորմերն ունեն իրենց առանձնահատկությունները, բնորոշ գծերը, որոնք պայմանավորված են տվյալ հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական, բարոյական, կրոնական, ազգային, հոգեբանական և այլ գործոններով: Այնուհանդերձ, սոցիալական նորմերն օժտված են հետևյալ ընդհանուր հատկանիշներով:

1. Սոցիալական նորմերը կարգավորվում են հարաբերությունները մարդկանց միջև: Հենց դա է տարբերում նրանց ոչ սոցիալական նորմերից (տեխնիկական, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, քիմիական, կենսաբանական և այլն), որոնք կարգավորում են մարդու վերաբերմունքը բնական, նյութական օբյեկտների նկատմամբ: Այսպես, օրինակ, նախնադարյան մարդիկ, իմանալով, որ ջերմաստիճանը գիշերը նվազում է, ջանում էին կրակը վառ պահել նաև գիշերը: Նրանք դա անում էին ղեկավարվելով ոչ սոցիալական նորմերով, մասնավորապես՝ ֆիզիոլոգիական նորմով, որը հրահանգում է կյանքն ու առողջությունը պահպանելու համար հետևել մարդկային օրգանիզմին միջավայրի անփոփոխությանը: Սակայն այն, թե ցեղակիցներից ով է

²¹ Տե՛ս **Шлёкин С.И.** Проблемы права: философско-методологический аспект. М., 2013, с. 162-163.

²² Վաղարշյան Ա. Պետության և իրավունքի տեսություն – 2: Դասախոսություն: Երևան, 2012, էջ 68:

հետևելու խարույկին, որոշվում էր արդեն սոցիալական նորմի հիման վրա:

2. Սոցիալական նորմերը կարգավորում են կրկնվող (տարածված, զանգվածային կամ տիպիկ) իրավիճակները և ամենևին ոչ նրանք, որոնք հազվադեպ էին պատահում կամ նոր էին ու ոչ սովորական: Վերը բերված օրինակը հենց տեղավորվում է տիպիկ իրավիճակի շրջանակներում (ջերմաստիճանի անկումը գիշերը նույնքան անխուսափելի է, որքան ցերեկվա և գիշերվա հաջորդականությունը, և գիշերվա ընթացքում կրակը պահպանելու անհրաժեշտությունը ծագում է ամեն օր):

3. Սոցիալական նորմերը նախատեսված են միանգամից բազում մարդկանց համար, ընդ որում՝ ոչ կոնկրետ և անձնապես որոշված, քանզի ի սկզբանե դժվար է որոշել, ով կամ քանի մարդ պետք է հետևի այդ սոցիալական նորմին: Եթե դիտենք այդ դրությունը վերը բերված օրինակի վրա, ապա կարող ենք ենթադրել, որ նախնադարյան մարդիկ կռահեցին կամ կոնկրետ օրինակներով համոզվեցին, որ միևնույն մարդն ամեն գիշեր կրակին հետևել չի կարող, որ քրոնիկական անքնության պատճառով վտանգ կառաջանա ընդհանրապես կորցնել կրակը: Ամենայն հավանականությամբ այդ պարտավորությունը չի կարելի դնել նաև երեխաների վրա: Ուրեմն, ով և ինչ հերթականությամբ է այն կատարելու: Հենց այդ կապակցությամբ ստեղծվում է հատուկ կանոն՝ սոցիալական նորմ: Ենթադրենք, որոշվում է, որ տոհմի երիտասարդ տղամարդիկ պետք է հերթով հետևեն գիշերային կրակին: Սակայն տոհմի կյանքը չի վերջանում մեկ օրով և նույնիսկ տարով՝ կատարվում է բնականոն սերնդափոխություն: Ուրեմն նշված նորմը կատարելու են մահացածներին կամ տարեցների շարքն անցածներին փոխարինելու եկած նոր երիտասարդները:

4. Սոցիալական նորմերը ստեղծվում են բանական արարածների կողմից, որոնք, որպես կանոն, կարող են կանխատեսել նրա կատարման հետ կապված հետևանքները: Նույն ավագանին սահմանելով, որ գիշերային կրակին պետք է հետևեն երիտասարդները, խելացի է վարվում՝ այդ պարտականությունից ազատելով ոչ միայն երեխաներին, այլև կանանց: Ոչ մեկի կողմից չհաստատված սոցիալական նորմը անհեթեթ և անկարելի բան է:

5. Սոցիալական նորմերը վարվելակերպի կանոններ են, որոնք ունեն որոշակի ձև: Պարտադիր չէ, որ վարվելակերպի կանոնը ձևակերպված լինի բառերով:

Ամենաառաջին հայտնված սոցիալական նորմերը կարող էին պաճուճված լինել գործողությունների ձևով: Իհարկե, հետագայում, երբ հայտնվում է խոսքը, սոցիալական նորմերը սկսում են ձևակերպվել գերազանցապես բառերով, սակայն դա էլ պատահում է ոչ ամեն դեպքում և ոչ միանգամից: Այնուհանդերձ, վարքաձևի ձևակերպման բառային ձևը՝ հասարակության զարգացմանը համընթաց, օգտագործվում է ավելի ու ավելի շատ: Զարգացած հասարակության մեջ, որը կազմակերպվում է արդեն պետության միջոցով, սկսում են կիրառել նրանց նաև գրավոր ձևը²³:

6. Ամեն սոցիալական նորմ ունի սանկցիա: Սանկցիա է կոչվում առաջիկա անբարենպաստ հետևանքը, որը վրա է հասնում նորմը խախտողի համար: Դա յուրահատուկ սպառնացող մատ է՝ կախված նրա գլխավերևում, ով կհանդգնի հակառակ գնալ սոցիալական նորմին: Սանկցիան է, որ ապահովում է ցանկացած սոցիալական նորմի պարտադիրությունը: Մեր բերված օրինակում նրան, ում պատճառով տոհմը կորցրել է կրակը և ստիպված է եղել կրել դրա հետ կապված դժվարությունները, շատ հնարավոր է, սպառնացել է վտարումը:

7. Սոցիալական նորմերը պարտադիր բնույթի կանոններ են: Սոցիալական նորմերի գործողությունը տարածվում է բոլոր անձանց վրա, ում դրանք հասցեագրված են: Անկախ այդ անձանց սուբյեկտիվ վերաբերմունքից, նորմերը պետք է կատարվեն: Սոցիալական նորմերի ամեն մի տեսակ ունի կենսագործման պարտադիրության ապահովման երաշխիքներ, օրինակ՝ հասարակական կարծիքը, սովորության ուժը և այլն:

Բազմաբնույթ սոցիալական կարգավորիչները կարելի է դասակարգել տարբեր չափանիշներով: Մեզ հետաքրքրող հիմնախնդիրների համատեքստում ճանաչողական և գործնական նշանակություն ունի սոցիալական կարգավորիչների դասակարգումը կարգավորիչ ընդունակության կամ կառուցակարգի հիման վրա: Նման դասակարգման համար հիմք են ծառայում հետևյալ չափանիշները՝ նորմերի ձևավորման գործընթացը, նորմերի ամրագրման (գոյության) ձևերը, նորմերի կարգավորիչ ազդեցության բնույթը, նորմերի ապահովման եղանակներն ու

²³ Մանրամասն տե՛ս **Скурко Е.В.** Очерки теории права. М., 2013, с. 71-72.

մեթոդները²⁴: Ըստ այդ չափանիշների ընդունված է առանձնացնել սոցիալական կարգավորիչների հետևյալ տեսակները՝

- 1) իրավունքի նորմեր
- 2) բարոյական (ներառյալ էթիկայի) նորմեր,
- 3) սովորութային նորմեր,
- 4) կրոնական կանոններ,
- 5) կորպորատիվ կամ կազմակերպությունների նորմեր և այլն:

Հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր սոցիալական բարոյական, կրոնական, քաղաքական, սովորութային և այլն), այդ թվում իրավական նորմերն ունեն մի շարք ընդհանրություններ: Իրավունքը և այլ սոցիալական նորմերն ըստ էության վարքագծի կանոններ են, որոնք կարգավորում են մարդկանց և կազմակերպությունների առօրյա փոխհարաբերությունները: Դրանց գործունեության, ներազդման շրջանակները խիստ լայն են: Հասցեագրված են ոչ թե անհատ անձանց, այլ անձանց որոշակի շրջանակի և գործում են անսահմանափակ դեպքերի համար: Նորմերը մարդկանց և կազմակերպությունների փոխհարաբերությունների կարգավորիչ են և նախատեսում են հնարավոր կամ անհրաժեշտ վարքագծի սահմանները:

Բոլոր սոցիալական նորմերը մարդկանց վարքագծի կանոններ են, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսին պետք է լինեն կամ կարող են լինել մարդկային արարքները, գործողությունները, որոնց համապատասխանեցնում են մարդիկ իրենց վարքագիծը: Բոլոր սոցիալական նորմերի առանձնահատկությունն այն է, որ դրանք, ի տարբերություն անհատական կանոնների, ընդհանուր բնույթի վարքագծի կանոններ են: Ընդհանուր բնույթը հասարակության մեջ այն է, որ պահանջները վերաբերում են ոչ թե որևէ անհատի, այլ հասարակությանը, և դրանք պետք է կատարեն յուրաքանչյուրը: Վերջապես, սոցիալական նորմերը հասարակության մեջ մարդկանց վարքի պարտադիր կանոններ են և պահանջների կատարումը պարտադիր է բոլոր նրանց համար, ում դրանք վերաբերում են: Սոցիալական նորմերի պարտադիրությունը անհրաժեշտության դեպքում կարող է ապահովվել ոչ միայն հասարակական կարծիքի

²⁴ Ст'ю Байтин М.И. Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Изд. 2-е, доп. М., 2005, с. 64-65.

ուժով, այլև հարկադրանքով: Պահանջները խախտող անձը, կախված խախտման հասարակական վտանգավորության բնույթից, կարող է ենթարկվել պետական կամ հասարակական ներգործության: Այս առանձնահատկությունների ուժով էլ սոցիալական նորմերը հանդես են գալիս որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ և ակտիվորեն գործում են մարդկանց և պետությունների վարքագծի վրա և որոշում են նրանց գործելակերպի ուղղությունները²⁵:

Իրավական նորմերը որպես սոցիալական նորմերի տարատեսակ օբյեկտիվորեն օժտված են մի շարք յուրահատկություններով, որոնք թույլ են տալիս իրավունքի նորմերը տարբերել ոչ իրավական սոցիալական նորմերից: Իրավունքը հասարակական հարաբերությունների համապարփակ նորմատիվ իրավական կարգավորիչն է: Իրավունքի նորմերը վարքագծի համապարտադիր նորմատիվ կանոններ են, որոնք սահմանում կամ սանկցիավորում է պետության իրավասու մարմինը: Բացի դրանից, իրավունքը, ի տարբերություն սոցիալական մյուս նորմերի (բարոյական, սովորույթ, ավանդույթ, կրոնական նորմեր), վարքագծի համապարտադիր կանոն է և նրա կիրառումը հասարակական կյանքում ապահովվում է պետության հարկադրանքի ուժով: Մինչդեռ մյուս սոցիալական նորմերի կիրառումը կյանքում ապահովվում է բացառապես ներքին համոզման, հասարակական կարծիքի, ազգային սովորույթի և ավանդույթի, կրոնական համոզմունքի, կամային-գիտակցական գործունեության միջոցով: Այդպիսով իրավունքի նորմերի պահանջների կատարումը պարտադիր է, իսկ դրանց իրացումն ապահովվում է պետական հարկադրանքի ուժով:

Այսպիսով, կարելի է արձանագրել իրավական նորմերի բնութագրական, տարբերիչ հատկանիշները.

1) իրավունքի նորմերը սահմանվում կամ սանկցիավորվում են պետության իրավասու մարմնի կողմից,

2) իրավունքի նորմերը կրում են օժտող-պարտադրող բնույթ: Դրանք իրավունքի սուբյեկտներին ընձեռում են իրավունքներ կամ նրանց վրա դնում են պարտականություններ,

²⁵ См'и Общая теория государства и права. Академический курс. В трех томах. Под. ред. **М.Н. Марченко**. Том 2. Право. М., 2011, с. 108-109.

3) իրավական նորմերի կենսագործումն անհրաժեշտ դեպքում ապահովվում է պետական հարկադրանքի միջոցով,

4) իրավունքի նորմերը համարվում են վարքագծի համապարտադիր-նորմատիվ կանոններ,

5) իրավունքի նորմերին բնութագրական է պաշտոնապես ամրագրված ձևը և որոշակիությունը:

Սոցիալական նորմերի գլխավոր նպատակը մարդկանց, նրանց միավորումների միջև հասարակական կապերի կանոնակարգումն է, որպես սոցիալական նորմերի գլխավոր գործառույթ: Այս գործառույթի նպատակը հասարակության սոցիալական կազմակերպումն ու կայունացումն է, ինչպես նաև վերջինիս գոյության և զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է: Բացի հասարակական կապերի կանոնակարգման գործառույթից, պակաս կարևոր չէ սոցիալական նորմերի գնահատողական գործառույթը, որի էությունն արտահայտվում է նրանում, որ սոցիալական նորմերը հասարակական պրակտիկայում հանդես են գալիս վարքագծի տեսակի նկատմամբ որոշակի վերաբերմունքի ձևավորման և գնահատման չափանիշներ (բարոյական, անբարոյական, իրավաչափ - ոչ իրավաչափ և այլն)²⁶: Առանձին հեղինակներ առանձնացնում են նաև սոցիալական նորմերի, այսպես կոչված, համակարգող և փոխանցող (տրանսլացիոն) գործառույթը, որի դեպքում սոցիալական նորմերում կենտրոնացված են հասարակական կյանքի կազմակերպման մարդկության ձեռքբերումները, որոնք փոխանցվում են սերունդներին²⁷:

Իրավական կարգավորումն իրականացնում է պետությունը՝ իրավունքի նորմեր սահմանելով: Իսնդիրն այն է, որ մարդը գոյություն ունի և ապրում է այլ մարդկանց հետ համատեղ, հասարակության մեջ: Համատեղ կյանքի ընթացքում մարդկանց շահերը բախվում են: Երբեմն էլ պետությունն է բռնանում մարդու հանդեպ: Այդ ամենի արդյունքում մարդը շատ հաճախ դժվարանում է կամ չի կարողանում իրականացնել իր հնարավորությունները: Նշանակում է մարդու ազատության, իրավահավասարության ապահովման համար կամ խախտված իրավունքները

²⁶ Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. ծմբ. **Ա.Ղամբարյան, Մ. Մուրադյան**: Երևան, 2014, էջ 321:

²⁷ Теория государства и права. Учебник для юридических вузов и факультетов, Под. ред. проф. **С.С. Алексеева**. 3-е издание. М.: 1998, с. 322.

վերականգնելու համար անհրաժեշտ են երաշխիքներ և օգնություն պետության և հասարակության կողմից: Այդպիսի հիմնարար և կարևոր երաշխիքը համապարտադիր և համահավասար իրավունքի նորմերի միջոցով իրավական կարգավորումն է: Իրավունքի նորմերն ընդունում է պետությունը և դրանք կոչված են հաստատելու անահատների իրավունքների հավասարություն, կարգուկանոն, պաշտպանելու մարդկանց ազատությունը, անվտանգությունը, իրավունքները, պայմաններ ստեղծելու քաղաքացիների ներդաշնակ համակեցության համար:

Պետությունը, բացի իրավունքի նորմեր սահմանելուց, հետևում է, որ դրանք կենսագործվեն: Իրավական կարգավորումը կատարվում է նախ իրավունքի նորմեր սահմանելու, իսկ այնուհետև այդ նորմերը կենսագործելու միջոցով: Օրինակ, ոստիկանությունը պաշտպանում է յուրաքանչյուր քաղաքացու կյանքն ու ունեցվածքը: Իրավական ամրագրման շնորհիվ վարքագծի կանոնները ձեռք են բերում հստակ, բոլորի համար պարտադիր կանոնի ուժ: Միաժամանակ՝ իրավունքի նորմերը սահմանում են պատասխանատվություն նորմերի խախտման համար: Պատասխանատվության կիրառման սպառնալիքը ստիպում է մարդկանց հարգել և կատարել իրավունքի նորմերը: Դրանով իսկ վարքագծի գիտակցված և նմուշային կանոնները բարի ցանկություններից վերածվում են պետության կողմից երաշխավորված իրականության:

Այսպիսով, հասարակական հարաբերությունների բոլոր սուբյեկտների կամ մասնակիցների համար սահմանելով համընդհանուր և հավասար վարքագծի չափ, որոշելով արգելված, թույլատրելի և ցանկալի վարքագծի սահմանները, իրավունքը կենսագործման միջոցով որոշակի կարգուկանոն է հաստատում հասարակության մեջ:

«Իրավունք» եզրույթը, բառը բազմիմաստ է: Ժամանակակից հայոց լեզվում այն գործածվում է մեկ տասնյակից ավել իմաստներով: Իրավագիտությունը ևս «իրավունք» եզրույթը օգտագործում է մի քանի իմաստներով²⁸: «Իրավունք» եզրույթի բազմիմաստությունը պայմանավորված է մի շարք պատճառներով: Առաջին հերթին դա լեզվի զարգացման օրինաչափությունների հետևանք է, երբ տարբեր երևույթներն ու իրերը ժամանակի ընթացքում ձեռք են բերում միևնույն բառային ձևը և

²⁸ Տե՛ս ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1972, էջ 361-362:

ավանդաբար պահպանվում են: «Իրավունք» եզրույթի բազմիմաստության պատճառներից մեկն էլ իրավունքի որպես հասարակական երևույթի հասկացման և մեկնաբանման բարդություններն են:

Իրավագիտության մեջ «իրավունք» եզրույթի առավել հաճախ հանդիպող իմաստներն են.

1) Իրավունք են անվանում մարդկանց, սոցիալական խմբերի հասարակական-իրավական հավակնությունները, որոնց բավարարումն ապահովում է նրանց լիարժեք գոյությունը: Օրինակ մարդու կյանքի իրավունքը, երջանկության իրավունքը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Այդ իրավական հավակնություններն ունեն բանական արմատներ, պայմանավորված են մարդու և հասարակության գոյության և գործողության օրինաչափություններով: Այդ պատճառով դրանք համարվում են բնական իրավունքներ, անհրաժեշտ են մարդու և հասարակության բնականոն գոյության ու զարգացման համար:

2) Իրավունքը դիտարկվում է որպես իրավական նորմերի համակցություն: Իրավունքի նորմերը որպես արգելքների, պարտականությունների, թույլատրելի արարքների հավաքածու սահմանվում կամ սանկցիավորվում են պետության կողմից: Այդ իմաստով իրավունքն անվանում են «օբյեկտիվ իրավունք»: Այդ իմաստն է դրվում «իրավունք» եզրույթի մեջ, երբ կիրառվում են «աշխատանքային իրավունք», «քրեական իրավունք» բառակապակցությունները:

«Իրավունք» եզրույթն այս իմաստով չունի հոգնակի թիվ: Իրավունքը որպես նորմերի համակցություն, անվանում են օբյեկտիվ իրավունք, քանզի այն ստեղծվում և գործում է անկախ առանձին մարդկանց կամքից: «Օբյեկտիվ իրավունք» հասկացության հոմանիշ է «պոզիտիվ (դրական) իրավունք» հասկացությունը: Դրական, այսինքն առկա իրավունքն իրավունքի հասկացողության տարատեսակ է, ըստ որի իրավունքը պետության կողմից ընդունված և հրապարակված, նորմատիվ տեքստերում շարադրված վարքագծի կանոնների ամբողջություն է: Այսպիսի հասկացողության դեպքում «իրավունք» և «օրենսդրություն» հասկացությունները հոմանիշներ են:

3) «Իրավունք» եզրույթն օգտագործվում է իրավունքի սուբյեկտների

պաշտոնապես ճանաչված ինչ-որ իրավական գործողություն կատարելու հնարավորությունը նշելու համար: Օրինակ քաղաքացիներն ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք: Այս իմաստով իրավունքն անվանում են «սուբյեկտիվ իրավունք», այսինքն իրավական հնարավորություն, որը պատկանում է իրավունքի որոշակի սուբյեկտին (ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, կազմակերպություններին և այլն):

4) «Իրավունք» եզրույթն օգտագործվում է նաև բոլոր իրավական երևույթների համակարգը նշելու համար, ներառյալ բնական իրավունքը, իրավունքն օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով, իրավական մշակույթը և իրավագիտակցությունը: Այս իմաստով «իրավունք» հասկացության հոմանիշ է համարվում «իրավական համակարգ» եզրույթը: «Իրավական համակարգ» հասկացությունը լինելով լայն հասկացություն, իրենում ներառում է ինչպես օբյեկտիվ իրավունքը (իրավունքի նորմերը), այնպես էլ իրավական գաղափարները, իրավունքի աղբյուրները, իրավական մարմինների համակարգը, իրավական մշակույթը, իրավագիտակցությունը:

5) «Իրավունք» հասկացությունն օգտագործում են նաև այն գաղափարներն ու տեսական պատկերացումները նշելու համար, թե ինչպիսին պետք է լինի իրական, գործող իրավունքը: Օրինակ բնական իրավունքի տեսության հիմնարար հասկացություններից է «բնական իրավունքը»: «Բնական իրավունքն» ի ծնե մարդուն պատկանող և անօտարելի իրավունքների ու ազատությունների համակցություն է, որն արդյունք է բնական օրինաչափությունների և պայմանավորված է մարդու բնույթով, հետևաբար կախված չէ պետության կամ ինչ որ օրենսդրի կամքից: Պետության կողմից սահմանված դրական իրավունքը պետք է համապատասխանի բնական իրավունքին, ապահովի և երաշխավորի այն:

Այսպիսով, իրավունքի վերոնշված առանձնահատկություններով (որպես հասարակական հարաբերությունների համապարփակ նորմատիվ իրավական կարգավորիչի և նրա կիրառման ապահովումը պետության հարկադրանքի ուժով) պայմանավորված է իրավունքի առաջնակարգ տեղն ու դերը սոցիալական նորմերի համակարգում: Սակայն իրավունքը հասարակության մեջ իր կարգավորիչ դերն իրականացնում է մյուս սոցիալական նորմերի և, առաջին հերթին, բարոյական

նորմերի հետ փոխներգործության միջոցով:

Սոցիալական նորմերի դերն ու նշանակությունը, նրանց տեղը հասարակական կյանքում պատկերացնելու համար, հետազոտության նպատակներից ելնելով, վերլուծենք իրավունքի և բարոյականության, փոխհարաբերակցության հիմնահարցերը:

Բարոյականությունը մարդկանց վարքագծի կանոնների համակցություն է, որոնք ձևավորվել են հասարակության զարգացման երկարատև ժամանակահատվածում և որոնցում արտահայտվում է հասարակության պատկերացումները՝ արդարության և անարդարության, ճշմարտության և ստի, ազնվության և անազնվության, բարու և չարի մասին և այլն²⁹: Հետևաբար՝ բարոյականությունը հասարակական կեցությունը բնութագրող սկզբունքների, նորմերի համակարգ է, որը կարգավորում է մարդկանց վարքագիծը՝ բարու և չարի, արդարի և անարդարի գնահատման դիրքերից:

Որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ՝ իրավունքը և բարոյականությունը աչքի են ընկնում միասնությամբ, քանի որ սոցիալական նորմերի համակարգում ամենից ընդհանուրն են և տարածվում են ամբողջ հասարակության վրա: Բարոյականության և իրավունքի նորմերն ունեն կարգավորման միասնական օբյեկտ՝ հասարակական հարաբերությունները, որոնք հասարակության զարգացման արդյունք են³⁰:

Հիշատակված ընդհանրությունների հետ մեկտեղ իրավունքի և բարոյականության նորմերն ունեն որոշակի տարբերություններ, որոնք են ծագման բնույթը, արտահայտման ձևերը, ապահովման եղանակները, ինչպես նաև գնահատման չափանիշները:

Ծագման բնույթով, եթե բարոյականությունը ձևավորվում է հասարակությունից, ապա գործող իրավունքը ստեղծում է պետությունը: Բարոյական համակարգի փոփոխությունները կրում են ժամանակի մեջ երկարաձգված և, որպես կանոն, հանգիստ ու հանդարտ էվոլյուցիայի բնույթ գործընթաց, որն ընթանում է հասարակության ողջ հոգևոր մշակույթի համատեքստում: Այդ իսկ պատճառով բարոյականությունն ըստ էության չունի սեփական պատմություն: Հայտնի են առանձին հեղինակների փորձեր գրելու էթիկայի պատմություն, բարքերի պատմության, սակայն

²⁹ Տե՛ս Социология права. Курс лекций. Том 1. Отв. ред. **М.Н. Марченко**. М., 2015, с. 168-169.

³⁰ Տե՛ս **Алексеев С.С.** Общая теория права. М., 2008, с. 120-121.

բարոյական պատմության առարկան մինչ այժմ էլ մնում է անըմբռնելի: Բարոյականությունը փոխվում է դանդաղ տեմպերով և չնչին «չափաքանակներով», ընդ որում՝ բարոյական համակարգի կորիզը, որին պատկանում է համամարդկային բարոյականությունը, մնում է անսասան:

Ի տարբերություն բարոյականության, իրավունքն ունի խստիվ փաստագրված, միանգամայն կոնկրետ անձանց ու ժամանակի հայտնի դեպքերի հետ կապված պատմություն: Պատմական չափումն ու պատմականությունը հանդիսանում են իրավունքի բնորոշիչ հատկանիշներ: Այն անհնար է հասկանալ իր ժամանակից դուրս: Իրավական համակարգն ամբողջովին, ինչպես նաև նրա ցանկացած մասը, չի կարող հավակնել հավերժության ու բացարձակ բնույթի, թեև յուրաքանչյուր երկրի օրենսդրության մեջ կարող են գտնել շատ իրավաբանական նորմեր, որոնք համանման են այլ երկրներում գոյություն ունեցող նորմերի և ծագում են մեր թվարկությունից շատ առաջ հայտնված նորմերից, օրինակ, քաղաքացիական-իրավական գործարքները կամ ընտանեկան-ամուսնական հարաբերությունները կարգավորող կանոնները: Իրավական համակարգի զարգացումը ներկայանում է որպես օրենսդրության, նախադեպային, պայմանագրային իրավունքի անընդմեջ կատարելագործում և նորացում, ինչն իրականացվում է նորացման բավականին հանգիստ գործընթացով, որոնք երբեմն ընդհատվում են թռիչքային էվոլյուցիայի փուլերով, այսինքն՝ ժամանակ առ ժամանակ կատարվող վերափոխումներով, ինչպես նաև իրավունքի պատմության բավականին հազվադեպ հեղափոխություններով, որոնք պատմականորեն համընկնում են սոցիալական խոշոր հեղափոխությունների հետ: Ամերիկացի հայտնի իրավագետ Հ. Բերգմանի կարծիքով, արևմտյան իրավունքի պատմությունն իր վրա կրել է վեց մեծ հեղափոխությունների ազդեցությունը, ընդ որում՝ դրանցից առաջինը՝ «պապական հեղափոխությունը», տեղի է ունեցել XI դարում, կտրուկ կերպով անջատելով «բարբարոսական» իրավունքի դարաշրջանը այն փուլից, երբ սկսեցին ձևավորվել մինչ այժմ էլ իրենց նշանակությունը չկորցրած արևմտյան իրավական ավանդույթները: Համաշխարհային մասշտաբի երկրորդ հեղափոխությունն ա համարում է XVI բողոքական Ռեֆորմացիան Եվրոպայում և հատկապես Գերմանիայում, որին հետևում են չորս մեծ սոցիալական հեղափոխություններ. XVII

դարի Անգլիականը, XVIII դարի Ամերիկյանն ու Ֆրանսիականը և Ռուսականը XX դարասկզբին³¹: Այս բոլոր հեղափոխությունները հաստատում էին իրավունքի պատմականորեն նոր տեսակ, որը ներառում էր առանձին բազում իրավական համակարգեր: Արևմտյան հակաֆեոդալական հեղափոխությունները առաջ բերեցին կապիտալիստական հասարակության իրավունքի ժամանակակից տեսակ, իսկ սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում հակաբուրժուական էր և խնդիր էր դրել ստեղծել սոցիալիստական տեսակի իրավական համակարգ, որի պատմական ճակատագիրն այսօր քաջ հայտնի է բոլորին:

Բարոյականությունն արտահայտվում է հասարակության գիտակցության մեջ, մինչդեռ իրավունքն ունի գրավոր ձև և արտահայտվում է հատուկ նորմատիվ ակտերում³²: Բարոյականության նորմերը, կանոնները պաշտոնապես ամրագրված չեն, դրանք հասարակության գիտակցության կարևորագույն ձևերից են և կյանքում պաշտպանվում են հասարակական կարծիքի, համոզմունքի, կամային-գիտակցական գործունեության միջոցով: Իրավական նորմերի իրավաբանական ուժը ձևականորեն և պաշտոնապես բնորոշվում է դրանց ստեղծման ակտով, հանդիսանում է իրավաբանական ինստիտուտացման արդյունք և գործառույթ: Այն հանդես է գալիս որպես «տրված մեծություն», որը նախապես մտցված է իրավական նորմի իրագործման և կիրառման պարտադիր պայմանների թվի մեջ, հետևաբար գոյություն ուներ նախքան իրավակիրառում: Սուբյեկտը, որին հասցեագրված է նորմատիվային ակտը, պետք է ընդունի նրա մեջ պարունակվող իրավական նորմը դրա իրավաբանական ուժի հետ միասին: Վերջինս սահմանվում է մի շարք օբյեկտիվ գործոններին համապատասխան: Այդ գործոններն են. նորմը ստեղծող սուբյեկտի դրությունը, իրավասահմանող պետական իշխանության կառույցի մեջ նրա տեղը, իրավունքի որոշակի ձևը, որի մեջ ներառված է տվյալ նորմը պարունակող իրավական ակտը (օրենքի ձև, ենթաօրենսդրական ակտի ձև) և վերջապես իրավաբանական նորմի կարգավիճակը նորմատիվային հիերարխիայում, որը ներկայացված է իրավունքի համակարգով: Յուրաքանչյուր նորմ իր «խորշն» է զբաղեցնում հիերարխիայի մեջ, այն պետք է համապատասխանի իրավաբանական ավելի մեծ ուժ

³¹ Տե՛ս **Берман Г.** Западная традиция права: эпоха формирования. М., 1994, с. 35:

³² Տե՛ս **Кашанина Т.В.** Структура права. М., 2012, с.76-77.

ունեցող նորմի, իսկ ավելի ցածր ուժի նորմերը չպետք է հակասեն նրան: Նորմատիվային կոլիզիաները միշտ էլ լուծվում են հոգուտ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմի: Իրավակիրառումն ընդհանրապես անհնար է առանց իրավաբանական ուժի գործոնի հաշվառման, որն էականորեն սահմանափակում է նորմի ընտրությունը հակասական կամ ոչ պարզ իրավիճակներում: Անշուշտ, գոյություն ունի անուղղակի կապ իրավական նորմի ուժի և նորմով արտահայտված արժեքի միջև, սակայն իրավական վարք տարբերակներ ընտրելիս սուբյեկտը պարտավոր է արժեքային ավելի գրավիչ նորմին նախընտրել իրավաբանական ավելի բարձր ուժով օժտված նորմը, եթե այդ երկու հատկությունները չեն համընկնում: Ճիշտ է, իրավական վարքի ոլորտում դա ամենևին էլ չի բացառում արժեքային ընտրումը, ասենք, դիսպոզիտիվ նորմերի կիրառման, սուբյեկտների դիսկրեցիոն լիազորություններն իրականացնելու և իրավական մի շարք այլ իրավիճակների դեպքում:

Գնահատման չափանիշներով բարոյական նորմերն ընդգծում են հասարակական հարաբերությունների բարի և չար, արդար և անարդար լինելու հանգամանքը: Ինչ վերաբերում է իրավունքի նորմերին, ապա նրանք բնութագրում են մարդկանց կամային գործողությունների օրինական կամ անօրինական լինելը:

Բարոյականությունը որպես համակարգ չունի ժամանակի ու տարածության մեջ հստակորեն ամրագրված սահմաններ, նրա գործողությունների ոլորտը «խցկված» չէ որոշակի տարածքի մեջ, իսկ նրա նորմերի գործողության ժամկետները երբեք և ոչ մեկի կողմից չեն սահմանվում ու չեն հրահանգվում: Բարոյականությունը ծավալված է որպես ինտերսուբյեկտ, միջազգային, միջպետական ֆենոմեն: Բարին ու չարը հանդես են գալիս որպես այդպիսիք բոլոր ժամանակներում և երկրագնդի բոլոր անկյուններում: Այն, ինչը անվանում են համամարդկային բարոյականություն և հանդիսանում է հենց բարոյական համակարգի կորիզ և ունիվերսալ բաղադրամաս: Անշուշտ, գոյություն չունի մեկ ընդհանուր բարոյականություն բոլոր ժողովուրդների ու ժամանակների համար, մշակույթի յուրաքանչյուր տիպին բնորոշ է իր սեփական բարոյականությունը: Սակայն դրանց մեջ այնքան կրկնվող բաներ կան, այնքան շատ ընդհանրություններ և համընկումներ կան նախկին և սինքրոն զարգացող մշակույթների բարոյական տարրերի միջև, որ այդ ակներևությունը որոշակի չափով համոզիչ է դարձնում

փիլիսոփայական կառուցվածքները հավերժ ու բացարձակ բարոյականության վերաբերյալ:

Իրավական համակարգը հստակորեն կապված է իր ժամանակի հետ, տարածության սահմաններին, գծերին, կետերին: Իրավունքի ժամանակային և տարածքային չափումներն օժտված են մշակութապատմական կոնկրետությամբ, այսինքն՝ իրավաբանական օրենքների գործողությունը միշտ սահմանափակված է որոշակի տարածքով ու ժամկետներով: Միասնական իրավական տարածքը սահմանափակված է պետական սահմաններով (ցամաքային, ջրային, օդային), որոնցից վերջանում է այն իրավունքի գործողությունը, որն օրենքի տեսքով իր քաղաքացիների համար ստեղծում է պետությունը: Ժամանակի առումով իրավական նորմը գործում է այն ընդունելու պահից մինչև պաշտոնական վերացումը: Իրավական նորմերի էքստերիտորիալ (արտատարածքային) գործողությունը բացառություն է, հատուկ կերպով վերապահված օրենքի մեջ: Պետության իրավական տարածքում հայտնված ոչ քաղաքացիները իրավունքներից օգտվում են այն դեպքերում, երբ օրենքը հավասարեցնում է նրանց իր քաղաքացիներին: Գերիշխում է «միասնական պետություն միասնական իրավական համակարգ» սկզբունքը: Միջազգային իրավունքի նորմերն ու հանրաճանաչ սկզբունքները գործում են պետության տարածքում, պետության, օրենսդրորեն արտահայտված համաձայնությամբ:

Հասարակական հարաբերությունների կարգավորման ընթացքում իրավունքը և բարոյականությունը փոխգործակցում են: Դրանց պահանջները երբեմն համընկնում են: Այն, ինչը դատապարտում և խրախուսում է իրավունքը, նույնն անում է նաև բարոյականությունը: Եվ ընդհակառակը, շատ բարոյական նորմեր կյանքի ընթացքում վեր են ածվում իրավականի: Սակայն բարոյականությունը չի կարելի պատկերացնել որպես մշտնջենական և անփոփոխ համոզմունքների, պատկերացումների քարացած ամբողջություն: Հասարակության զարգացման հետ զուգընթաց բարոյական նորմերը զարգանում, փոփոխվում, նոր արժեքներ են ձեռք բերում, սակայն, այնուհանդերձ, բարոյական նորմերի փոփոխությունը, վերարժեքավորումը տեղի է ունենում չափազանց դանդաղ, երկար ժամանակահատվածում: Բարոյական նորմերի վրա նույնպես ազդում են քաղաքական, տնտեսական, ազգային, հոգեբանական, մշակութային,

կրոնական և այլ գործոնները: Այդ գործոնների շարքում հատուկ տեղ ունի նաև իրավունքը, որը էապես ազդում է բարոյականության վրա³³:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է, որ իրավունքի և բարոյականության հարաբերակցությունը դիտարկել դրանց ընդհանրության, տարբերության, միասնության և հակասության տեսանկյուններից: Այսպես, իրավունքի և բարոյականության ընդհանրություններն են՝

1. Դրանք սոցիալական նորմատիվ կարգավորիչներ են, որոնք իրենց միասնության մեջ կազմում են իրավական կարգավորման ամբողջական համակարգը:

2. Իրավունքն ու բարոյականությունը հետապնդում են նույն նպատակները և խնդիրները, որոնք հիմնականում արտահայտվում են հասարակական կյանքի կանոնակարգման և կատարելագործման, մարդու իրավունքների պաշտպանության, արդարության և հումանիզմի հաստատման մեջ:

3. Իրավունքը և բարոյականությունը կարգավորում են մարդկանց, նրանց խմբերի միջև ծագող հասարակական հարաբերությունները:

4. Որպես սոցիալական կարգավորիչներ, իրավունքն ու բարոյականությունը սահմանում են սուբյեկտների հնարավոր և անհրաժեշտ վարքագծի տարբերակները:

5. Բովանդակային իմաստով իրավունքը և բարոյականությունը ունեն միասնական տնտեսական, մշակութային, քաղաքական և այլ գործոններով պայմանավորված հիմքեր:

6. Ե՛վ իրավունքը, և՛ բարոյականությունը պատմաիրավական և մշակութային արժեքներ են:

Բացի ընդհանուր գծերից, իրավունքի և բարոյականության միջև գոյություն ունեն զգալի տարբերություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Առաջին տարբերակիչ առանձնահատկությունը կապված է սոցիալական քննարկվող նորմերի ծագման ժամանակահատվածի հետ: Մարդկային հասարակության առաջացմանը զուգահեռ ծագել է նաև բարոյականությունը: Այն միշտ ուղեկցել է անհատին վերջինիս կյանքի և գործունեության ընթացքում: Ինչ վերաբերում է իրավունքին, ապա այն առաջացավ ավելի ուշ՝ հասարակության սոցիալական

³³ Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան: Երևան, 2014, էջ 323:

գարգացման որոշակի փուլում, երբ հասարակությունը շերտավորվեց, բաժանվեց հակամարտող դասակարգերի, և երբ ձևավորվեց պետությունը:

2. Իրավունքի նորմերը ստեղծվում, փոփոխվում և դրանց գործողությունը դադարեցվում է պետության (պետական մարմինների իրավաստեղծ գործունեության արդյունքում) և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Բարոյական նորմերը ձևավորվում են բնական ճանապարհով՝ կյանքի և մարդկանց պրակտիկ գործունեության արդյունքում: Բարոյական նորմերը ընդունվում են, «սանկցավորվում են» մարդկային խմբերի, սոցիալական հանրույթի, կոլեկտիվների կողմից: Սրանք չունեն պետության կողմից ճանաչվելու կարիք, հետևաբար չեն կարող ունենալ պետաիշխանական նշանակություն:

3. Իրավական նորմերը ձևականորեն որոշակիացված են, այսինքն՝ ամրագրված են պետականորեն ճանաչված գրավոր պաշտոնական փաստաթղթերում (օրենք, կառավարության որոշում, դատական ակտեր և այլն): Բարոյական նորմերը, ի տարբերություն իրավական նորմերի, չունեն հստակ, գրավոր պաշտոնական ամրագրում և գոյություն ունեն մարդկանց գիտակցության մեջ: Այստեղ պետք է նկատել, որ հնարավոր է նաև բարոյական նորմերի ամրագրում, օրինակ՝ կրոնական աղբյուրներում, պատմական փաստաթղթերում և այլն: Սակայն ակնհայտ է, որ նման ամրագրումները չեն կարող համարվել պաշտոնական:

4. Տարբեր են մարդկանց վարքագծի վերաբերյալ իրավունքի և բարոյականության գնահատման չափանիշները: Իրավունքում օգտագործվում են այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են, օրինակ՝ մարդու վարքագիծը «իրավաչափ է», «իրավաչափ չէ», «օրինական է», «ապօրինի է», «իրավունք ունի», «կրում է պարտականություն»: Բարոյականության պարագայում մարդու վարքագծի գնահատման չափանիշներ են հանդիսանում «բարոյական է», «անբարոյական է», «արդար է», «անարդար է», «գնահատելի է», «քննադատելի է» և այլն:

5. Իրավունքն ու բարոյականությունը միշտ չէ որ համընկնում են իրենց գործողության ոլորտով: Բարոյականությունը կարգավորում է հարաբերությունների առավել լայն շրջանակ և նրա ազդեցությունը սոցիալական կապերի վրա ավելի խորն է: Գործնականում չկան մարդկային կյանքի ոլորտներ, որոնք բարոյական

վերահսկողության տիրույթում չգտնվեն: Իրավունքն այս իմաստով չի կարգավորում հասարակական բոլոր հարաբերությունները, այլ միայն հասարակական կապերի առավել կարևոր ոլորտները (արդարադատություն, տնտեսություն, էկոլոգիա, մարդ-պետություն փոխհարաբերությունները և այլն): Այս իմաստով, անհրաժեշտ է նշել, որ կան ոլորտներ, որտեղ իրավունքի մուտքը ևս արգելված է. իրավունքը չի կարող կարգավորել այդ «հարթությունները»: Դրանք հիմնականում անձնական, կենցաղային ոլորտներն են (ընկերություն, ճաշակ, սեր և այլն):

6. Իրավունքն ու բարոյականությունը տարբերվում են նաև իրենց կարգադրագրերի որոշակիացվածության աստիճանով: Բարոյական նորմերը հիմնականում կրում են ընդհանուր բնութագիր և իրենցից ներկայացնում են վարքագծի բարոյական սկզբունքներ ինչպիսիք են՝ սկզբունքայնությունը, հավատարմությունը, փոխօգնությունը, բարոյական պատասխանատվության զգացումը և այլն: Իրավունքի նորմերն ավելի կոնկրետ են, այսինքն՝ նրանցում հստակեցվում են իրավահարաբերության սուբյեկտների իրավունքները և պարտականությունները:

7. Իրավունքը և բարոյականությունը տարբերվում են նաև ապահովման մեթոդներով: Իրավունքի նորմերը հնարավոր խախտումներից պաշտպանված են պետական հարկադրանքի ուժով (քրեաիրավական, վարչաիրավական հարկադրանքի միջոցներ և այլն): Բարոյական նորմերը պաշտպանվում են հասարակական կարծիքի ուժով, կոլեկտիվի հեղինակությամբ՝ հենվում են այն միջավայրի վրա, որտեղ ապրում են մարդիկ³⁴:

Ընդհանրացնելով իրավունքի և բարոյականության ընդհանրությունները և տարբերությունները՝ անհրաժեշտ է նաև նշել իրավունքի և բարոյականության փոխկապակցվածության խնդիրները:

Իրավունքը արտահայտում է նաև բարոյականության պահանջները, սկզբունքները և պարտադիր է դարձնում բարոյական արժեքները: Բարոյական նորմերի կատարման երաշխիքը մարդկանց ներքին բարոյական մշակույթն է: Քանի որ իրավունքն ունի բարոյական արմատներ, ապա այն իրավաբանորեն պահանջում է պարտադիր բարոյական վարքագիծ: Շնորհիվ իրավունքի իրավական դրույթների

³⁴ Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. **Ա. Ղամբարյան, Մ. Մանուկյան**: Երևան, 2014, էջ 324-325:

պարտադիրության բարոյական արժեքները դադարում են լինել կարգախոսներ, խրատներ կամ հասարակ ցանկություն: Իրավունքը մարդկանց մեջ արմատավորում է բարոյականություն: Իրավունքը, դրա կենսագործման հասարակական վարձը, ուսուցումը, կրթությունը մարդու մեջ դաստիարակում են բարոյականություն, հոգևորություն և քաղաքացիականություն:

Իրավունքը բարոյական է դարձնում պետությունը և օրենքները: Իրավունքը ունենալով բարոյական հիմքեր և բովանդակություն, իր ճշմարիտ իրավական բնույթի շնորհիվ բարոյական որակներ են հաղորդում նաև պետությանը և օրենքին: Այսպես բնական իրավունքների պարտադիրության շնորհիվ պետությունը և օրենքները մարդկայնանում են, լցվում են մարդասիրական բովանդակությամբ, դառնում են «բարոյական», ժողովրդավարական³⁵:

Ինչպես և բոլոր տեսակի սոցիալական կարգավորիչները, բարոյականությունը (էթիկան) ունի իրեն բնորոշ կառուցվածքային բնութագիրը: Նրա սոցիալական գործողությունը դրսևորվում է երեք բաղադրատարրերի միասնության մեջ բարոյաէթիկական հարաբերություններ, բարոյաէթիկական գիտակցություն, բարոյականության (էթիկայի) նորմեր (կանոններ):

Բարոյաէթիկական հարաբերությունները հասարակական հարաբերությունների այն ոլորտն է, որը կարգավորվում կամ որտեղ գործում են բարոյականության նորմերը: Բարոյականության նորմերը կամ էթիկայի կանոնները, որպես վարքագծի ընդհանուր սոցիալական նմուշներ, ձևավորվել են մարդկության երկարատև պատմական զարգացման արդյունքում «չարի դեմ պայքարի, ինչպես նաև բարու, մարդասիրության, արդարության, մարդկանց երջանկության հաստատման համար պայքարի ընթացքում»:

Բարոյաէթիկական հայացքները, արժեքները, բարքերը, ձևերը և նորմերը, որ կազմավորվում են յուրաքանչյուր մշակույթում, ունեն օբյեկտիվ, արտաանհատական (վերանհատական) բնույթ: Ամբողջության մեջ էթիկական նշված երևույթներն անվանում են բարոյականություն: Բարոյականությունը (արժեքները, սկզբունքները, նորմերը) այս իմաստով բնորոշ է ինչպես ամբողջ հասարակությանը, այնպես էլ

³⁵ Տե՛ս **Վաղարշյան Արթուր**, Պետության և իրավունքի տեսություն – 2: Դասախոսություն: Երևան, 2012, էջ 72:

սոցիալական ընդհանրություններին և սոցիալական խմբերին: Մյուս կողմից էթիկական երևույթների առանձնահատուկ գիծը կայանում է նրանում, որ այն ունի ներանհատական գոյություն, արտահայտում է անհատների ներքին դիրքորոշումը, նրանց ազատ և ինքնագիտակցված որոշումն այն մասին, թե ինչն է բարին և չարը, պարտքը և խիղճը մարդկային արարքներում, փոխհարաբերություններում և գործերում: Այս առումով էթիկան վերաբերվում է բարոյականին և համարվում է անհատի նկարագրի որակական բնութագրի մաս:

«Էթիկական հարաբերությունների ոլորտում բարոյականը հանդես է գալիս որպես անհատի վարքագծի ներքին ինքնակարգավորիչ, նրա գիտակցված, ներքնապես հիմնավորված մասնակցության եղանակ սոցիալական կյանքին ու հասարակական հարաբերություններին: Բարոյականության նորմերը համարվում են վարքագծի արտաքին կարգավորիչներ: Այնտեղ, որտեղ անհատն ընդունել, յուրացրել և իր ներքին դիրքորոշմանն է վերածել կոլեկտիվ բարոյականության պատկերացումները, արժեքները, նորմերը և ղեկավարվում է դրանցով իր վարքագծում, առկա է երկու կարգավորիչների բարոյականի և բարոյականության զուգակցումը և համաձայնեցված գործողությունը»³⁶:

Էթիկայի նշված առանձնահատկությունն էլ պայմանավորել է այն հանգամանքը, որ բարոյականության նորմերն ունեն կենսագործման երկու հիմնական երաշխիքներ ներքին և արտաքին: Բարոյականության նորմերի կենսագործման ներքին երաշխիքը մարդու բարոյական լինելն է, այսինքն՝ անձնական համոզվածությունը: Բարոյականության ներքին երաշխիքը մարդու խիղճն է, իսկ արտաքինը՝ հասարակական կարծիքը»³⁷: Այսպիսով, հասարակական կյանքի էթիկական կարգավորման բաղադրատարրերն են՝ բարոյաէթիկական հարաբերությունները, բարոյաէթիկական նորմերը, և բարոյաէթիկական գիտակցությունը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հասարակությունում գործող բոլոր սոցիալական նորմերի հիմնական նպատակը՝ հասարակական հարաբերությունների կանոնակարգումն է և մարդկանց պատշաճ վարքագծի ձևավորումն է:

Սակայն, ինչպես տեսանք, նորմատիվ կարգավորիչների համակարգում

³⁶ Տե՛ս և Проблемы теории государства и права. Под ред. **М.Н. Марченко**, М., 2015, էջ 323.

³⁷ Տե՛ս և **Нерсисянц В.С.** Философия права. М., 2015, էջ 78:

առաջնային և գերապատիվ դերակատարումը պատկանում է իրավունքին (իրավական նորմերին), քանզի իրավունքն է սահմանում հասարակական հարաբերությունների բոլոր սուբյեկտների համար համընդհանուր և հավասար վարքագծի չափ, որոշում է արգելված և թույլատրելի վարքագծի սահմանումները, հանդես է գալիս որպես սոցիալական արդարության, ազատության, հավասարության և հասարակական (սոցիալական) բարիքի նորմատիվ ձև:

Հենց սրանում է կայանում իրավունքի սոցիալական նշանակությունը, որի մասին հանգամանալից կխոսենք սույն հետազոտության հաջորդ գլուխներում:

ԳԼՈՒԽ 2

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ, ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Իրավունքի էության և բովանդակության ասպեկտները

Իրավունքի էությունը փոփոխվում է հասարակության զարգացմանը զուգահեռ: Չնայած տարբեր տեսական հայեցակարգերի որոշակի հակասությանը, դրանք ունեն մի շարք ընդհանուր դրույթներ, իրավունքը իրենից ներկայացնում է սոցիալական երևույթ, առանց որի անհնարին է քաղաքակիրթ հասարակության գոյությունը, իրավունքը նորմատիվային ձևով պետք է արտացոլի համամարդկային արդարության պահանջը, ծառայի ընդհանուր հասարակական, այլ ոչ նրա առանձին համայնքների կամ սոցիալական խմբերի շահերին՝ հաշվի առնելով անձի որպես հասարակության հիմքի անհատական շահերը, կարիքները, իրավունքը հանդես է գալիս որպես վարքագծի չափանիշ, կանոն, որոնք հաստատվել և պահպանվում են պետության կողմից: Այս տեսանկյունից իրավունքը իրենից ներկայացնում է ազատության և արդարության նորմատիվ կարգ:

Իրավունքի էության վերաբերյալ հարցը դիտարկվում է որպես իրավունքի տեսությունում հիմնականներից մեկի որակով: Հայտնի է, որ ցանկացած երևույթի էությունն իրենից ներկայացնում է առավել կարևոր, որոշիչ, հիմնարար, նշանակալից հատկությունների համախումբ, որոնցով ներկայացվում են դրա մնացյալ բոլոր հատկանիշները: Այս ասպեկտով իրավունքի էությունը հանդես է գալիս որպես իրավունքի գլխավոր ներքին որակական հիմք, որը արտացոլում է հասարակությունում դրա առաքելությունը, էությունը և զարգացման միտումները³⁸:

Հարցի պատասխանը, թե ինչու են այդքան շատ գրքեր (առավել շատ գիտական հոդվածներ) նվիրված իրավունքի էությանը բավականին պարզ է: Բացի իր գիտական նշանակությունից, իրավունքի էության վերաբերյալ հարցը մինչև վերջերս ունեցել է քաղաքական մեծ նշանակություն, քանի որ այն իրավաբանական գիտության գաղափարականացման պայմաններում հանդիսանում էր սոցիալիստական

³⁸ Տե՛ս **М.Н. Марченко** Тенденции развития права в современном мире. М., 2015, с. 62-63.

իրավաբանական գիտության և, այդպես կոչված բուրժուազիայի ներկայացուցիչների սկզբունքային քաղաքական վեճի առարկա: Ընդ որում դա սխոլաստիկ վիճաբանություն չէր: Դա իսկապես իրավունքի էության հասկացությանը սկզբունքորեն երկու հակադիր մոտեցումներ էին: «Էությունը» նշանակում է առարկայի (տվյալ դեպքում իրավունքի) առավել խորը, կայուն հատկությունների համախումբ, որոնք սահմանում են վերջինի ծագումը, բնույթը և զարգացման ուղղությունը³⁹: Բանավեճի առարկա հանդիսանում էին իրավունքի ծագման պատճառները, դրա սահմանումը, հասարակություն դերը, որակական հատկանիշները և այլն: Ոմանց համար իրավունքը՝ արդարության և ազատության չափորոշիչ է, իշխանությունից մարդու պաշտպանության միջոց, մարդկային մշակույթի ձեռքբերում, մյուսների համար՝ հասարակական հարաբերությունների դասակարգային կարգավորիչ, մեկի նկատմամբ նյուս դասակարգի գերակայման պահպանության գործիք, գերակայող դասակարգի կամքի և շահերի արտահայտող:

Արդարության համար անհրաժեշտ է նշել, որ խորհրդային իրավաբանների մեծամասնության համար իրավունքի էության նկատմամբ ազատ հայացքի ճանապարհին երկար ժամանակ հիմնական խոչընդոտը եղել է գաղափարական:

Բազմաթիվ մտածողներ, փիլիսոփաներ և իրավաբաններ հնագույն ժամանակներից փորձել են վերլուծել և բացատրել այնպիսի կարևոր հարցեր, ինչպես իրավունքի հասկացությունը, էությունը և սոցիալական նշանակությունն է: Ընդ որում ոմանց մոտ իրավունքի ընկալումներում առկա են ընդհանրություններ, սակայն առկա էին նաև բացարձակորեն հակադիր գնահատականներ և սահմանումներ:

Դժբախտաբար, իրավունքի էության իմացության, հասարակության և առանձին մարդու կյանքում դրա նշանակության, դերի նկատմամբ մոտեցումներում հակասությունները պահպանվում են մինչև մեր ժամանակները:

Ընդ որում նման հասկացությունը բացատրելի է: Իրավունքը՝ խիստ-նշանակալից արժեք է ժամանակակից մարդու, յուրաքանչյուր անձի համար, բարդ և խորն է դրա ազդեցությունը պետության, ամբողջ հասարակության, յուրաքանչյուր քաղաքացու կյանքում, այդ իսկ պատճառով այն չի կարող տիրապետել մեկ պարզ

³⁹ См' у **Захарцев С.И.** Некоторые проблемы теории и философии права. М., 2014, с. 44-45.

բացատրությամբ: Ճիշտ է գրում Գ.Վ. Մալցևը, որ «իրավունքը՝ իմացության համար հսկայական, անսպառ երևույթ է»⁴⁰: Ճշմարիտ է պրոֆեսոր Ն.Մ. Կորկունովը նրանում, որ հնարավոր է գտնել մարդու, ով իր ամբողջ կյանքում չի հետաքրքրվել պատմության կամ բնագիտության հարցերով: «Սակայն ապրել, երբևէ իրավունքի հարցադրումներ չիրականացնելով, բացարձակորեն անիմաստ է»⁴¹:

Պետությունների միջազգային և ներպետական գործերում իրավունքի նշանակությունը վերջին տարիներին ոչ միայն չի նվազել, այլ էականորեն աճել է՝ չխոսելով մարդու և քաղաքացու ազատությունների և իրավունքի ապահովման համար վերջինիս նշանակության մասին:

Առաջին, տվյալ խնդիրը հանդիսանում է ելակետային, կենտրոնական իրավունքի վերաբերյալ ուսմունքներու, դրա խորը իմացությունը մեծամասամբ կանխորոշում է իրավունքի տեսության այլ հարցերի հետագա իմացությունը, իսկ երկրորդ նույնիսկ գիտությանը հայտնին անընդհատ ենթարկվում է փոփոխության կապված գիտելիքերի աճի, հասարակական զարգացման առաջընթացի հետ: Պատահական չէ, որ ժամանակակից գիտության բազմաթիվ ոլորտներում տեղի են ունենում սուր վիճաբանություններ, որոնք վերաբերվում են ոչ միայն գիտելիքի նոր, այլ նաև վաղուց ձևավորված ոլորտներին: Լիարժեքորեն բնական է իրավաբանական գիտությամբ իրավունքի էության շարունակական պարզաբանումը, քանի որ այն անդադար զարգանում և հարստանում է:

Իրավունքի էության տակ ընկալվում են իրավաբանական երևույթների այն ներքին և անհրաժեշտ, հասարակական և հիմնական, գլխավոր և կայուն գծերը, հատկանիշները և հատկությունները, որոնց միասնականությունը և փոխապայմանավորվածությունը սահմանում են իրավունքի որպես ինքնուրույն սուբստանցիայի որակական առանձնահատկությունը և զարգացման օրինաչափությունները⁴²:

Իրավունքի էությունը կազմող գծերը, հատկությունները և հատկանիշները անբաժանելի են վերջինից, անհրաժեշտաբար առկա են դրանում: Ընկալել իրավունքի

⁴⁰ Мальцев Г. В. Понимания права. Подходы и проблемы. М., 1999, с. 3.

⁴¹ Коркунов Н. М. Лекции по общей теории права. 2005, с. 7.

⁴² Ст'ю Керимов Д. А. Избранные произведения. Т. 1. М., 2007, С. 259.

էութիւնը՝ նշանակում է հասկանալ նաև դրա իրավական երևոյթերը:

Այս մեթոդաբանական պահանջը կայանում է նրանում, որ էութեան երևոյթները պետք է վերլուծվեն հասարակական հարաբերութիւնների որպես իրավունքի իրական գոյութեան գործունեութեան մեջ:

Չնայած երևոյթից դեպի էություն տեսական մտքի շարժը հիմնականում համընկնում է էությունից դեպի երևոյթ դրա շարժման հետ, չի կարելի համարել, որ իրավունքի երևոյթների հետազոտութիւնները չեն հարստացնի դրա էութեան վերաբերյալ պատկերացումները, ինչն էլ կհանդիսանա որպես ինքնուրույն սուբստանցիա գիտական վերլուծութեան առարկա: Բանը նրանում է, որ իրավունքի էութեան խորհրդային հետազոտողների մեծամասնութիւնը կենտրոնացրել են ուշադրութիւնը կարևոր տարրի՝ պետական (կառավարող դասակարգի) կամքի վրա: Սակայն իրավունքի էութեան իմացութեանը դիալեկտիկ մոտեցումը ենթադրում է ոչ պետական կամքի, այլ նաև այլ իրավունքի էութիւնը սինթետիկ երևոյթների և հատկութիւնների բացահատում, օրինակ քաղաքացիական իրավահարաբերութիւնների, որտեղ առաջնային հանդիսանում է ոչ թե պետութեան, այլ դրա սուբյեկտների կամքը⁴³:

Իրավունքի էութիւնը ընդհանրապես չի կարող բացահայտվել մեկ կատեգորիայով, այն հնարավոր է ճանաչել և բացահայտել միայն իրավունքի իրական բնոյթը վերարտադրող կատեգորիաների համակարգի օգնութեամբ: Հանգեցնել իրավունքի էութեան և բնոյթի իմացութիւնը սահմանմանը կամ մի քանի հատկութիւնների անհնարին է⁴⁴:

Իրավունքի էութեան իմացութեան թերութիւններից մեկը հանդիսանում է այնպիսի զույգ հասկացութիւնների վերլուծութեան փոխկապակցութեան բացակայութիւնը, ինչպիսիք են «իրավունքի էութիւնը» և «իրավունքի երևոյթը»: «Իրավունքի երևոյթ» կատեգորիայն գործնականում չի ուսումնասիրվել: Առկա են իրավունքի բովանդակութեան և ձևի, «իրավունքի պատճառների և հետևանքների» և այլ փոխկապակցութիւնների ուսումնասիրութիւններ: «Իրավունքի էություն» կատեգորիան երկար ժամանակ «միանման» էր: Միայն մեթոդաբանական շրջանառութիւնում դրա

⁴³ Տե՛ս Социология права. Курс лекций. Том 1. Отв. ред. профессор **М.Н. Марченко**. М., 2015. с.171-172.

⁴⁴ Տե՛ս **Малахов В. П.** Философия права. М., 2008, С. 31.

նկատմամբ զույգ «իրավունքի գործառույթ» հասկացության որպես իրավունքի ակնհայտ երևույթներից մեկի ներածմամբ ծագեց իրավունքի էության առավել խորը իմացության հնարավորություն: «Իրավունքի էություն» կատեգորիան հանդես է գալիս որպես իրավունքի տեսության հիմնարարական հասկացություն, իսկ իրավունքի տեսության հասկացությունների շարքի համակարգը ցույց է տալիս, թե իրավունքի էությունը ինչ կերպ է արտահատվում պատմականորեն, վերածվում կանոնի և իրավահարաբերությունների, օրինականության և իրավակարգի երևույթների, ձեռք բերում տարբեր պետական դրույթների ձևեր, հանդես գալիս իրավական կարգավորման մեխանիզմներում»:

Էությունը գոյություն ունի ոչ թե որպես ինչ-որ միավոր բացարձակ հատկանիշ: Առանձին երևույթը, որը առանձնացված է որոշակի համակարգից, իրենում որևէ էություն չի պարունակում⁴⁵: Սակայն գոյություն ունի ոչ այլ կերպ, քան այն կապում, որը հանգեցնում է ընդհանուրին: Յուրաքանչյուր առանձին իրավական երևույթ կարող է բացահայտել իրավունքի ոչ թե ամբողջական էությունը, այլ դրա առանձին կողմերը կամ հատկանիշները:

Իրավունքի և էկոնոմիկայի փոխկապվածությունների վերլուծությունը, ընդգրկում է իրավունքի զարգացման վրա տնտեսության ազդեցությունը, իրավունքում տնտեսական պահերը, որպեսզի, իր հերթին, ցույց տա իրավունքի դերը, օրենսդրության նշանակությունը տնտեսության ամրապնդման և զարգացման համար⁴⁶:

Սակայն երևույթը և էությունը չեն հանդիսանում մոտ տեղակայված: Երևույթը տեղակայված չէ էության «վրայից», այլ հանդիսանում է էության միջնորդված բնույթ, ինչպես ևս էությունը իրական է որպես այն, որում և երևույթը արտահայտվում է:

Էության շրջանակները՝ ոչ մեկ անգամ և ոչ մշտական են տրված, այլ դինամիկ և փոփոխական են՝ զարգանալով տարբեր պատճառների, շարժիչ ուժերի ազդեցությամբ: Համապատասխանաբար փոփոխվում են նաև իրավունքի էության շրջանակները, քանի որ տվյալ էությունը, զարգանալով, ծնում է նոր կապեր,

⁴⁵ О некоторых особенностях познания сущности / Методологические проблемы современной науки. М., 1970, С. 351.

⁴⁶ Մանրամասն տե՛ս **Познер Р.** Экономический анализ права. В двух томах. Том 1. СПб, 2004, с. 24-33.

հարաբերություններ՝ ընդգրկելով առավել ընդլայնված երկուսն էլ: Տեսական հետազոտության խնդիրը կայանում է այդ նոր երկուսների և կապերի մեջ ներթափանցումը, նոր հարաբերությունների պարզաբանումը: Դրանով իսկ բացահայտվում է իրավունքի էության հարստությունը, որը առաջին հերթին/ապացուցվում է իրավունքի գործունեության (ազդեցության) հետևանքով ծագող իմացական սոցիալական արժեքի փաստերով, ինչպես նաև հենց իրավունքի նոր երկուսներով, որոնք ունենում են որոշակի փոփոխություններ այս կամ այն սոցիալական գործոնների զարգացման, ազդեցության ներքո: Իրավունքի էության հարստացման, զարգացման այս գործընթացը անվերջանալի է, անսպառ, անընդհատ: Նույն կերպ անընդհատ պետք է լինի նաև դրա իմացությունը, այդ իսկ պատճառով հետազոտելով իրավունքի էությունը, անհրաժեշտ է անվերջանալի խորանալ երկուսից դեպի էություն, այսպես ասած առաջին կարգի էությունից դեպի երկրորդ կարգի էությունը և այդպես անվերջ:

Իմացությունը կարևոր է իրավունքի էության, իրավունքի իմացության, իրավունքի կապերի և երկուսների խորացված աստիճանի ձեռք բերումն է: Անհրաժեշտ է հաշվի առել, որ էության կողմերից մեկը, որը ազդում է հասարակական հարաբերությունների վրա, հանդիսանում է իրավունքի գործառույթը: Գործառույթը՝ իրավունքի էության ընդլայնումն է հասարակական հարաբերություններում:

Իրավունքի մեջ էության և երկուսի հարաբերակցությունը դրսևորվում է հետևյալ կերպ. իրավունքի էությունն արտահայտվում է նրա բովանդակային իմաստի, կարգավորման առարկայի և կարգավորման մեթոդի եռամիասնության մեջ, իսկ երկուսը, իրավունքի արտահայտման արտաքին ձևերն են՝ որոնք որոշակիացված են հանրաճանաչ եզրույթների տեսքով՝ օրենք, հրամանագիր, նախադեպ և այլն: «Իրավունքի էություն» և «իրավունքի երկուս» կատեգորիաները տարբերվում են նրանով, որ իրավունքի էությունը արտահայտում է իրավական գործունեության զարգացման ընդհանուր օրինաչափությունները, իսկ մնացյալ առանձին երկուսները արտահայտում են միայն դրանց զարգացման առանձնահատուկ օրինաչափությունները, իրավունքի էությունում իրավական երկուսները ներկայացված են իրենց միասնությունում բոլոր հիմնական, էական, գլխավոր գծերով, այն դեպքում,

երբ առանձին իրավական երևույթներ բացի դրանից պարունակում են նաև ոչ հիմնական, ոչ էական, ոչ գլխավոր խմբերը, իրավունքի էությունում ներառվում են ինչ-որ ներքինը, խորքայինը, անհրաժեշտը, իսկ իրավունքի երևույթը հաճախ ներառում է արտաքինը, մակերեսայինը և նույնիսկ պատահականը, իրավունքի էությունը կայուն է, հանգիստ, հաստատուն, երևույթը առավել դինամիկ է, շարժուն, փոփոխական, էությունը ծառայում է իրավական երևույթների խտացված արտահայտումներին, իսկ վերջինները կարող են ուղղակի և անմիջականորեն հանդես գալ ինքներն իրենց:

Քանի որ իրավունքի արտահայտումները բազմանշանակ են, տարբեր, ապա դրանց կողմից նաև էության արտացոլումները պետք է համապատասխանի դրանց փաստացի նշանակությանը: Եթե իրավունքի նորմերում արտահայտվում է միայն էության մեկ կողմը, ապա օրինակ, իրավունքի ոլորտում կամ գործառույթի մեջ արտահայտվում է իրավունքի էության բավականին ընդարձակ կողմը, դրա էական հատվածը: Իրավունքի էության հետ անխզելիորեն կապված է նրա բովանդակությունը⁴⁷:

Սակայն, եթե իրավունքի էության վերաբերյալ հարցը ուսումնասիրվել է առավել պակաս ջանասիրաբար, ապա իրավունքի բովանդակության իմացությունը ձեռք էր բերվում դժվարությամբ: Ըստ երևույթին այդ իսկ պատճառով իրավաբանական գրականությունում ի հայտ եկան սկեպտիկ եզրակացություններ իրավունքի բովանդակության իմացության նպատակահարմարության վերաբերյալ⁴⁸:

Հետագա տարիներին գիտնականները, ովքեր ուսումնասիրում էին իրավունքի տեսությունը, բազմակի դիմել են իրավունքի բովանդակության ուսումնասիրության խնդրին, սակայն չեն հանգել դրա սահմանման մեջ միասնական եզրակացության⁴⁹:

Իրավունքի բովանդակության վերաբերյալ իրենց տեսանկյունն են արտահայտել Ս.Ս. Ալեքսեևը, Օ.Ս. Իոսիֆը, Լ.Ս. Յավիչը, Վ.Ա. Կուչինսկին, Բ.Վ. Շեյմդլինը և այլ հեղինակներ: Այս խնդրին դիմել են նաև իրավունքի բովանդակության ձևի հետազոտողները: Վերջին տարիների աշխատանքներից անհրաժեշտ է նշել Վ.Ա. Տոլստիկի և Ն.Ա. Տրուսովի «Իրավունքի բովանդակության համար պայքարը»

⁴⁷ Տե՛ս **Толстик В.А., Трусов Н.А.** Понятие содержания права //Государство о право. 2014, № 6, с. 5-13.

⁴⁸ Տե՛ս **Скурко Е.В.** Очерки теории права. М., 2013, с. 7-8.

⁴⁹ Տե՛ս **Кашкин С.Ю.** Основы интеграционного права. М., 2014, с. 119-120.

հետաքրքրական հետազոտությունը և նշված հոդվածը⁵⁰:

Ժամանակակից իրավաբանական գրականությունում իրավունքի բովանդակության խնդիրին հատկացվել է բավականին մեծ ուշադրություն:

Ս.Ս. Ալեքսեևը իրավունքի բովանդակության տակ ընկալում է իրավունքի նորմերը, անհատական հանձնարարականները, սանկցիաները, պաշտպանական միջոցները, իրավական փաստերը և իրավական իրականության այլ երևույթներ⁵¹:

Այս տեսակետին որոշակի ճշգրտմամբ հետևում է Վ.Ն. Կարտաշովը՝ միևնույն ժամանակ ավելացնելով իրավունքի սկզբունքները և իրավական սահմանումները⁵²:

Վ.Ա. Տոլստիկը և Ն.Ա. Տրուսովը համարում են, որ իրավունքի բովանդակության տակ անհրաժեշտ է հասկանալ իրավունքի նորմերը: Միևնույն ժամանակ իրավունքի նորմերը նրանք կապում են իրավաստեղծ սուբյեկտների կամքի և շահերի հետ⁵³:

Մեր կարծիքով, դիտարկելով իրավունքի բովանդակության խնդիրը, անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն վերջնական արդյունքում ենթադրվում է սոցիալ-տնտեսական և հասարակական զարգացման խորքային գործընթացներով՝ արտադրական հարաբերությունների տիպով, դասակարգային ուժերի բաշխմամբ (հակամարտություն, սոցիալական փոխզիջում և այլն), որոնք ստացել են արտացոլում իրավունքում տարատեսակ իրավական դրույթների ձևով:

Եթե առարկայի էության տակ ընկալվում է վերջինի բնույթը սահմանող առավելագույն կարևոր հատկությունները, ապա բովանդակության տակ ընկալվում է առարկայի էության կոնկրետ արտահայտումը, որը արտացոլվում է վերջինիս բոլոր տարրերում, փոխազդում միմյանց, ինչպես նաև շրջակա միջավայրի հետ (հասարակական պայմաններ, որոնցում գործում է իրավունքը): Իրավունքի բովանդակությունը որպես դրա էության կոնկրետացված հարստացում իրենում ներառում է գործընթացներ, որոնք կապված են հասարակական հարաբերությունների վրա դրա ազդեցությամբ:

Իրավունքի բովանդակությունում ներառվում է նաև դրա նորմերով նախատեսված մարդկանց հնարավոր և պատշաճ վարքագիծը: Պետության և իրավունքի ընդհանուր

⁵⁰ Տե՛ս **Толстик В. А., Трусов Н. А.** Борьба за содержания права. Н. Новгород. 2008.

⁵¹ Տե՛ս **Алексеев С. С.** Общая теория права. М., 2009. С. 74.

⁵² Տե՛ս **Карташов В. Н.** Теория правовой системы. Ярославль. 2005. С. 96.

⁵³ Տե՛ս **Толстик В. А., Трусов Н. А.** Понятие содержания права //Государство и право. 2014, № 6, с. 7-8.

տեսության չորս հատորանի դասընթացի հեղինակները որպես դրանից եզրակացություն ընդունում են, որ իրավունքի բովանդակությունը ներառվում է վերջինի կարգավորիչ գործառույթը՝ հասարակական հարաբերությունների վրա ազդեցությունը, որը իրականացվում է մարդկանց վարքագծի վրա ազդեցության ուղիով: Նույն տեղում նշվում է, որ իրավունքի բովանդակությունում պետք չէ ներառել բացարձակորեն բոլոր նյութական և գաղափարական հարաբերությունները, որոնք սահմանում են իրավունքի ծագումը և զարգացումը և փոխազդում դրա հետ:

Դ.Ա. Կերիմովը նաև նշում է իրավունքի բովանդակության որպես դրա էության կոնկրետացված հարստացվածի վերաբերյալ դրության ճշտությունը: Իրավունքի էության կոնկրետացումը իր բովանդակությունում, գրում է նա, կայանում է նրանում, որ պետական կամքը ստանում է հստակ և խիստ սահմանվածություն վարքագծային կոնկրետ իրավական կանոններում⁵⁴:

Եթե դիտարկվի իրավունքի բովանդակության խնդիրը ոչ միայն փիլիսոփայական դիրքորոշումներից, այլ նաև իրավաբանական տեսանկյունից, որը մոտեցնում է մեզ ոչ թե ընդհանրապես բովանդակությանը, այլ իրավական բովանդակությանը, ապա բխում է հետևյալ եզրակացությունը: Իրավունքի բովանդակության մեջ անհրաժեշտ է տարբերակել սոցիալական, պետական- կամային և բուն-իրավական պահեր: Նման կառուցվածքային վերլուծությունը անհրաժեշտ է «իրավունքի բովանդակություն» կատեգորիայի իմաստի առավել կոնկրետ բացահայտան համար: Այդ տարբերությունը օգնում է դիտարկել սոցիալական բովանդակության իրավականի մարմնավորման գործընթացը: Սոցիալականը ենթադրում է պետական-կամայինը, ինչը, իր հերթին, հանդիսանում է բուն-իրավական: Սոցիալական բովանդակությունում գլխավորում են տնտեսական և քաղաքական հարաբերությունները և շահերը, քանի որ հատկապես դրանք առաջին հերթին ուղղված են պետությանը և իրավունքին, հատկապես դրանց են անհրաժեշտ պետաիրավական աջակցությունը և իրականացման ձևը: Դրանք ստեղծում (ձևավորում) են իրավական պատճառը, որը համապատասխան պայմաններում ձևափոխվում է իրավունքի:

Այսպիսով, իրավունքի սոցիալական և պետական-կամային բովանդակությունը

⁵⁴ Ст' у Керимов Д. А. Методология права. М., 2008, с. 158.

ակնհատ է: Իրավական բովանդակությունը ի սկզբանե սոցիալական է, սակայն պետական-կամային գործընթացներով անցած և իրավական ակտում ամրագրված: Դա իրավունքի ձև չէ, այլ տնտեսական, քաղաքական և այլ շահեր, որոնք ձևափոխվում են պետական իրավաստեղծ մարմիններով ամբողջ հասարակության համար ընդհանուր պարտադիրի որակով: Վերը շարադրվածից հետևում է, որ իրավունքի բովանդակություն հանդիսանում են «նախկին» սոցիալական շահերը, որոնք հետագայում ստացել են իրավական նշանակություն: Սոցիալական (տնտեսական, քաղաքական, գաղափարական) բովանդակությունը բնութագրում է իրենով իրավունքի լիցքավորման գործընթացը, իսկ պետական-կամայինը՝ սոցիալական բովանդակության ձևափոխությունն է պետական կամքի միջոցով: Ցակացած սոցիալական երևույթ, ցանկացած սոցիալական շահ մաքուր ձևով չեն ստանում իրավական ամրագրում, իրավական ձևակերպում: Սոցիալական պահանջները, հարաբերությունները և հետաքրքրությունները անցնում են իրավունքի մեջ ձևափոխության գործընթաց պետական կամքի միջոցով, դառնում ընդհանուր պարտադիր օրենսդրի կամքի շնորհիվ: Այս փուլում սոցիալական բովանդակությունը վերածվում է պետական-կամայինի, ստանում իրավական ձև: Իրավական ձևի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն բովանդակության համար որոշիչ դեր չի խաղում: Այս իսկ պատճառով այնպիսի իրավական ձևերը, ինչպես պայմանագրերը, նորմաստեղծ ակտերը, գործնականում չեն փոփոխվում իրավունքի գործողության ամբողջ ընթացքում, իսկ իրավունքի բովանդակությունը կարող է սկզբունքային փոփոխվել:

Իրավունքի բուն-իրավական բովանդակությունը՝ իրավաբանորեն իրավունքի սուբյեկտի արժեքավոր շահեր, գործողություններ, արարքներ են, որոնք իրականացվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ կոնկրետ իրավահարաբերությունների շրջանակներում, դա վերջնական արդյունքում իրավունքի միջոցով ձևավորված սոցիալական բովանդակությունն է, այսինքն տնտեսական, քաղաքական և այլ շահեր, որոնք իրականացվում են իրավունքի սուբյեկտների կողմից որպես իրավական արժեքավորներ:

Հետևաբար, կարելի է կատարել եզրակացություն, որ իրավունքի էությունը

հանդիսանում է դրանում արտահայտված պետական (ժողովրդավարական հասարակությունում՝ հասարակության) կամքը, բովանդակությունը՝ իրավունքով ամրագրված սոցիալական շահերը:

2.2 Իրավունքի էական հատկանիշները

Իրավունքի սոցիալական նշանակության հասկացության և էության բացահայտումը անհնար է, քանի դեռ չի բացահայտվել նրա էական, հիմնային և ելակետային հատկանիշները, որոնց շնորհիվ այն տարբերվում է մյուս նորմատիվ կարգավորիչներից:

Իրավունքի նման առավել էական հատկանիշներին դասվում են 1) պետական-կամային բնույթը, 2) նորմատիվությունը, 3) իշխանական բնույթը, 4) ձևական որոշակիությունը: Իր հերթին իրավունքի հասկացության գլխավոր բաղադրիչներ ներկայացնող այդ հատկանիշներից յուրաքանչյուրի բովանդակությունը տարբերակվում է համալիր, բազմամակարդակ բնույթով, բարդ կառուցվածքով, ինչը ձևավորվում է իրավունքի տվյալ հիմնական հատկանիշը բացահայտող և կոնկրետացնող մի շարք առանձնահատուկ գծերից և հատկություններից:

Իրավունքի պետական-կամային բնույթը կայանում է նրանում, որ իրավունքը արտահայտում է հասարակության պետական կամքը, որը պայսանավորված է վերջինիս տնտեսական, մշակութային, ազգային, կրոնական, ժողովրդագրական և այլ պայմաններով:

Իրավունքը անհիմաստ է մարդկանց գիտակցված, կամային գործունեությունից դուրս: Իրավունքը միշտ հանդիսանում է կամք, սակայն ցանկացած կամք իրավունք չէ: Այսպես իրավունք չի հանդիսանում առանձին անհատի, այս կամ այն սոցիալական խմբերի, շերտերի, դասերի կամքը: Ինքնին իրավունք չի դառնում նաև քաղաքական կուսակցությունների և հասարակական միավորումների փաստաթղթերում արտահայտված կամքը:

Իրավունքի գիտակցական-կամային բնույթն արտահայտվում է նրանում, որ այն մարդկային գիտակցության միջոցով արտացոլում է այդ պահանջմունքները և շահերը, հասարակական օրինաչափությունները: Այդպիսով իրավունքը գիտակցված նորմերի

ամբողջություն է: Իրավունքը նաև մարդկանց կամքի դրսևորումն է, քանի որ դրանում սահմանվում է նրանց ապագա վարքագիծը, իրավունքի միջոցով կենսագործվում են սուբյեկտիվ շահերը, պահանջմունքները, նպատակները⁵⁵:

Իրավունքը հասարակության պետական կամքն է⁵⁶: Ոչ թե կառավարող դասի, այլ հատկապես հասարակության: Պետական կամքի նորմատիվային հասկացության նման մեկնաբանությունում նորը բխում է համամարդկային տեսանկյունից է իրավունքի իմացության անհրաժեշտության ընդունումից, դրա հասկացության բացահայտումից վերջինի միաժամանակ և ընդհանուր սոցիալական, և դասային հիմքերի համակցման հաշվառմամբ:

Իրականում, պետությունով «անցնում», կամ որ նույն բանն է, «օրենքի կարգավիճակ է ստանում», պետական, բոլոր մարդկանց համար պարտադիր է դառնում ոչ միայն իշխանական դասի, այլ նաև տվյալ հասարակության դասերի, շերտերի և այլ սոցիալական ձևավորումների շահերը և հավակնությունները արտահայտող կամքը: Ձգտելով առկա հակասությունների նվազեցման և հաղթահարմանը, տարբեր սոցիալական շերտերի միջև փոխզիջմանը, պետությունը հաշվի է առնում, շտկում և ընդհանրացնում հասարակության բարդ և հակասական կամքը՝ տալով դրան նոր հատկություններ և համընդհանուր արտահայտում պետական կամային արտահայտման ձևով: Կամքի այլ տարատեսակներից պետական կամքը տարբերվում է. առաջինը, նրանով, որ դրանում կենտրոնացվում են բնակչության տարբեր դասերի և խմբերի տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ հետաքրքրությունները և հավակնությունները, երկրորդը, այն, լինելով անկախ առանձին անձանց և միավորումների կամքից՝ պարտադիր է ամբողջ հասարակության համար, երրորդը, այն օբյեկտացվում է պետությունից բխող և դրա կողմից պահպանվող ընդհանուր պարտադիր դրույթներում, վարքագծի կանոններում, որոնք անվանվում են իրավական կամ իրավաբանական նորմեր, հանդիսանում են մարդկանց միջև հարաբերությունների տարատեսակ իշխանական-պաշտոնական կարգավորիչներ:

⁵⁵ Վաղարշյան Արթուր, Պետության և իրավունքի տեսություն -2: Դասախոսություն: Երևան, 2011, էջ19:

⁵⁶ Ст' у Дробышевский С.А. Политическая организация общества и право как явления социальной эволюции. М., 2015, с. 15-16.

Հատկապես հասարակության նման պետական կամքը, որը մարմնավորված է իրավական նորմերում, հանդիսանում է հենց իրավունքը:

Իրավունքի էությունը և բովանդակությունը սահմանվում է ոչ միայն տվյալ հասարակության տնտեսական կառուցվածքով, այլ նաև քաղաքականությամբ, բարոյականությամբ, իրավագիտակցությամբ, գիտությամբ, մշակույթով, կրոնով և սոցիալական կյանքի այլ բոլոր իրականություններով, որոնք ձեռք են բերվել քաղաքակրթության մակարդակով:

Հատուկ ուշադրության է արժանի այնպիսի համամարդկային գործոնը, որը արդեն մի քանի հարյուրամյակ ունի հզոր ազդեցություն իրավունքի ձևավորման և զարգացման վրա, ինչպես մարդու բնական, ի ծնե, անօտարելի իրավունքի վերաբերյալ ուսմունքն է, որը պետք է ընկած լինի տվյալ պետությունում գործող պոզիտիվ, պաշտոնական իրավունքի հիմքում: Միայն այս դեպքում, համաձայն բնական-իրավական ուսմունքի (Հ. Գրոցիոս, Բ. Սպինոզա, Թ. Հոբբս, Զ Լոկ, Ս. Պուֆենդորֆ, Ֆ. Վոլտեր, Շ. Մոնտեսքյո, Ժ-Ժ. Ռուսո, Ա.Ն. Ռադիշև և ուրիշներ), վերջինս ընդունվում է մարդկային գիտակցությանը, բնույթին համապատասխանող, և այդ իսկ պատճառով որպես մարդասիրական և արդարացի:

Նանից հետո, երբ բնական-իրավական տեսության կողմից հռչակված օրենքները, որոնք սինթեզում են իրավագիտակցության և բարոյականության սկզբունքների և գաղափարների վերաբերյալ համամարդկային պատկերացումները, առաջին անգամ ստացան պետական կամքի որակով արտահայտում ֆրանսիական հեղափոխության հիասքանչ փաստաթղթերից մեկում՝ Մարդու և քաղաքացու ազատությունների հռչակագրում (1789թ), դրանք անցան բարդ և երկար ճանապարհ, որը նշանավորվեց ՄԱԿ-ում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948թ) միջազգային-իրավական ընդունմամբ և անձի իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային և ներպետական փաստաթղթերում դրանց հետագա զարգացմամբ⁵⁷: Հարցը՝ համապատասխանում կամ չի համապատասխանում այս կամ այն պետության իրավունքը մարդու և քաղաքացու բնածին, հիմնարարական իրավունքների և ազատությունների ընդունման և

⁵⁷ Մանրամասն տե՛ս **Ковалев А.А.** Международная защита прав человека. М., 2013, с. 62-146.

պաշտպանության գաղափարներին՝ դարձավ տվյալ պետության և իրավունքի դեմոկրատական կամ ամբողջատիրական բնույթի սահմանման միջազգային ընդունված չափորոշիչ:

Խորհրդային անցյալում երկարատև տասնամյակների ընթացքում բնական-իրավական տեսությունը մյուսներին, այսպես կոչված «գաղափարական, բուրժուական» ուսմունքներին զուգահեռ դոգմատիկ դիտարկվում էր որպես պաշտոնական գաղափարախոսության հետ անհամատեղելի, իրավագիտությունում գերակայում էր բնական և պոզիտիվ իրավունքների անհիմն հակադրումը:

Բնական-իրավական տեսության գաղափարների ազդեցությունը ժամանակակից ազգային իրավունքի զարգացման վրա ստացավ պաշտոնական ընդունում և արտահայտում ՀՀ Սահմանադրությունում: Այս առումով, անհրաժեշտ է ընդգծել, որ 2015 թվականի ՀՀ փոփոխված Սահմանադրությունում առավել լիարժեքորեն ամրագրում ստացան մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև սոցիալ - տնտեսական ոլորտի իրավունքներն ու ազատությունները: Այս առումով նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների գործընթացի կարևորագույն խնդիրներից էր՝ իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերի կատարելագործումը:

Այս կապակցությամբ արձանագրենք, որ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական կարգավորման հետ կապված հարցերը ստացան ամբողջական ու լիարժեք լուծում՝ 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված բարեփոխված ՀՀ Սահմանադրությունում:

ՀՀ բարեփոխված Սահմանադրությունն՝ իր դրույթներով և իրավական լուծումներով պետք է նպատակաուղղված լինի այնպիսի սոցիալական միջավայրի ձևավորմանը, որն անհրաժեշտ է հասարակության բնականոն զարգացման ապահովմանը, մարդու իրավունքների և սոցիալական ապահովվածության երաշխավորված պաշտպանությունը:

Դրա հետ անմիջականորեն կապված է ազգային իրավունքի բարոյական հիմքերի խորացման, ժողովրդավարական հասարակության իրավունքի և բարոյականության

մերձեցման, դրանց միջև ծագող հակասությունների հնարավոր հաղթահարման ներկայիս գործընթացը: Համապատասխանաբար նոր պահերից մեկը, որը բնութագրում է իրավունքին նորմատիվային մոտեցումը, կայանում է իրավունքի բնական դպրոցի գաղափարներից նախկինում գոյություն ունեցող հեռացման լիարժեք հաղթահարման ձգտման մեջ, վերջինս ապահովում է բնական և պոզիտիվ իրավունքի միասնությունը տեսությունում և գործնականում:

Այսպիսով, նրանում, որ իրավունքը՝ հասարակության պետական կամքն է իր զարգացման տվյալ փուլում, որը պայմանավորված է իր գոյության տնտեսական, քաղաքական, հոգևոր և այլ պայմաններով, կայանում է իրավունքի համամարդկային և դասակարգային էությունը: Դրա անմիջական արտահայտում հանդիսանում է իրավունքի պետական-կամային բնույթի արտահայտումը: Իրավունքի այդ հատկանիշի վերլուծությունը անքակտելի կապված է դրա կարևոր այլ հատկանիշի՝ նորմատիվության դիտարկման հետ:

Իրավունքի նորմատիվային բնույթը կայանում է նրանում, որ իրավունքը որպես հասարակության պետական կամք արտահայտվում է իրական կյանքում տվյալ պետությունում պաշտոնապես ընդունվող և գործող իրավաբանական նորմաների համակարգը իրենց նյութական հասկացությունում:

Իրավագիտությունում նորմերի այդ համակարգը ընդունված է անվանել իրավունք օբյեկտիվ իմաստով, նկատի ունենալով, որ այն, հանդիսանալով հասարակության պետական կամքը, կախված չէ առանձին անհատների կամքից և հարմարացված չէ որևէ կոնկրետ սուբյեկտի: Դրանով իսկ օբյեկտիվ իրավունքը (նորմերի համակարգը) տարբերվում է իրավունքից սուբյեկտիվային իմաստով (սուբյեկտիվ իրավունք) որպես իրավահարաբերության այս կամ այն մասնակցի (սուբյեկտի) իրավունք (լիազորություններ):

Իրավունքի նորմատիվային հատկանիշը հնարավորություն է տալիս բացատրել իրավունքի էության, բովանդակության և ձևի հարաբերակցությունը:

Դա բարդ, տարբեր հեղինակների, այսինքն իրավունքի նորմատիվային հասկացության համախոհների կողմից տարբեր կերպ մեկնաբանվող հարց է: Հեղինակներից ոմանք միահյուսում են իրավունքի բովանդակությունը դրա էության,

մյուսները՝ դրա ձևի հետ⁵⁸:

Այս հարցի ճիշտ լուծում կարելի է գտնել՝ դիտարկելով վերջինիս պետական-կամային և նորմատիվային հատկանիշների տեսանկյունից: Եթե իրավունքի էությունը, այսինքն տվյալ երևույթում գլխավորը, կայունը, օրինաչափը կայանում է նրանում, որ այն հանդիսանում է ամբողջ իրական կյանքով պայմանավորված հասարակության պետական կամքը, ապա դրա բովանդակությունը կազմում է այդ կամքի նորմատիվային արտահայտումը՝ պետությունից բխող ընդհանուր պարտադիր դրույթների, վարքագծի կանոնների համակարգ, որոնք իրենցից ներկայացնում են սոցիալական նորմաների առանձահատուկ տարբերակ: Այլ կերպ, քան իշխանության կողմից ընդհանուր պարտադիր նորմերի հրապարակման կամ սանկցիավորման ուղիով, անհնարին է ներկայանում վերածել հասարակական կամքը օրենքի, արտահայտել այն որպես պետական: Դրանով իսկ իրավունքի բովանդակությունը հսկում է տվյալ հասարակության իրավունքի էությունը այն կազմող իրավական նորմաների ամբողջ բազմաձևությունում⁵⁹:

Առանձին վերցված նորմը ելակետային կառուցվածքային տարր է, առաջնային բջջային իրավունքը:

Իրավունքի նորմերը տարբերվում են այլ սոցիալական նորմերից (սովորույթներ, բարոյականության, հասարակական միավորումների նորմաներ և այլն) միայն իրեն բնորոշ առնձնահատկությունների, գծերի շարքով, պետության հետ կապ, պետական հարկադրությամբ խախտումներից պաշտպանություն, ընդհանուր պարտադիրություն, պաշտոնական որոշակիություն, ինստիտուցիոնալություն, հասարակական հարաբերությունների պաշտոնական կարգավորիչի որակ:

Պետության հետ իրավունքի նորմերի կապը կայանում է նրանում, որ դրանք ի տարբերություն այլ սոցիալական նորմերի, հրատարակվում կամ սանկցիավորվում են պետության կողմից, և պահպանվում ոչ միայն դաստիարակությամբ և համոզմամբ, որը բնորոշ է նաև այլ սոցիալական նորմերին, այլ նաև, երբ դա անհրաժեշտ է, հարկադրական իրավական սանկցիայի կիրառությամբ:

Իրավագիտությունում, ինչպես հայտնի է, արդարացի քննադատության է

⁵⁸ Տե՛ս, օրինակ **Пернацкий В.И.** Философия политики и права. М., 2013, с. 13-14.

⁵⁹ Տե՛ս **Захарцев С.И.** Некоторые проблемы теории и философии права. М., 2014, с. 45-46.

արժանացել անցյալի սխալների որակով, Վիշինսկու անվան հետ կապված, ձևակերպումը, որը հանգեցնում է իրավունքը հարկադրության միջոցներին, դրա բոլոր կիրառությունները «ապահովվում են պետության հարկադրական ուժով»: Նման արտահայտությունները անհաջող, ոչ հստակ են, անընդունելի, քանի որ քաղաքացիների մեծամասնությունը, չնայած երկրում սոցիալ-տնտեսական դժվարություններին և բարդ քրեական իրավիճակին, ինքնական և գիտակցաբար համապատասխանեցնում են իրենց վարքագիծը իրավունքի նորմերին: Սակայն, ի տարբերություն բարոյականության, կորպորատիվ և այլ սոցիալական նորմերին, որոնց կատարման համար հարկադրության միջոցներ են հանդիսանում հասարակական ազդեցության տարբեր միջոցները, իրավունքի հետևում միշտ «կանգնած» է պետական ապարատը, որը իրավական նորմերի խախտման ժամանակ ունակ է հարկադրել դրանց պահպանությանը: Հետևաբար, «ոչ թե պետության հարկադրական ուժով իրավունքի ապահովման», այլ որպես իրավական նորմերի իրականացման, խախտումներից պաշտպանության երաշխիքի պետական հարկադրության հնարավորությունում է կայանում իրավունքի կարևորագույն առանձնահատկություններից մեկը:

Շարադրվածի հետ ուղղակի կապված է իրավունքի այլ կարևորագույն գիծը՝ պարտադիրությունն է: Դա պետական ինքնիշխանության հետևանք և արտահայտում է: Իրավական նորմերի բոլոր այլ տարատեսակություններ (բարոյականություն, կորպորատիվություն, կրոնականություն և այլն) պարտադիր են բնակչության այս կամ այն հատվածի համար: Եվ միայն իրավունքը՝ նորմերի համակարգը, պարտադիր է բոլորի համար: Դրանով իսկ իրավունքին առանձնացվում է հասարակության ամբողջ իրավական համակարգի օրինականության և իրավակարգի նորմատիվային հիմքերի դերը:

Իրավունքի այլ անբաժանելի գիծը՝ պաշտոնական սահմանվածությունն է, այսինքն նորմերի ճշտություն, հստակություն, ծավալություն, կայունություն, որին մասնավորապես նպաստում են դրանց այնպիսի ներքին հատկություններ, ինչպես իրավական նորմերի առանձնահատուկ կառուցվածքը և դրանց արտաքին ձևավորման իրավաբանական տեխնիկան:

Իրավունքի առանձնահատուկ կարևոր հատկություն, որը վերջինիս հաղորդում է պաշտոնական սահմանվածություն, հանդիսանում է վերջինիս ինստիտուցիոնալությունը, այն ըստ իր նշանակության կարող է դիտարկվել նաև որպես իրավունքի իր նորմատիվային հատկանիշից բխող ինքնուրույն, տարբերակիչ առանձնահատկություն, որպես ձևական որոշակիություն:

Իրավունքի որոշակիությունը (ինստիտուցիոնալությունը) բնութագրվում է երկու կողմերով: Առաջինը կայանում է նրանում, որ ի տարբերություն բարոյականությունից, իրավագիտակցությունից և հասարակական գիտակցման այլ ձևերից իրավունքը դասվում է կառուցվածքի ինստիտուցիոնալ «հարկին»: Դրա համակարգը (ներքին կառուցվածքը) իրենից ներկայացնում է իրավական հաստատությունների, ինստիտուցիոնալ ձևավորումների համախումբ, որոնց դասվում է իրավունքի նորմը իրավական ինստիտուտները, իրավունքի ոլորտները (և ենթաոլորտները):

Իրավունքի որոշակիությունը երկրորդ կողմը կայանում է նրանում, որ այն ձևավորող նորմերը հրատարակվում կամ սանկցիավորվում են պետության կողմից խիստ որոշակի ձևերով, օրինական համակարգերում, որոնցից են հանդիսանում տարբեր իրավաբանական աղբյուրները, և ամենից առաջ օրենքները:

Իրավունքի ձևի (աղբյուրի) տակ ընկալվում է հասարակության պետական կամքի արտահայտման որոշակի եղանակները (միջոցները): Ձևը ցույց է տալիս, թե ինչպիսիք են իրավունքի արտաքին արտահայտումները, ինչ ձևով է այն առկա և գործում իրական կյանքում: Ձևի միջոցով տեղի է ունենում պետական կամքին հասանելի և համընդհանուր բնույթի հաղորդում, այդ կամքի պաշտոնական իրականացում: Ձևի միջոցով իրավունքը կարծես ստանում է «կյանքի ուղեգիր», ձեռք բերում իրավաբանական ուժ:

Իրավունքի արտահայտման ձևերի ձևավորված տարատեսակությունների աղբյուրներին (իրավունքի աղբյուրներ իրավաբանական իմաստով) դասվում են իրավական ավանդույթը, դատական նախադեպը, նորմատիվային բովանդակությամբ պայմանագրերը, նորմատիվ ակտը: Իրավունքի թվարկված նորմերը պետք է դիտարկվեն համապատասխան իրավական համակարգում իրավունքի այս կամ այն տեսակի գոյության և զարգացման կոնկրետ պայմանների հաշվարկով:

Ազգային իրավունքի արտահայտման հիմնական, առավել տարածված ձև հանդիսանում են նորմատիվային-իրավական ակտերը, որոնց շարքում առաջատար տեղը պատկանում է օրենքին:

ՀՀ Սահմանադրությանը համապատասխան օրենքը՝ Ազգային ժողովի կողմից ընդունված նորմատիվ ակտն է, որը հրապարակվում է խիստ որոշակի գործընթացի միջոցով առավել կարևոր հասարակական հարաբերությունների կարգավորման համար և տիրապետում է բարձրագույն իրավաբանական ուժով: Օրենքների և կանոնակարգային նորմատիվային ակտերին զուգահեռ ազգային իրավունքի արտահայտման ձևեր հանդիսանում են նորմատիվային բովանդակությամբ իրավական ավանդույթները և պայմանագրերը և իրավունքի այլ աղբյուրները: Այսպիսով, իրավական նորմը և օրենքը, ինչպես նաև իրավունքի ցանկացած այլ իրավաբանական աղբյուր, հարաբերակցվում են միմիյանց հետ որպես իրավունքի բովանդակություն և ձև:

Իրավունքի բովանդակության և ձևի առանձին դիտարկումը տրամաբանորեն թույլատրելի է միայն գիտական արստրակցման կարգով: Իրականում դրանք, ինչպես ճիշտ նկատում է Ա.Ֆ. Շեբանովը, «միմիյանցից զատ գոյություն չունեն, իրավունքի անձև բովանդակությունը նույնքան անհիմաստ է, ինչպես նաև դրա բովանդակությունից զուրկ ձևը: Իրավունքի բովանդակությունը առկա է միայն այնքանով, որքանով այն ձևակերպված է, միայն որոշակի ձևի հետ միասնությունում գոյություն ունի տվյալ իրավունքի կոնկրետ բովանդակությունը: Այդ իսկ պատճառով խորապես սխալ կլիներ կարծել, որ իրավունքի ձևը... հանդիսանում է իրավական բովանդակության պարզագույն թաղանթ»: Իրականում իրավունքի ձևը՝ դա իրավունքի բովանդակության «գոյության ձև» է, «դրա կազմակերպման, դրան որոշափության, օբյեկտիվության տրման միջոց»⁶⁰: Հատկապես իրավունքի բովանդակության և ձևի միասնությունից բխում է դրա նորմատիվային ընկալումը:

Իհարկե, չի կարելի հաշվի չառնել, որ ոչ ցանկացած իրավունք, որը դուրս է եկել այս կամ այն պետական գրասենյակից կամ առավել ևս «դարձված օրենք», համարժեք արտահայտում է հասարակության պատական կամք: Ակնհայտ է, որ իրավունքի

⁶⁰ **Шебанов А. Ф.** Форма советского права. М., 1968. С. 24-25.

համար այդ պարտադիր պահանջին չեն համապատասխանում վարչական նորմատիվային ակտերում (օրինակ, կապի, հաղորդակցության ուղիների, քաղաքացիական օդազնացության, մաքսային ծառայությունների, առևտրի և այլ մարմինների) դժբախտաբար հաճախ հանդիպող այսպիսի նորմերը, որոնցում թույլատրվում է քաղաքացիների ազատությունների և իրավունքների, նրանց արժանապատվության, նյութական, բարոյական-մշակութային հետաքրքրությունների ոտնահարում, գերակայում են եսասիրական նեղ վարչական շահերը:

Դրա հետ կապված իրավունքի տեսությունում հասունացել է իրավունքին որպես հասարակության պատական կամքին ՀՀ Սահմանադրության հիման վրա օրենքներում, կանոնակարգային նորմատիվային ակտերում և այլ իրավաբանական աղբյուրներում պարունակվող առանձին նորմերի համապատասխանության հստակ գիտական չափորոշիչների մշակման անհրաժեշտությունը:

Ինչպես նշում է Վ.Մ. Բարանովը, իրավունքի նորմի արդարացիությունը արտահայտում է «մարդկային առաջընթաց գործունեության զարգացման տեսակը, մակարդակը կամ տարրը արտացոլելու իմացական-գնահատումային կերպարի տեսքով դրա բովանդակության և ձևի պիտանելիության աստիճանը», որը ստուգվում է գործնականով: Դրան ի հակադրություն, փիլիսոփայական և հատուկ-իրավաբանական իմաստներով կեղծ հանդիսանում է, ըստ նրա կարծիքի, իրավական նորմը «օբյեկտիվորեն պարունակում է համազգային, համապետական շահերի կարգավորվող գործունեության առաջընթաց-դրական զարգացում»⁶¹:

Իրավունքին համապատասխանող հանդիսանում են միայն արդարացի նորմերը: Ինչ վերաբերվում է հասարակության պետական կամքին, բնական օրենքներին որպես պոզիտիվ իրավունքի բարոյական հիմքերին (բարոյա-էթնիկ սկզբունքներին) չհամապատասխանող նորմերին, նորմերին, որոնք խախտում են քաղաքացիների ազատությունները և իրավունքները, և դրանով կամ որևէ այլ կերպ հակասում ՀՀ Սահմանադրությանը, ապա դրանք կեղծ նորմեր են, որոնք չպետք է կիրառվեն և օրենքով հաստատված կարգով պետք է ենթարկվեն փոփոխության կամ անվավեր համարվել:

⁶¹ **Баранов В.М.** Истинность норм советского права. Проблемы теории и практики. Саратов, 1989, с. 231,245.

Անհրաժեշտ է նշել, որ հասարակության պետական կամքին առանձին նորմերի համապատասխանության գնահատման վերը առաջարկած չափորոշիչները վերաբերվում են միաժամանակ ինչպես իրավունքի բովանդակությանը, այնպես էլ, ձևին:

Շարադրվածից տեսանելի է, որ ազգային իրավունքի բովանդակության և ձևի հստակ տարբերությանը զուգահեռ իրավունքի օրենքի նորմերի նորմատիվային հատկանիշը ընդգծում է դրանց միասնությունը և մեկ կարգայնությունը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, օրինականությանը և իրավակարգի ամրապնդումը, հասարակության և պետության առջև ծառայած խնդիրների լուծման իրավական ապահովվածությանը ուղղվածությունը:

Դրա հետ կապված է որպես հասարակական հարաբերությունների հատուկ կարգավորիչի իրավունքի դերի վերաբերյալ հարցը, առանց որի բացահայտման չեն կարող բավարար լիարժեք պատկերացումներ ստացվել այլ սոցիալական կարգավորիչների հետ համեմատությունում իրավունքի և դրա առանձնահատկությունների վերաբերյալ:

Իրավունքի իշխանական-կարգավորիչ բնույթը բացահայտում է դրա որպես հասարակական հարաբերությունների պետական կարգավորիչի սոցիալական նշանակության առանձնահատկությունը:

Լինելով, ինչպես բոլոր սոցիալական նորմերը, մի կողմից, օբյեկտիվ աշխարհի արտացոլման, դրա վերաբերյալ տեղեկության ընդհանրացան արդյունք, մյուս կողմից՝ դրա վրա հակադարձ ազդեցության արդյունք, մարդկանց միջև հարաբերությունների սոցիալական կարգավորիչ, իրավունքի նորմերը նաև այս որակով ունեն էական առանահատկություններ: Դրանց էությունը նրանում է, իրավական նորմը, ինչպես և իրավունքը հասարակական հարաբերությունների ոչ թե ուղղակի սոցիալական, այլ հատուկ պետական կարգավորիչ է: Այս հատկանիշը, առաջինը, կուտակում է վերը նշված պետության հետ իրավունքի անքակտելի կապը: Ինչպես իրավունքի ստեղծումը, այնպես էլ դրա իրականացումը, հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ դրա ակտիվ դերը գտնվում է պետական իշխանությունից ուղիղ կախման մեջ, զուգակցված են պետական մեխանիզմների գործման և դրա գործունեության

իրավական մեխանիզմների, բոլորի կողմից իրավական նորմերի հստակ և անշեղ կատարման պետական հսկողության հետ⁶²:

Երկրորդը, տվյալ հատկանիշը արտահայտվում է նրանում, որ իրավունքը միշտ կարգավորում է մարդկանց միջև հարաբերությունները դրանում մարմնավորված հասարակության պետական կամքին համապատասխան: Այդ իսկ պատճառով, այլ սոցիալական կարգավորիչներին ի տարբերություն, որոնցից յուրաքանչյուրը այս կամ այն հասարակությունում կարող է արտահայտվել ոչ միանման նորմատիվային համակարգերում (օրինակ, տարբեր կրոններին և դրանց ուղղություններին դասվող տարբեր դասերի և բնակչության այլ շերտերի սովորույթներ կամ բարոյականություն), տվյալ հասարակության իրավունքը կարող է լինել միայն մեկը, միասնականը և միատիպ պետության հետ: Դրան համապատասխան իրավունքը՝ պետության քաղաքականության կյանքի կոչման հզոր, արդյունավետ գործիք է, դրա բազմակողմ գործունեության ապահովման և կազմակերպման, դրա գործառույթների և խնդիրների իրականացման յուրահատուկ միջոց (ձև):

Երրորդը, իրավունքը միակ նորմատիվային համակարգն է, որի կարգավորիչ ազդեցությունը մարդկանց փոխհարաբերությունների վրա հանգեցնում է դրանց մասնակիցների համար որոշակի իրավաբանական հետևանքների:

Իրավունքի կարգավորիչ դերի առանձնահատկությունը կապված է դրա վարքագծի կանոնների մեծամասնության ներկայացուցչական-պարտադիր բնույթի հետ: Դրա էությունը նրանում է, որ այդ կարգավորիչ նորմերը, անմիջական կարգավորման նորմերը, հաստատում են (համապատասխան պայմանների առկայության դեպքում) պետության կողմից երաշխավորվող և պաշտպանվող հասարակական հարաբերությունների մասնակիցների հնարավոր և պարտադիր վարքագիծը, նրանց փոխադարձ իրավունքները և իրավաբանական պարտավորությունները: Դրանով իսկ իրավունքով կառավարվող փաստացի, կենսական հարաբերություններին տրվում է իրավական հարաբերությունների բնույթ, այսինքն հասարակական հարաբերություններին, որոնց մասնակիցներ (սուբյեկտներ) հանդիսանում են իրավունքի նորմերում նախատեսված իրավունքների և

⁶² См. в Правовые модели и реальность. Отв. ред. Ю.А. Тихомиров, Е.Е. Рафалюк, Н.И. Хлуденева. М., 2014, с. 8-9.

պարտականությունների կրողները:

Իրավահարաբերությունները՝ գիտակցված, կամային հարաբերությունների առանձնահատուկ տեսակ է, քանի որ նախքան իրավականի որակով ձևավորվելը, այն պետք է անցնի ոչ թե ուղղակի առանձին անձանց կամքով, չնայած դեպքերի մեծամասնությունում նաև դա է առկա, այլ նաև անպայման հասարակության պետական կամքով, և նախատեսված լինի իրավունքի նորմում:

Իրավունքի իշխանական-կարգավորիչ հատկանիշի վերլուծությունը հանգեցնում է ոչ միայն հասարակական որպես հարաբերությունների իրավական կարգավորման արդյունքի իրավահարաբերությունների խնդրին, իրավունքի գործնական իրականացման գլխավոր դաշտին, դրա իրական գոյությանը, այլ նաև իրավաստեղծման, իրավունքի իրականացման այլ ձևերի կիրառության, իրավական կարգավորման մեխանիզմի խնդրին, որոնք արտացոլում են իրավունքի բազմակողմանի անմիջական կապերը իրավական այլ երևույթների հետ:

Չորրորդ, իրավունքի կարգավորիչ ազդեցության ելակետային պահը, որը արքսիոմատիկ է մասնագետ իրավաբանի համար, կայանում է նրանում, որ դրա համապատասխան նորմերը, ի տարբերություն անհատական իրավական վերագրումներից (իրավունքի ակտերի կիրառությունից), հաշվառված չեն որևէ կոնկրետ հանգամանքների (կամ փաստերի) և դրանց հետ կապված անհատական կոնկրետ հարաբերություններին, այլ հանգամանքների (փաստերի) որոշակի ձևի և հասարակական հարաբերությունների որոշակի ձևերին համապատասխանաբար: Այդ իսկ պատճառով իրավական նորմը, ըստ իր բանական-կամային բովանդակությամբ իրենից ներկայացնում է կոնկրետ հարաբերության իդեալական արտահայտում իր արստրակտ նմուշ մոդելում⁶³: Հատկապես ընդհանուր բնույթի իրավաբանական նորմերի և իրավունքի այս առանձնահատկությունը դրանց ընդհանուր պարտադիրության հետ համակցությամբ հնարավորություն է տալիս դրանց, կիրառական տարբեր անձանց նկատմամբ, լինել հավասարաչափ, միանման մասշտաբներով հնարավոր և անհրաժեշտ վարքագծի, հարաբերությունների կարգավորման և զարգացման մոդել, որոնց իրավական կարգավորման մեջ

⁶³ Ст'ю Правовые модели и реальность, М., с. 16-17.

հետաքրքրված են պետությունը և հասարակությունը: Դրանով իսկ՝ և հատկապես դա խիստ կարևոր է իրավունքի որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի բնութագրման համար, այն հանդիսանում է իրավաչափ և անիրավաչափ, օրինական և անօրինական վարքագծի միակ պաշտոնական սահմանողի և չափորոշիչի որակով:

Իրավունքի տվյալ առանձնահատկությունը նշանակալից է նաև նրանով, որ դրանով գիտագործնական ամրագրվում է դեռ Կանտի և Հեգելի մոտ սկիզբ առնող և միաժամանակ բավականին ժամանակակից իրավունքի որպես ազատ կամքի գոյության, որպես ազատության չափանիշի առկայության փիլիսոփայական մեկնաբանությունները⁶⁴: Սակայն այդ գաղափարի առաջընթաց, դեմոկրատական բնույթը, որը հարստացնում է մեր պատկերացումները իրավունքի վերաբերյալ, կարող է առարկայական բացահայտվել և ունենալ գործնական նշանակություն ներկայումս միայն դիտարկվող «ազատության չափանիշի» օբյեկտիվ չափորոշիչների բացահայտման պայմանի դեպքում, որոնք բացառում են վերջինիս բացատրություններում սուբյեկտիվային-կամային մոտեցումը:

Հատկապես իրավունքի որպես ազատության չափանիշի նման օբյեկտիվային չափորոշիչներ են հանդիսանում դրա կողմից ամրագրված մարդկանց ուղիղ վարքագծի ապահովման և անօրինաչափի կանխարգելման օպերատորները, հատուկ իրարաբանական եղանակները, միջոցները, սուբյեկտիվային իրավունքները (իրավասությունները) և իրավաբանական պարտականությունները, արգելանքները, կանխարգելումները, սանկցահիները և այլն: Հաստատելով իրավունքները (օրինակ, հիմնական սահմանադրական իրավունքները և ազատությունները), դեմոկրատական սկզբունքները (օրինակ, «այն ամենը, ինչ արգելված չէ, թույլատրելի է»)՝ իրավունքը միաժամանակ ամրագրում է դրանց իրականացման համար անհրաժեշտ սահմանափակումները (օրինակի համար, «քաղաքացու և անձի իրավունքների և ազատությունների իրականացումը չպետք է խախտի այլ անձանց իրավունքները և ազատությունները»), պարտականությունները (օրինակ, ՀՀ Սահմանադրության և օրենքների համընդհանուր պահպանում), արգելքները (օրինակ, հանցագործության

⁶⁴ Տե՛ս **Нерсесянц В.С.** Общая теория права и государства. М., 2014, с. 69-70.

կատարումը, արգելված ՀՀ քրեական օրենսգրքով):

Այս բոլոր եղանակները, միջոցները միասնականությունում և փոխկապվածությունում, սահմանելով օրինաչափ և անօրինաչափ վարքագծի պարամետրերը, միաժամանակ կոնկրետ բովանդակությամբ են լիցքավորում իրավունքի որպես ազատության չափի, ազատ կամքի սահմանափակման հետ ձևավորվող և մարդու ու քաղաքացու ազատ վարքագծի վերաբերյալ մեր պատկերացումներ:

Հայտնի է, որ իրավական նորմը ունակ է կարգավորել մարդկանց միջև միայն այնպիսի հարաբերություններ, որոնք արտահայտվում կամ կարող են արտահայտվել նրանց կամային վարքագծի ակտերում: Իրավաբանական նորմով կարգավորվող մասնակցի (իրավունքի սուբյեկտի) կամ անձի ցանկացած կամային արարք ենթադրում է որոշակի հոգեբանական ընտրական ակտ, որոշման գիտակցական ընտրություն վարքագծի հնարավոր և ընդունելի տարբերակների նկատմամբ, գործել այսպես, և ոչ այլ կերպ:

Համապատասխանաբար իրավունքը որպես նորմերի համակարգ կոչված է կողմնորոշել մարդկանց վարքագիծը օբյեկտիվ հնարավոր և ընդունելի տարբերակների նկատմամբ այնպես, որ նրանց իրական վարքագիծը համապատասխանի իրավունքում արտահայտված հասարակության պետական կամքին:

Եթե մարդը իրեն պահում է իրավունքին համապատասխան, նա գործում է իրավաչափ և ազատ: Հասարակական հարաբերությունների մասնակիցների իրավաչափ վարքագծի սահմաններում իրավական տարածությունը որպես իրավունքով միջորդված մարդու և քաղաքացու անձնական իրավաբանական ազատության ոլորտն է: Եվ, հակառակը, եթե անձը դուրս է գալիս իրավաչափ վարքագծի սահմաններից, գիտակցաբար խախտում է իրավական սահմանափակումները, պարտականությունները, արգելանքները, կատարում հանցագործություն կամ այլ իրավախախտումներ, նրա համար վրա են հասնում անցանկալի նյութական, ֆիզիկական, հոգեբանական բնույթի հետևանքներ, որոնք նախատեսված են իրավունքի համապատասխան նորմերով (իրավաբանական պատասխանատվություն): Դրանով իսկ իրավունքը հանդես է գալիս որպես

իրավաբանական ազատության չափորոշիչ, իրավաչափ, օրինական վարքագծի նմուշ, որի սահմաններում անձը ազատ է:

Այսպիսով, իրավունքի որպես ազատության չափանիշի վերաբերյալ արևմտաեվրոպական փոփոխական պատկերացումը, եթե այն թարգմանվի իրավագիտության և գործնականի լեզվով, լիցքավորվի կոնկրետ իրավաբանական բովանդակությամբ, համընկնում է դրա իրավաչափ և անիրավաչափ, օրինական և անօրինական վարքագծի սահմանման բնութագրության հետ, որը հանդիսանում է իրավունքի պետական-կարգավորման հատանիշների անբաժանելի կողմերից մեկը:

Իրավունքի իշխանական-կարգավորիչ բնույթը պետական-կամային և նորմատիվային հատկանիշների հետ սերտ կապվածությունում տալիս է, թե ինչու է հատկապես իրավունքը հանդիսանում հասարակական հարաբերությունների առավել արդյունավետ, ընդհանուր ընդգրկող կարգավորիչը հարցի վերաբերյալ համոզիչ պատասխան: Իհարկե իրականության վրա իրավունքի ազդեցության հնարավորությունները անսահմանափակ են, դրանց գերազանցման, բացարձակացման ցանկացած փորձեր հանգեցնում են կամայականությունների:

Այսպիսով, պետական-կամային հատկանիշը արտահայտում է իրավունքի համամարդկային և դասակարգային էությունը: Նորմատիվային հատկանիշը բացահայտում է իրավունքի բովանդակությունը և ձևը, դրանց փոխհարաբերությունը: Իշխանական-կարգավորման հատկանիշը բնութագրում է իրավունքը հասարակական հարաբերությունների պետական կարգավորիչի որակով, սահմանում իրավաչափ և ոչ իրավաչափ վարքագծերը (իրավաբանական ազատության սահմանները):

Վերը շարադրված իրավունքի հատկանիշների հիման վրա, որոնք ձևավորում են վերջինիս նորմատիվային հասկացությունը, կարելի է սահմանել իրավունքի հետևյալ ընդհանուր հասկացությունը. իրավունքը՝ ընդհանուր պարտադիր, ձևական-որոշակի նորմերի համակարգ է, որոնք արտահայտում են հասարակության պետական կամքը, համամարդկային և դասակարգային բնույթը, հրապարակվում կամ սանկցիավորվում են պետության կողմից և պաշտպանվում հնարավոր խախտումներից պետական հարկադրությամբ, հանդիսանում են հասարակական հարաբերությունների իշխանապաշտոնական կարգավորիչ:

Առաջարկվող սահմանումը, իհարկե, որևէ կերպ չի հավակնում լինել միակ ճշմարիտը: Քանի որ իրաունքը բարդ բազմակառուցվածքային երևույթ է, արդարացված է դրա մի քանի սահմանումների կիրառություն, որոնք կարող են հանդիսանալ ընդհանուր, տալով իրավունքի վերաբերյալ առավել կամ պակաս ամբողջական պատկերացումներ, այնպես էլ մասնավոր, որը շեշտադրում է ուշադրությունը դրա արտահանյտումների առանձին կողմերի վրա: Սակայն նման սահմանումների խոսքային ձևակերպումների տարբերություններից անկախ, դրանք բոլորը, և դա վերջիններիս գիտականության անմերժելի չափորոշիչն է, պետք է բազմակիորեն արտահայտեն միևնույն բանը, իրավունքի միասնական հասկացությունը:

Իրական կյանքում գոյություն ունեցող իրավունքը անհարժեշտ է դիտարկել վերջինիս պետական-կամային, նորմատիվային և իշխանական-կարգավորիչ հատկանիշների կոնկրետացմամբ, ինչպես նաև ազգային առանձնահատկություններին և պատմական զարգացման կոնկրետ պայմաններին համապատասխան:

2.3 Իրավունքի սոցիալական նշանակության հասկացությունը

Սոցիալականը, սեփական, հարաբերականորեն ինքնավար իմաստով, հանդիսանում է հասարակականի հատուկ ձև, տեսակ, այն հանդիսանում է բարդ, բազմապլանային հասարակական հարաբերություն և մարդկային սուբյեկտների գործունեության տեսակ, յուրաքանչյուր սոցիալական սուբյեկտը ունի հատուկ բովանդակային-գործառույթային և այլ նշանակություն, սոցիալական հարաբերությունների բոլոր տեսակները անմիջականորեն չափվում են մարդկային բաղկացուցիչներով, սյուժետներով և այդ իսկ պատճառով մարդկայինը սոցիալականում հանդիսանում է ոչ միայն հիմնականը, ելակետայինը, այլ նաև արդյունքային հարաբերությունը, գործունեության ձևը⁶⁵:

Այսպիսով, եթե ուսումնասիրում ենք սոցիալականի խնդիրը դրա ցանկացած ձևում, բովանդակությունում, ապա առանձնացնում, ընդգծում, նշում ենք դրա մարդկային բովանդակությունը, չափումը և նշանակությունը: Դա հիմնական

⁶⁵ Տե՛ս **Матузов Н.И., Ушакова Н.В.** Возможность и действительность в Российской правовой системе. М., 2013. С. 29-30.

եզրակացությունն է, որը հադիսանում է հիմք իրավական սոցիալական խնդիրների հետագա վերլուծության համար: Այն ուժեղանում է, երբ ներառվում է տեսական և գործնական տարածություն:

Սոցիալական նշանակությունը որպես ինտեգրված հասկացություն բազմանշանակ է, բովանդակային բարդ և բազմապլանային: Տվյալ հետազոտության առարկայական ոլորտի ենթատեքստում մեր համար տեսականորեն բավարար կլինի կիրառել այն հետևյալ իմաստային արտահայտություններում. առաջինը, սոցիալական նշանակությունը՝ սոցիալական երևույթի որոշակի իմաստ է, կոնկրետ կողմի, նիստի, ոլորտի բովանդակություն, երկրորդը, այն նշանակում է սոցիալական հարաբերության և գործունեության սուբյեկտի կարևոր, յուրահատուկ, նշանակալից դերը: Ի վերջո, այդ դերը (սոցիալականությունը) միշտ մարդկայնորեն բովանդակային և տարաչափ է, այսինքն արտահայտում է մարդկային կարգավիճակային հետաքրքրությունները, արժեքները և գործունեության տեսակները: Այսպիսով, կարելի է կատարել հետևյալ գիտատեխնիկական «քայլը», որպեսզի մարմնավորվի սոցիալական նշանակությունը կենցաղի կոնկրետ ձևում, որի անունը իրավունք, իրավական նյութ, իրավական տարածություն է:

Իրավաբանական գրականությունում «իրավունքի սոցիալական նշանակություն» կատեգորիան կիրառվում է մի քանի իմաստներով, օրինակ, իրավունքի պատմական առաքելության բնութագրման համար, այսինքն իրավունքի՝ իր անցյալի կամ ապագայի նկատմամբ կիրառական նշանակության գնահատման համար: Իրավունքի սոցիալական նշանակության տակ երբեմն հասկանում են դրա տնտեսական, քաղաքական, գաղափարական և այլ խնդիրները, կարելի է դիտարկել այն նաև վերջնական սոցիալական արդյունքների տեսանկյուններից, այսինքն սոցիալական հարաբերությունների մեջ այն ձեռքբերումների ասպեկտներում, որոնք պայմանավորված են իրավական նորմերի իրացմամբ⁶⁶:

Դրա հետ կապված կարելի է համարել, որ ամենաընդհանուր առումով իրավունքը իր սոցիալական նշանակության մեջ ունի հասարակությունում առավել կարևոր, անհրաժեշտ հարաբերությունների ամրագրման և կայունացման, հասարակության

⁶⁶ Տե՛ս **Мальцев Г.В.** Социальные основания права. М., 2007, с. 265-266.

կյանքից որոշակի բացասական երևույթների չեզոքացման, նոր, առավել առաջընթաց հասարակական հարաբերությունների ձևերի բարենպաստ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման նշանակություն:

Բոլոր դեպքերում նշված իմաստներով վերլուծվող կատեգորիան իրեն լիարժեքորեն չի սպառում: Դրա իրավաբան իրականության արտացոլման բազմանշանակությունը և տարբեր մակարդակները հիմք են հանդիսանում տվյալ կատեգորիան այլ նշանակությամբ կիրառելու համար, վերջինս հնարավորություն է տալիս իրավունքի սոցիալական դերին հաղորդել պատշաճ ինքնավարություն տեսական և գործնական արժեքավորություն իրավաբանական գիտությունների ապարատում:

Չի կարելի չնշել, որ «իրավունքի սոցիալական նշանակության» կատեգորիայի կիրառության մեծ անհրաժեշտությունը բացահայտվում է պետության, բարոյականության, գաղափարախոսության և հարակից այլ բաղադրիչների սոցիալական դերի հետ վերջինիս համեմատական վերլուծության դեպքում: Տվյալ դեպքում բավականին հստակորեն նշմարվում է տվյալ կատեգորիայի ևս մեկ կարևոր նշանակություն, որը բնութագրում է իրավունքի առանձնահատուկ, որակապես ինքնուրույն ծառայողական դեր իրականացնելու կանխորոշվածությունը, այն սահմանվում է հասարակության զարգացման պատմական որոշակի փուլում իրավունքի սոցիալական անհրաժեշտությամբ: Այս իմաստով իրավունքը չի կարող փոխարինվել թվարկված սոցիալական երևույթներից որևէ մեկով: Հատկապես տվյալ հանգամանքը հնարավորություն է տալիս պնդել, որ իրավունքի սոցիալական նշանակությունը, ամենից առաջ, կայանում է արտադրության, բաշխման և սպառման հետ կապված հարաբերությունների կարգավորման, կառավարող դասակարգի (ընդդիմության դասակարգերի գոյության պայմաններում) շահերին համապատասխանող հասարակական կարգի, ամբողջ հասարակության կամ դրա որոշակի հատվածի կազմակերպման, ինչպես նաև կառավարող քաղաքական ուժերի համար շահավետ հասարակական հարաբերությունների սուբյեկտների կապի ձևերի հաստատման և պահպանության մեջ: Վերջինը կայանում է այլ սոցիալական կարգավորումներից էականորեն տարբերվող իրավական միջոցներով որոշակի սոցիալ-տնտեսական և

հասարակական-քաղաքական խնդիրների լուծման հնարավորության և անհրաժեշտության մեջ:

Իրավունքի ինքնուրույն, հասարակության համապատասխանող սոցիալական խնդիրները լուծելու կանխորոշվածությունը իրենից ներկայացնում է «իրավունքի սոցիալական դեր/ նշանակություն» հասկացության կարևոր հաստատող պահը: Ըստ այս որակական հատկանիշի կարելի է տարբերակել վերլուծական կատեգորիան իրեն իմաստային մոտ հասկացություններից, ինչպիսիք են իրավունքի խնդիրները, դերը, գործառույթները⁶⁷: Օրինակ, իրավունքի իրականացման ժամանակ իրավունքի կողմից փաստացի լուծվող սոցիալական նշանակության և խնդիրների նույնականացումից խուսափման համար անհրաժեշտ է պարզաբանել, արդյոք իրավունքի առջև նախապես են առաջադրվել համապատասխան սոցիալական խնդիրները, ձգտում է արդյոք օրենսդիրը լուծել այն հատկապես իրավունքի միջոցով, ի վերջո, հանդիսանում է արդյոք տվյալ բաղադրիչը իրավունքի սոցիալական կանխորոշվածության իրականացման արդյունք: Հաճախ գործ ունենք իրավունքի կողմից փաստացի լուծվող խնդիրների, առավել ճշգրիտ՝ արդյունքների հետ, որոնք ձևավորվում են դրա բուն-իրավական ազդեցությանը զուգահեռ: Նմանատիպների թվին կարելի է դասել, օրինակ, իրավունքի տեղեկատվական գործունեությունը, որը իրականացվում է որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի, դրանց պաշտպանության միջոցի իրավունքի, հիմնական կանխորոշման իրականացմանը զուգահեռ:

Որոշակիությունը իրավունքի ոչ թե երկրորդական զուգահեռ, այլ օբյեկտիվորեն անհրաժեշտ կողմնորոշված ազդեցություն է, որը վերջնական արդյունքում պետք է արտահայտվի կոնկրետ որոշակի սոցիալական արդյունքի ձևով (համապատասխան ձևի հասարակական հարաբերությունների կարգավորում, ոչ ցանկալի երևույթների չեզոքացում և այլն): Այլ խոսքերով, որոշակիությունը պարունակում է նպատակաուղղվածության հայտի պահ, վերջնական արդյունքում որպես դրա աղբյուր հանդես է գալիս սոցիալական պահանջվածությունը, իսկ առանցք՝ կառավարող քաղաքական ուժերի կամքը, շահերը, որոնք սահմանվում են դրանց գոյության նյութական պայմաններով:

⁶⁷ **Радько Т.Н.** Теория функций права. М., 2014.

Այլ խոսքերով, իրավունքին, օրենքին նախորդում է դրանում հասարակական պահանջը, որը անկասկած սահմանում է և օրենքի նպատակները, և խնդիրները, այսինքն կանխորոշում է դրա սոցիալական նշանակությունը:

Իրավունքի սոցիալական նշանակությունը ձևակերպվում է հասարակական զարգացման պահանջներից, հանդիսանալով այդ պահանջների շարունակություն՝ արտահայտված իրավական ակտով: Հասարակության պահանջներին և սոցիալական անհրաժեշտությանը համապատասխան ստեղծվում են օրենքներ, որոնք կողմնորոշված են որոշակի հարաբերությունների ամրագրմանը, դրանց կարգավորմանը և պաշտպանությանը: Ընդ որում օրենքի այս կամ դերը հանդես է գալիս այնքանով հստակորեն և դիտարկելի, որքան սրությամբ է զգացվում դրա հատկապես համապատասխան սոցիալական դերի պահանջը (անհրաժեշտությունը)՝ ամրագրել, պաշտպանել կամ կողմնորոշել որոշակի հասարակական հարաբերությունների զարգացումը:

Հասարակական և արտադրական գործընթացների կարգավորման սոցիալական անհրաժեշտությունը ծագում է արդեն հասարակության զարգացման վաղ աստիճանում, նախքան իրավունքի ծագումը: Այդ անհրաժեշտությունը բազմակի աճում է, երբ էականորեն ընդլայնվում է հարաբերությունների ոլորտը, որը կառավարող քաղաքական ուժը (ուժերը) ձգտում է ընդգրկել կարգավորմամբ. գերակայման իրականացման ձևը, պետության և անհատների փոխհարաբերությունները, քաղաքական ինստիտուտների գործման ապահովման անհրաժեշտությունը և այլն: Իրավունքը դառնում է հասարակական հարաբերությունների տարբեր սուբյեկտների գործողությունների կոորդինացման գործիք: Սակայն դրա նորմերը, ի տարբերություն այլ սոցիալական նորմերի, երկարատև դարերի ընթացքում ունենալով հիմնականում դասակարգային բնույթ, ստեղծվում և կիրառվում են մարդկանց գործունեության կանոնակարգման համար, դրանք կողմնորոշված են հարաբերությունների կազմակերպմանը և կարգավորմանը, որոնք ամենից առաջ շահավետ են կառավարող քաղաքական ուժերին:

Իրավական նորմաները հանդես են գալիս հասարակական հարաբերությունների համապատասխան սուբյեկտներին ներկայացվող պահանջների որակով, ամենից առաջ

այն քաղաքական ուժերի շահերում, որոնց կամքի արտահայտում հանդիսանում է իրավունքը: Այդ իսկ պատճառով իրավական նորմերը միշտ, ուղղակի կամ անուղղակի, կողմնորոշվում են այդ շահերի պաշտպանությանը, այսինքն կարգավորիչին զուգահեռ ունեն պաշտպանական դեր: Հասարակական հարաբերությունների կարգավորումը և պաշտպանությունը իրավական միջոցներով՝ ահա այն գլխավորը, որում կայանում է իրավունքի սոցիալական նշանակությունը: Միևնույն ժամանակ պատմությունը վկայում է, որ քաղաքական և սոցիալատեսական պատճառների ուժով իրավունքի յուրաքանչյուր տեսակ կոչված է լուծել միայն իրեն բնորոշ խնդիրները, կողմնորոշված է որոշակի նպատակների ձեռք բերմանը, որոնք բնորոշ չեն իրավունքի պատմական այլ տիպերին: Անհրաժեշտ է տարբերակել իրավունքի համընդհանուր նշանակությունը, այսինքն բնորոշ դրա բոլոր պատմական տիպերի համար (հասարակական հարաբերությունների կարգավորում և պահպանություն), և տիպաբանական, այսինքն մեկ պատմական տիպի իրավունքին բնորոշ (օրինակ, սոցիալիստական իրավունքի գաղափարախոսական դերը): Դրա հետ կապված կարելի է համարել, որ իրավունքի սոցիալական դերում ինտեգրվում են դրա նպատակները և խնդիրները, այն կարծես ընդգծում է խնդիրների շրջանակը, որոնք պետք է լուծվեն իրավական միջոցներով, նշում է նպատակները, որոնք պետք է ձեռք բերվեն իրավունքի միջոցներով:

Վերլուծվող կատեգորիայի նշված հատկությունների գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ վերնաշենքի տարբեր տարրերի համակարգում իրավունքի դիտարկման ժամանակ դրա սոցիալական դերը հանդես է գալիս չափորոշիչներից մեկի որակով, որը հնարավորություն է տալիս առավել հստակորեն սահմանազատել իրավունքը իր այլ հատվածներից, տեսնել դրա որակական ինքնուրույնությունը:

Անհրաժեշտ է նշել, որ իրավունքի սոցիալական նշանակության խնդրի հետազոտության բարդությունները պայմանավորված են, մասնավորապես, նրանով, որ «սոցիալական նշանակություն» կատեգորիան ոչ փիլիսոփայական, ոչ իրավական գրականությունում բավարար մշակված չէ⁶⁸: Առկա են միայն «սոցիալական» հասկացության սահմանումները, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է թեկուզ համառոտ

⁶⁸ См' u Социология. Том 3. Междисциплинарные исследования. Цловарь-справочник. Отв. ред. Г.В. Осипов. М., 1991, с. 206-207.

բնութագրել «սոցիալական նշանակություն» հասկացությունը:

Սոցիոլոգները և քաղաքագետները, բնութագրելով պետության, իրավունքի և սոցիալ-քաղաքական կյանքի այլ ինստիտուտների հասարակական դերը, վաղուց են կիրառում այս հասկացությունը:

«Իրավունքի սոցիալական դերը»՝ ըստ իմաստի առավել լայն հասկացություն է, սակայն այն բավարար չէ իրավունքի սկզբունքային հատկությունների իմացության համար, քանի որ կարծես իրենում լուծում է իրավունքում առավել էականը (իսկ հատկապես դասակարգայինը): Հաշվի առնելով միայն դասակարգային գործոնը, հնարավոր չէ համակողմանի գնահատել իրավունքի սոցիալական դերը, քանի որ այն, ընդգծելով իրավունքի սոցիալական նշանակության կարևորագույն ասպեկտները, ոչ լիարժեքորեն է բնութագրում որպես հատուկ սոցիալական երևույթի դրա բոլոր հնարավորությունները: Պետությունը վկայում է, որ լինելով նախատեսված լուծելի դասակարգային խնդիրներ, իրավունքը ակտիվորեն փոխազդում է այլ սոցիալական կարգավորիչների (քաղաքականության, բարոյականության, սովորույթների) հետ, լուծելով դրանց հետ համատեղ ընդհանուր սոցիալական խնդիրներ, հասարակական հարաբերությունների կարգավորում, քաղաքացիների դաստիարակում գերակայող գաղափարախոսության ոգով, մշակութային արժեքների պաշտպանություն և այլն: Ինչպես պետությունը անխուսափելիորեն իրականացնում է «ընդհանուր գործերի» որոշակի շրջանակ, այդպես իրավունքը, հանդիսանալով հասարակական հարաբերությունների դասակարգային կարգավորիչ, անխուսափելիորեն լուծում է հասարակական բնույթով պայմանավորված մի շարք ընդհանուր սոցիալական խնդիրներ:

Ժամանակակից իրավունքը, ձեռք բերելով իրավական պետության կառուցման առանձնահատկությունները արտացոլող մի շարք նոր գծեր⁶⁹, անկասկած, պահպանում է առավել կայուն հատկանիշները, որոնք նրան բնորոշ են որպես հասարակական հարաբերությունների հատուկ կարգավորիչի (նորմատիվություն, ֆորմալ որոշակիություն, պարտադիրություն): Այն պահպանում է նաև իրավունքի բոլոր նախկին պատմական տիպերին բնորոշ կառավարող քաղաքական ուժերի շահերում

⁶⁹ Տե՛ս **Зорькин В.Д.** Право в условиях глобальных перемен. М., 2013, с. 58-86.

հասարակական հարաբերությունները կարգավորելու և պահպանելու նշանակությունը: Սակայն չի կարելի հաշվի չառնել, որ ժողովրդավարական իրավական պետությունում իրավունքը պետք է միաժամանակ արտացոլի բնակչության բոլոր սոցիալական շերտերի շահերը, դրա ուժով սկսբունքորեն տարբերվում է իրավունքի նախորդ տիպերից ոչ միայն քանակական, այլև որակական տեսանկյուններից:

Տարբերության քանակական պահը կայանում է նրանում, որ իրավունքը՝ գործիք է, որն արտահայտում է ամբողջ հասարակության շահերը, այլ ոչ մեկ դասակարգինը, ինչպես դա եղել է նախկինում, քանակական տարբերությունը նրանում է, որ այն պետք է վերածվի գործիքի, որը հավասար աստիճանով արտահայտի բնակչության բոլոր շերտերի կամքը և շահերը: Այդ իսկ պատճառով ժամանակակից իրավունքում համակողմանի զարգացվում է իրավունքի ընդհանուր սոցիալական նշանակության ուղղվածությունը:

Ժամանակակից իրավունքի նորմերում դասակարգային դերը զիջում է իր տեղը ընդհանուր սոցիալականին⁷⁰: Նման մոտեցումը ձևավորվում է իրենցում ներառելով մարդկային առավել էական արժեքները, հաշվի առնելով տարբեր նորմատիվային կարգավորիչների միջոցով սոցիալական խնդիրների լուծման բազմադարյա փորձը, հենվելով այնպիսի ընդհանուր կարևոր սկզբունքներին, ինչպես մարդասիրությունը, արդարությունը, ազալությունը, ֆորմալ (իրավաբանական) հավասարությունը:

Սակայն ժամանակակից իրավունքի առնաձահատկությունը կայանում է նրանում, որ այն ձեռք է բերում առավել ընդհանուր սոցիալական նշանակություն: Վերը նշվել է, որ «իրավունքի սոցիալական դերը» կատեգորիան հասարակությունում հասարակական հարաբերությունների կարգավորիչի որակապես ինքնուրույն դերի իրականացմանը զուգահեռ իրենում ինտեգրում է նաև զարգացման այս կամ այն փուլում որոշակի սոցիալական խնդիրներ լուծելու անհրաժեշտությունը: Դրա հետ կապված կարևոր է դիտարկել ժամանակակից իրավունքի սոցիալական նշանակությունը վերջինիս կողմից լուծվող հիմնական խնդիրների համատեքստում:

Տնտեսական խնդիրների լուծումներում իրավունքի կիրառությունը կանխորոշվում է ժամանակակից հասարակության գոյության նյութական պայմաններով,

⁷⁰ Տե՛ս **Սթ'ու Փոզներ Ք.** Экономический анализ права. В двух томах. Том 1. СПб., 2004, с. 36-37.

սեփականության համապատասխան տարատեսակ ձևերի առկայություն, շուկայական հարաբերությունների կարգավորման և արտադրության պահանջներով: Շուկայական տնտեսության համակարգը օբյեկտիվորեն պահանջում է մանրակրկիտ և համարժեք իրավական կարգավորում: Պետությունը, ակտիվորեն կիրառելով իրավական ձևերը և մեթոդները, կոչված է ապահովել շուկայական տնտեսության զարգացման անհրաժեշտ պայմանները: Սոցիալական պետաիրավական սկզբունքը ոչ միայն ընդհանուր տեսական ծրագրային դրույթ է կամ իրավական ուղենիշ, այլ նաև պարտադիր իրավական (սահմանադրական) նորմ: Այն առաջին հերթին ուղղված է օրենսդրին և պարտավորեցնում է վերջինս զարգացնել և իրագործել սոցիալական պետության սկզբունքը և իրավունքի սոցիալական ուղղվածությունը՝ իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան ոլորտներում, ինչպես նաև իրավակարգավորումների էությունն ու բովանդակությունը:

Իրավակարգավորումների սոցիալական ուղղվածությունը ենթադրում է նաև «պետության որոշակի պարտականություններ, սակայն այդ պարտականությունների շրջանակով չի «ավարտվում» պետության սոցիալական էության (ինչպես նաև իրավունքի սոցիալական էության՝ Վ.Ս.) բովանդակությունը, քանզի դրանցից զատ, պետությունն ունի սոցիալական քաղաքականության առավել ընդգրկուն նպատակներ, որոնք մասամբ առնչվում են մարդու իրավունքների և ազատությունների հետ...»⁷¹:

Շուկայական տնտեսական օրենքների ազդեցությունը ակնհայտորեն պայմանավորում է շուկայական հարաբերությունների ճիշտ ձևավորման, երկրի տնտեսական զարգացման պայմաններին համապատասխան իրավական կարգավորման անհրաժեշտություն: Այս խնդիրների լուծումներում կարևոր տեղ է գրավում տնտեսության հիմնավորված օրենսդրական կարգավորումը, հավասար իրավական պայմանների ստեղծումը շուկայական հարաբերությունների բոլոր սուբյեկտների համար: Ընդ որում առաջին տեղը զբաղեցնում է ֆինանսական, հարկային, մաքսային օրենսդրությունը, որը ունի պարտադիր նշանակություն բոլորի համար և անմիջական ձևով ազդում է շուկայական տնտեսության զարգացման վրա:

⁷¹ Տե՛ս **Դանիելյան Գ.Բ., Այվազյան Վ.Ա., Մանասյան Ա.Ա.** Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտազործնական հետազոտություն): Երևան, 2015, էջ 138-139:

Վերջին տարիներում ընդունված նորմատիվային օրենսդրական ակտերը վկայում են տնտեսական գործունեության սուբյեկտների առավել դիֆերենցված կարգավորման տենդենցների և արտադրողների խթանման վերաբերյալ: Շուկայական հարաբերությունների ձևավորման փորձը ցույց է տալիս, որ շուկայական տնտեսության կայացման և զարգացման մեջ իրավունքի դերը նաև հետագայում անփոփոխ կբարձրանա: Դա պահանջում է իրավաբաններից շուկայի կայացման և զարգացման պայմաններում արդյունավետ իրավական կարգավորման խնդիրների առավել խորը վերլուծություն, քանի որ դեռ բավականին շատ հարցեր մնում են չլուծված:

Տնտեսական խնդիրների լուծումներում իրավունքի դերի բարձրացումը կապված է նաև տնտեսական հարաբերությունների սուբյեկտների, իրավական աջակցություն պահանջող խնդիրների թվի աճի, ամբողջ շուկայական մեխանիզմի կատարելագործման հետ⁷²:

Բաժնետիրական, ֆինանսական, արդյունաբերական, շինարարական, տրանսպորտային և այլ ընկերությունների սեփականությունների հսկայական քանակությունը ունի փոխհարաբերությունների արդյունավետ կարգավորման կարիք:

Ժամանակակից պայմաններում պետական և հասարակական կյանքի ժողովրդավարացման իրական գործընթացը օրգանապես կապված է իրավունքի հետ, որը ամրագրում է ժողովրդավարության հիմնական ինստիտուտները, ապահովում դրանց իրավական երաշխիքները: Իրավունքը հանդես է գալիս քաղաքացիների ազատությունների չափորոշիչ հասարակական և քաղաքացիական կյանքի բոլոր ոլորտներում, դրանց իրականացման երաշխիք: Ժողովրդավարական հաստատումների (ինստիտուտների, քաղաքացիների ազատությունների և իրավունքների) իրականացման գրեթե ամբողջ գործընթացային կողմը ապահովում է համապատասխան իրավական ձևերով: Մասնավորապես դրանով է բացատրվում ակտիվ օրենսդրական աշխատանքի անհրաժեշտությունը, որը կողնորոշված է իշխանության մարմինների, ընտրական համակարգի գործունեության կատարելագործմանը, անձի իրավական դրության երաշխիքների ամրապնդմանը և այլն:

⁷² Ст' у Сорокина Ю.В. Актуальные проблемы теории и философии права. М., 2013, с. 245-246.

Իրավունքը կարգավորում է տարբեր հասարակական հարաբերություններ, որոնք ձևավորվել են պետական իշխանության իրականացման, հետ կապված, ինչպես նաև իրավաբանորեն ձևակերպում է ժողովրդավարական սկզբունքերը: Իհարկե, իրավունքը կարգավորում է ժողովրդավարական և քաղաքական փոխհարաբերությունների ոչ ամբողջ համակարգը, այլ միայն դրա կարգավորմանը ենթակա հատածը (օրինակ, պետական իշխանության վերին մարմիններում տարբեր կուսակցությունների, շարժումների և ազգությունների ներկայացման հետ կապված և այլն):

Իրավական պետությունում քաղաքական հարաբերությունները կարգավորելու իրավունքի դերը անհրաժեշտ է դիտարկել քաղաքական համակարգի սուբյեկտների նկատմամբ, որոնց բնորոշ է ոչ հավասարաչափ բնույթը, քանի որ դրանց շարքում, ինչպես հայտնի է, առկա են քաղաքական սուբյեկտներ (կուսակցություններ, ազգություններ, պետություն), ինչպես նաև հարաբերական քաղաքական սուբյեկտներ (քաղաքականության հետ անուղղակի կապված կազմակերպություններ)⁷³: Այստեղից հարաբերությունների կարգավորման համար իրավունքի ոչ միանշանակությունը, որը բխում է քաղաքական համակարգի սուբյեկտների տարբեր դերից: Եթե առաջին դեպքում առանց իրավունքի անհիմաստ է պետության գործունեությունը, քաղաքական շարժումների համագործակցությունը, ապա երկրորդում՝ իրավունքը իրականացնում է ուղեկցող, աջակից դեր, որպես պետության կողմից կիրառվող սոցիալ-քաղաքական համադասման միջոց: Իրավունքի քաղաքական հեռանկարությունը անհրաժեշտ է բացահայտել, առաջին հերթին, կիրառական քաղաքական հարաբերությունների միջուկը, հիմքը և շարժիչ ուժը կազմող սուբյեկտների՝ կուսակցությունների, քաղաքական ուժերի, ազգությունների, պետության նկատմամբ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ պետական իշխանության նկատմամբ հարաբերությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի կարգավորումը, հասարակական խնդիրների լուծումները և այլն չեն կարող ընթանալ կոշտ ձևերով և իրականացվել ստիպողական մեթոդներով, որոնք բնորոշ են հասարակական հարաբերությունների կարգավորման որոշ այլ ռեժիմների համար: Դրա հետ կապված ձևավորվել է սոցիալ-

⁷³ Մանրամասն տե՛ս **Марченко М.Н.** Правовое государство и гражданское общество (теоретико-правовое исследование). М., 2015.

քաղաքական հարաբերությունների կարգավորման հատուկ՝ սահմանադրական ձևը:

Իրավունքի սոցիալական դերը կարելի է դիտարկել առավել նեղ իմաստով, նկատի ունենալով սեփական սոցիալական խնդիրների ընդլայնումը իրավունքի միջոցով. գիտության, մշակույթի, առողջապահության, կենսաթոշակային ապահովման, սոցիալական ապահովագրության և այլնի վրա ազդեցությունը:

Ժողովրդավարական իրավական պետությունը պետք է հանդիսանա սոցիալական պետություն, որը ենթադրում է սոցիալական ոլորտի իրավական կարգավորման լայն ծավալ, անձի տարբեր սոցիալական ծառայությունների ստացման հատվածում իրավունքների երաշխիքների ամրապնդում: Դա հաստատվում է ՀՀ Սահմանադրության հոդ.1-ի դրույթներով, որում հռչակվում է, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Սոցիալական խնդիրների լուծմանը կողմնորոշված իրավական միջոցների բավարար զարգացած համալիր առկայությունը հիմք է հանդիսանում խոսել հասարակական կյանքի համապատասխան ոլորտի վրա իրավական ազդեցության ձևավորված ուղղության վերաբերյալ և առանձնացնել իրավունքի ինքնուրույն գործառույթները:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների համակարգում ընդգծված է հետևյալ դրույթը. «Ամենաընդհանուր իմաստով սոցիալական պետության սկզբունքն ուղղված է սոցիալական արդարությանը, այն պարտադրում է պետությանն ապահովել արդար սոցիալական կարգ: Սոցիալական պետության սկզբունքը ոչ միայն ընդհանուր ծրագրային դրույթ է կամ սահմանադրական նորմ: Այն առաջին հերթին ուղղված է օրենսդրին և պարտավորեցնում է վերջինիս զարգացնել և իրագործել սոցիալական պետության սկզբունքը ոչ միայն սոցիալական իրավունքի ավելի նեղ բնագավառում, այլ նաև իրավունքի բոլոր ոլորտներում: Սոցիալական պետության սկզբունքից բխում են որոշակի սահմանադրական-իրավական ուղենիշներ, որոնք օրենսդիրը պետք է հաշվի առնի կոնկրետ սոցիալական կարգավորումների, կարիքավորներին կոնկրետ սոցիալական օգնություն տրամադրելու, սոցիալական ծառայությունների և

սոցիալական ապահովության միջոցների զարգացման միջոցով»⁷⁴:

Իրավունքի, ինչպես նաև պետության սոցիալական գործառույթը կանխորոշվում է հասարակական հարաբերությունների զարգացման սոցիալ-տնտեսական պայմաններով⁷⁵: Պետության և իրավունքի ծագման նախնական փուլում այն չի արտահայտվում բավարար ակնհայտությամբ, չունի իր սեփական տեղը վերջինի գործառույթներում: Սոցիալական ծառայությունների ոլորտում հարաբերությունների կարգավորմանը կողմնորոշված օրենսդրական ակտերը սովորաբար ներառվում են իրավունքի տնտեսական, քաղաքական և այլ գործառույթներում:

Սոցիալական (կենսաթոշակային, առողջապահության, կրթության, հանգստի, աշխատանքի վերաբերյալ) օրենսդրության կատարելագործմանը, սոցիալական հարաբերությունների վրա իրավունքի ազդեցության ուժեղացմանը, սոցիալական ծառայությունների ընդլայմանը, իրավունքով կարգավորմանը զուգահեռ իրավական ազդեցությունը ամրապնդվեց, ձեռքբերեց առավել նկատելի գծեր, հեռանալով գործառույթներից, որոնք նախկինում «դրան ներածում» էին իրենցում, և վերջնական արդյունքում ձեռքբերեց ինքնուրույն ուղղության նշանակություն:

Իրավունքի սոցիալական նշանակության դիտարկումը պահանջում է բազմաթիվ իրավական երևույթների լայն սոցիոլոգիական վերլուծություն իրավական կարգավորման սահմաններից դուրս, քանի որ այստեղ խոսվում է իրավունքի դերի, դրա խնդիրների, հասարակական հարաբերությունների վրա իրավունքի ազդեցության արդյունքների, իրավական կարգադրությունների արդյունավետության (կամ անարդյունավետության), այն փոփոխությունների վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել որպես սոցիալական կառավարման գործիք իրավունքի կիրառության շնորհիվ: Հասարակական հարաբերությունների կարգավորումը, դրանց բնականոն զարգացման պայմանների ապահովումը, հասարակության կյանքից ամբողջ բացասականի, դրան օտար և անցանկալի երևույթների չեզոքացումը, նորերի կայացմանը աջակցությունը՝ ահա ամենաընդհանուր գծերով իրավունքի սոցիալական դերի իրականացման հիմնական ցուցանիշների ցանկը:

⁷⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Երևան, 2015, էջ39-40:

⁷⁵ Տե՛ս **Шлёкин С.И.** Проблема права. философско-методологический аспект. М., 2013, с. 257-258.

Այլ խոսքերով, իրավունքի սոցիալական դերի իմացությունը ենթադրում է ոչ այնքան վերջինի ներքին, որքան գործառուֆային կառուցվածքի, ինչպես նաև այն սոցիալական արդյունքների բացահայտումը, որոնց վերջնական արդյունքում հանգեցնում է նորմայի, ինստիտուտի, իրավունքի համակարգի ցանկացած ոլորտի գործունեությունը: Այստեղ հնարավոր չէ առանց սոցիոլոգիական բնութագրերի, որոնք հնարավորություն են տալիս գնահատել իրական հասարակական հարաբերություններում իրավունքի ազդեցությունը:

Իհարկե, չի կարելի չափազանցնել սոցիալական խնդիրների լուծումների մեջ իրավունքի հնարավորությունները, որում տվյալ խնդիրը հարաբերակցվում է հասարակության գիտական կառավարման առավել ընդարձակ խնդրի հետ, վերջինում իրավունքը կիրառվում է սոցիալական հսկողության կարևոր գործիքներից մեկի որակով:

Ժամանակակից հասարակությունում իրավունքը կոչված է նպաստել տնտեսության, քաղաքական հարաբերությունների, մարդկանց գիտակցության մեջ ամբողջ նորի, առաջավորի, լավագույնի ներդրմանը և ամրագրմանը, այսինքն ոչ միայն ամրագրել ձևավորված հարաբերությունները, այլ նաև ազդել նորերի ձևավորան վրա:

Ներկայումս իրավաբանական գիտությունը հաղթահարել է ոչ վաղ անցյալում հասարակական կյանքում իրավունքի սխալական ընկալումը, սակայն նրա վերաբերյալ հարցը, ստեղծում կամ չի ստեղծում իրավունքը հասարակական նոր հարաբերություններ, հստակ պատասխան դեռ չունի: Հաճախ անտեսվում է բազաթիվ հասարակական հարաբերությունների բազմազանությունը, որական տարբերությունները: Անհրաժեշտ է պարտադիր հաշվի առնել, ինչ հասարակական հարաբերությունների (նյութական կամ գաղափարական) վերաբերյալ է խոսք գնում, դրանց նկատմամբ ինչ տեղ է գրավում (ենթակա կամ անկախ) իրավունքը: Համապատասխանաբար նաև հարցի պատասխանը, ունակ կամ ունակ չէ իրավունքը ստեղծել հասարակական նոր հարաբերություններ, չի կարող միանշանակ լինել:

Առաջինը, ինքը իրավունքը հանդիսանում է որոշակի հասարակական հարաբերությունների արդյունք և դրանց որոշների նկատմամբ (օրինակ,

տնտեսականի) այն երկրորդական, այլ ոչ առաջնային է: Երկրորդը, առկա են այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնց հետ իրավունքը ընկած է վերնաշենի համակարգում մեկ մակարդակում (օրինակ, բարոյականները): Երրորդը, գոյություն ունեն հասարակական հարաբերություններ, որոնք անմիջականորեն կապված են իրավունքի հետ: Նմանատիպ հանդիսանում են ըստ իրավական պատասխանատվության իրականացան հարաբերությունները, դատավարական հարաբերությունների էական հատվածը և այլն:

Մարդկային քաղաքակրթության զարգացման պատմությունը դիտարկելի ցուցադրում է, որ պետությունն իր օբյեկտիվ հնարավորությունների սահմաններում կարող է հաստատել կանոններ, որոնք ոչ միայն ամրագրում են առկա տնտեսական, քաղաքական և այլ սոցիալական հարաբերությունները, այլ նաև աջակցում նոր հարաբերությունների կայացմանը⁷⁶: Իհարկե, իրավունքի միջոցով կարող են հաստատվել միայն այնպիսի նոր հասարակական հարաբերություններ, որոնց համար հասունացել են համապատասխան պայմանները, այսինքն դրանց տեսակը, որակական առանձնահատկությունը արդեն կանխորոշված են սոցիալ-տնտեսական անհրաժեշտությամբ, հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքներով: Դա նշանակում է, որ իրավունքի միջոցով անհրաժեշտ է ստեղծել միայն այն հարաբերությունները, որոնց համար առկա են համապատասխան պայմանները և որոնք ունակ են ենթարկվել արդյունավետ կարգավորման:

Դրա հետ կապված կարելի է տարբերակել իրավունքի սոցիալական դերի երեք ասպեկտներ.

1. հասարակական հարաբերությունների զարգացման կողմնորոշման հնարավորությունը,
2. հասարակական հարաբերությունների զարգացման պայմանների ապահովման հնարավորությունը,
3. հարաբերությունների նոր տեսակներ ստեղծելու իրավունքի հնարավորությունը (ունակությունը):

Ղեկավարվելով դիալեկտիկայի զարգացման օրինաչափությամբ և մեթոդով՝

⁷⁶ Ст' у Социология права. Курс лекций. Том 1. Отв. ред. **М.Н. Марченко**, М., 2015, с. 142-143.

անհրաժեշտ է նշել, որ սոցիալական հնարավորությունների սահմաններում իրավունքը ունակ է ստեղծել հասարակական հարաբերությունների միայն այնպիսի նոր ձևեր, որոնց համար այն հանդես է գալիս որպես հիմնական աղբյուր, շարժիչ (խթանող) ուժ: Նման հարաբերությունները կարելի է անվանել ներքին (ներհրավական), դրանք հանդիսանում են իրավունքի զարգացման սեփական օրինաչափությունների արդյունք: Ինչպես արդեն նշվել է, ամենից առաջ, դրանք դատավարական հարաբերություններն են:

Հասարակական հարաբերությունների կողմնորոշման իրավունքի ունակությունը, ապահովելով դրանց բարեհաջող զարգացման համար պայմաններ, էականորեն մեծ է: Տվյալ դեպքում իրավունքը հանդես չի գալիս հաշվարկի կետ, հասարակական նոր հարաբերությունների ծագման սկիզբ, այլ միանում է այլ խթանիչ սոցիալական ուժերին և աղբյուրներին զարգացման աջակցող գործոնի որակով՝ խթանելով մարդանց սոցիալական գործունեության այս կամ այն ձևը, կանխելով կամ արգելակելով այս կամ այն բացասական վարքագիծը: Դրան համապատասխան գոյություն ունեն իրավական կարգավորման համարժեք մեթոդներ՝ խրախուսող, արգելակող, թույլատրող և այլն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իրավունքի սոցիալական նշանակությունը արտահայտվում է ոչ միայն հասարակական հարաբերությունների համապարփակ կարգավորիչի, նոր հարաբերությունների խթանման կամ բացասական երևույթների կանխարգելման դերակատարությամբ, այլև որպես սոցիալական արտադրության և հասարակական բարիքի նորմատիվ դրսևորման ձևերով:

ԳԼՈՒԽ 3

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Իրավունքը որպես հասարակական (սոցիալական) բարիքի նորմատիվ ձև. պատմատեսական վերլուծություն

Բարիքը իրավունքի անքակտելի հատկանիշն է, նրա մշտնջենական ուղեկիցը: Դեռևս Դեմոսֆենը տեսնում էր իրավունքի սոցիալական նշանակությունը հասարակությունում կարգի հաստատման մեջ, որն ըստ էության, բարիք է հասարակության համար և որին պետք է հետևեն բոլոր մարդիկ⁷⁷:

Ցիցերոնը դիտարկում էր իրավունքի սոցիալական նշանակությունը նրանում, որ այն ներկայացնում է անհրաժեշտ գործողությունները և արգելում է ոչ ցանկալիները և դրանով իսկ բարիք է հասարակության համար⁷⁸:

Ժամանակակից մասնագիտական գրականությունում բարիքը սահմանվում է որպես առավելագույն ընդհանուր հասկացություն դրական արժեքի (բարիքի հակադրությունը՝ բացասական արժեքը, չարիքն է), երևույթի կամ առարկայի նշման համար, որը բավարար է մարդկային որոշակի պահանջ, համապատասխանում մարդկանց շահերին, նպատակներին և ձգտումներին: Ինչպիսին կարող են լինել բարիքի և իրավունքի հարաբերակցության, մասնավորապես իրավունքը որպես բարիք քանի որ իրավունքը, մի կողմից բավականին լայնորեն ընդունված է մեկնաբանել որպես կամքի ձև, սակայն գլխավորը՝ իրավունքը ընդունված է հարաբերակցել ամենից առաջ արդարության գաղափարի հետ:

Մեր կարծիքով այդ կապը իր հիմքերում ծագում և նախնական իրականանում է տիրապետման ինստիտուտի միջոցով: Սակայն անհրաժեշտ է հստակեցնել, ինչ տեղի կունենա, եթե դիմենք ժամանակակից փիլիսոփայությունում բարիքի բովանդակության առաջարկվող «դասակարգման» մոտեցումներին, բացի արդեն նշված բնական և հասարակական բարիքներից, կախված նրանից, թե ինչ պահանջներ են

⁷⁷ Տե՛ս Речи Демосфена. М., 1903, с. 132.

⁷⁸ Տե՛ս **Марк Туллий Цицерон** / Полн. собр. речей в русском переводе. М., 1901, с. 112.

բավարարվում, տարբերակվում են նյութական և հոգևոր բարիքներ: Նյութականին դասվում են սնունդը, հագուստը, բնակարանը և այլն, ինչպես նաև արդյունաբերական միջոցները, հոգևոր բարիքներին՝ գիտելիքները, մարդկության հոգևոր մշակույթի ձեռքբերումները, էսթետիկ արժեքները, բարոյական բարիքը, որը կայանում է մարդկանց արարքներում և այլն: Հետևաբար, իրավունքը տիրապետման ինստիտուտի միջոցով դառնում է հայտնի աստիճանով բավականին սահմանափակ բարիքի ձև և, ինչպես արդեն ասվել է, միայն իր ծագման և զարգացման նախնական փուլերում: Հետագայում հասարակական զարգացման ընդհանուր համատեքստում իրավական ձևերի և իրավական ինստիտուտների զարգացման ընթացքում տեղի է ունենում բարիքի վերաբերյալ պատկերացումների և բովանդակության մի կողմից որպես «հստակեցում», որոշակի «բազմազանեցում», մյուս կողմից՝ տեղի է ունենում սեփական իրավական ձևերի (բարիքի) ձևափոխություն սեփական և այդ թվում բացառապես տիրապետման ինստիտուտի շրջանակներից դրանց էական «ելքով»⁷⁹:

Այսպես, մարդը՝ կենդանի էակ է, և այդ իսկ պատճառով, ակնհայտորեն ունի գոյության միջոցների կարիք: Դա՝ հանրահայտ ճշմարտություն է: Սակայն մարդը նաև «սոցիալական և բարոյական էակ» է, ունի «հոգևոր գոյության միջոցների» կարիք, ընդ որում բազմաթիվ ասեկտներում ոչ պակաս, քան գոյության նյութական, «ֆիզիկական» միջոցներում: Բացի դրանից, որպես անհատ, իսկ հավանաբար առավել, քան անհատը, հասարակությունը, որ (ինքնա) պահպանվի, պետք է տիրապետի իր գոյության անհրաժեշտ միջոցներով՝ և՛ նյութական, և՛ հոգևոր «բարիքների» էությամբ:

Մարդու և հասարակության համար որպես աղբյուր, որից ծագում են իրենց գոյության հիմնական միջոցները, հանդիսանում է բնությունը, այդ թվում նաև վերածնափոխությունը, որը մարդը և հասարակությունը իրականացնում են ինչպես սեփական՝ հիմնականում բարոյական բնության շրջանակներում, «հոգևոր» առումով, այնպես էլ սեփական բնակության միջավայրում, ասինքն նյութական առումով:

Ակնհայտ է, որ նյութականի գոյության աղբյուրները սահմանափակված են և մեծամասամբ սպառված, սակայն գոյության միջոցների՝ «բնական ռեսուրսների» օգտագործմանը և սպառմանը զուգահեռ, ինչպես մարդու, այնպես էլ հասարակության

⁷⁹ См'у Яковлев А.М. Социальная структура общества и право. М., 2009, с. 69-70.

մոտ պահանջները, որպես կանոն, աճում են և մեծամասամբ չեն կարող նվազեցվել, օրինակ, «ֆիզլոգիական մինիմումի» սահմաններից այն կողմ, հակառակ դեպքում մարդուն, ինչպես նաև հասարակությանը սպասում է իրենց գոյության ավարտը:

Վերջնական արդյունքում, ինքնապահպանության բնագոյը՝ մարդու համար տառացիորեն, հասարակության և մարդու համար փոխաբերական իմաստով, կենսագործունեության պահպանման համար անհրաժեշտ թեկուզ տարրական անհրաժեշտ միջոցների հետ ռեֆլեքսավորմամբ հանգեցնում են համապատասխան միջոցներով երաշխավորման գաղափարին (անհրաժեշտությանը)՝ այս կամ այն կերպ և վերջիններիս հայտնի սահմանափակվածության հաշվառմամբ:

Հատկապես այդ պահին (թեկուզ և պայմանականության հայտնի աստիճանով) ի հայտ են գալիս իրավունքի հատկանիշները: Այսպես, ակնհայտ է, որ այն ներուժը, որը տիրապետում է սուբյեկտը և, որը ունակ է պաշտպանել, կազմում է նրա «իրավունքը»: Այդ «ներուժը» հանդիսանում է բարիք այն ուժով, որ ցանկացած տեսակի ներուժը իր էությանը հանդիսանում է առարկա կամ երևույթ, որը բավարարում է մարդկային որոշակի պահանջ⁸⁰:

Նույն կերպ կարելի է պնդել, որ երևույթը այն պաշտպանելու ունակության հետ համախմբում «ծնում» և ձևավորում են «իրավունքի սուբյեկտը»՝ սուբյեկտին, որն ունակ է իրեն ապահովել ինքնավար գոյություն: Նման սուբյեկտի մոտ, անհրաժեշտ է նշել, «իրավունակության» և «գործունակության» կատեգորիաները լիարժեքորեն համընկնում են՝ կարելի է ասել, հանդիսանում են նույնական:

Մյուս կողմից, մարդը, հանդիսանալով բնության մասնիկ, կենսաբանական տեսակ, ի տարբերություն մնացյալ կենդանի էակների, օժտված է կամքի հայտնի ազատությամբ և իր գործունեությունում դուրս է գալիս բնագոյների, բնածին ռեֆլեքսների շրջանակներից, իսկ վերջնական արդյունքում, իր զարգացման մեջ հանգում արդարության՝ մարդու ըստ իր գործերի հատուցման գաղափարին: Այդ գաղափարը կազմում է արդարության հիմնական իմաստը և սկզբունքը: Եվ այդ առումով արդարությունը ինքը հանդես է գալիս հոգևոր բարիքի դերում:

Ինչպես էլ որ լինի, խոսելով իրավունքի՝ որպես բարիքի կամ նորմատիվորեն

⁸⁰ См'у Познер Р. Экономический анализ права. В двух томах. Том 1. СПб, 2004, с.43-44.

արտացոլված բարիքի ձևի վերաբերյալ, գնահատելով այն, ինչը իրենից ներկայացնում է իրավունք և բարիք, չի կարելի չնշել ևս մեկ պահ, իսկ հատկապես, որ որպես հասկացություն իրավունքը, ինչպես և բարիք հասկացությունը, արդեն այդ թվում նաև ժամանակակից փիլիսոփայության կառույցների տեսանկյունից, էականորեն ընդլայնվում է ևս երկու լրացուցիչ ասպեկտներում:

Այստեղ խոսքը գնում է, մի կողմից նրա վերաբերյալ, որ իրավունքը, արդարադատությունը, առաջին հերթին կապված են բացարձակ գործնականի, այսինքն «օգտակարի» հետ: Մյուս կողմից, ինչպես նշում է, օրինակ, Հ.Ջ. Բերմանը, «կյանքի ամբողջականության, կյանքի բոլոր կողմերի հետ իրավունքի փոխկապվածության զգացողությունները, նրա զգացողությունը, որ իրավական գործընթացները և ձեռնարկները, ինչպես և իրավական նորմերը և իրավական լուծումները, կազմում են համաշխարհային հարմոնիայի անբաժանելի հատվածը»⁸¹:

Այլ խոսքերով, ինչպես բարիք հասկացությունում, այնպես էլ իրավունք պատկերացման մեջ դրա (բարիքի) ձևերը պարունակում են որոշակի պարադոքս, որը բացառում է «գեղեցիկի» և «օգտակարի», «նպատակների» և «միջոցների» հակադրությունը, իսկ հետևաբար, ունի բացատրությունների կարիք:

Մեր կարծիքով, նշված հակասությունների առավել հավանական և «կոնստրուկտիվ» չեզոքացում պարունակում է Թոմաս Աքվինացու «Հավաքն Աստվածաբանության» աշխատանքը, չնայած նրան, որ այս աշխատանքը ևս ունի ներկայիս համար ըստ որոշ ասպեկտների որոշակի «արդիականացման» կարիք:

Սակայն մինչ Աքվինացու փիլիսոփայության մի շարք ասպեկտներին մանրամասն վերլուծության դիմելը անհրաժեշտ է ներկայացնել մի շարք սեփական նախնական դրույթներ և նկատառումներ:

Այսօր բազմաթիվ հետազոտողներ նշում են, որ արդարության վերաբերյալ պատկերացումները հիմնականում հանդիսանում են կապված պատշաճի վերաբերյալ պատմականորեն փոփոխվող պատկերացումների հետ: Այսպես, արդարությունը ենթադրում է մարդու կամ սոցիալական խմբի, հասարակության կյանքում գործնական դերի և իրենց սոցիալական դրության, իրենց իրավունքների և

⁸¹ Տե՛ս **Берман Г.Дж.** Западная традиция права: эпоха формирования /пер. с англ.2-е изд. М.,1998. С.87

պարտականությունների, արարքների և հատուցման, աշխատանքի և պարգևատրման, հանցագործության և պատժի, մարդկանց արժանիքների և նրանց հասարակական ընդունման միջև համապատասխանություն: Սակայն խնդիրը կայանում է նրանում, որ գոյություն չունեն բացարձակ արժեքներ, որոնք կարողանային հանդիսանալ փաստերի գնահատման էտալոն բոլոր ժամանակներում բոլոր ազգությունների և այդ թվում յուրաքանչյուր կոնկրետ մարդու համար: Այդ իսկ պատճառով հայտնի վերապահման մեջ կարելի է պնդել, որ որոշակի «միջանկյալ չափման» որակով, օրինակ, այդ նպատակների համար էկոնոմիկայում ծառայում են դրամները, իսկ արդարադատությունում՝ օրենքները⁸²:

Արդարության վերաբերյալ ընդհանրապես բարիքի նկատմամբ այդ թվում, հաջող ցուցում է Աքվինացին խոսելով մարդկային գործունեության հետևանքների վերաբերյալ դրանց առաքինության և արատավորության հետ կապված: Ըստ նրա՝

Առաջին «չարը հանդիսանում է առավել լայն հասկացություն, քան մեղքը, ինչպես և բարիքը՝ քան ճշտությունը: Իրականում, չարիք հանդիսանում է բարիքի ցանկացած անբավարարություն ցանկացած սուբյեկտում, այն դեպքում, երբ մեղքը, ըստ էության, կայանում է որևէ նպատակի համար իրականացված գործողությունում, որում չի բավարարում պատշաճ կարգավորվածություն այդ նպատակում: Հետագայում դեպի նպատակը պատշաճ կարգավորվածությունը գնահատվում է որոշակի չափորոշիչի օգնությամբ: Առարկաներում, որոնք գործում են բնությանը համաձայն, նման չափորոշիչի որակով հանդես է գալիս դեպի այդ նպատակները հակող բնական ուժը... Ինչ վերաբերվում է նրան, ինչը կատարվում է կամքին համապատասխան, ապա այստեղ մոտակա չափորոշիչի որակով հանդես է գալիս մարդկային գիտակցությունը, իսկ բարձրագույն չափորոշիչը՝ հարատև օրենքն է: Այդ իսկ պատճառով, երբ մարդկային գործողությունը հակվում է դեպի նպատակը գիտակցության կարգին և հարատև օրենքին համապատասխան, այդ դեպքում նման գործողությունը հանդիսանում է ճշմարիտ, իսկ երբ այն շեղվում է դրված կանխորոշումից, ապա դրա վերաբերյալ խոսում են որպես մեղսական»⁸³: Եվ հետո. «Սակայն արդեն շարադրվածից ակնհայտ է, որ ցանկացած ինքնակամ գործողություն, որը շեղվում է

⁸² Տե՛ս **Скурко Е.В.** Философия права и правовая жизнь. М., 2013. С. 85-94

⁸³ Տե՛ս **Фома Аквинский.** Сумма теологии. Часть II-I, Вопросы 1-48. К. 2006. С. 276.

գիտակցության կարգից և հարատև օրենքից, չարն է, և որ բարիք հանդիսանում է միայն այն գործողությունը, որը ընթանում է գիտակցությանը և հարատև օրենքին համապատասխան: Այսպիսով, դրանից հետևում է, որ մարդկային գործողությունը հանդիսանում է ճշմարիտ կամ մեղսական այնքանով, որքանով այն հանդիսանում է բարի կամ չար»⁸⁴:

Երկրորդ «ինչպես չարը առավել լայն հասկացություն է, քան մեղքը, նույն կերպ ինչպես մեղքը հանդիսանում է առավել լայն հասկացություն, քան մեղավորությունը: Գործողության վերաբերյալ խոսում են որպես գովասանքի կամ պարսավանքի արժանի միայն այն որոշակի գործիչին վերագրման ենթատեքստում, քանի որ գովասանքը կամ պարսավանքը նշանակում է ոչ այլ ինչ, քան նրա գործողությանը որևէ արատավորության կամ արժանիքի վերագրում: Սակայն գործողությունը վերագրվում է իսկապես միայն այն դեպքում, երբ այն գտնվում է վերջինիս իշխանության ներքո այնպես, որ նա հանդիսանում է այդ գործողության տեր, մարդը գործողության տեր հանդիսանում է ի շնորհիվ իր կամքի... Այսպիսով, այստեղից հետևում է, որ միայն ինքնակամ գործողություններում չարը և բարին արժանի են գովասանքի կամ պարսավանքի, և որ նման գործողություններում չարը, մեղքը և մեղավորությունը նույն բանի էությունն են»⁸⁵:

Երրորդ «մենք խոսում ենք պարզևատրման և դատապարտման վերաբերյալ հատուցման արդարացի իրականացման ենթատեքստում, իսկ մարդու պարզևատրման արդարացի կատարումը կապված է նրա հետ, որ նա կատարել է ինչ-որ բան, ինչը հանգեցրել է մյուսի շահին կամ վնասմանը: Սակայն այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հասարակության յուրաքանչյուր առանձին անդամ հանդիսանում է ամբողջ հասարակության մաս և անդամ: Այդ իսկ պատճառով հասարակության անդամի ցանկացած կատարած չարը և բարին արտահայտվում է ամբողջ հասարակության վրա, այսպես, ձեռքին վնաս հասցրածը, պատճառում է վնաս [վատում է] մարդուն: Այսպիսով, երբ որևէ մեկը պատճառում է մյուսին բարիք կամ չարիք, ապա նրա գործողություններում կարելի է դիտարկել պարզևատրման կամ պարսավելու երկակի չափ. առաջինը, նրա կողմից հատուցման տեսանկյունակից, ում պատճառվել է բարիք

⁸⁴ Տե՛ս **Фома Аквинский**. Նշվ. աշխ., էջ 276:

⁸⁵ Նույն տեղը, էջ 278:

կամ չարիք, երկրորդը, ամբողջ հասարակության կողմից հատուցման տեսանկյունից: Հետո, երբ մարդը կարգավորում է իր գործողությունը անմիջականորեն ամբողջ հասարակության բարիքի կամ չարիքի նկատմամբ, ապա նրան հատուցել, առաջին հերթին, պարտավոր է ամբողջ հասարակությունը, իսկ երկրորդը՝ հասարակության բոլոր հատվածները: Երբ մարդը կատարում է ինչ-որ բան, որը կողմնորոշված է սեփական շահույթին կամ վնասին, ապա այս դեպքում նրան անհրաժեշտ է հատուցել նրան համապատասխան, թե որքանով է արարքը արտահայտվել հասարակության վրա, այլ ոչ նրան համապատասխան, թե որքանով է այն արտահայտվել վերջինիս սեփական անձի վրա, բացառությամբ այն դեպքի, երբ նա պարտավոր է իրեն փոխհատուցել, այն իմաստով, որով մարդու վերաբերյալ խոսում են, որ նա պետք է լինի արդարացի սեփական անձի նկատմամբ»⁸⁶: Եվ հետո. «Շարադրվածից պարզ է, որ գործողության բարին կամ չարը արժանի են գովասանքի կամ պարսավանքի այնքանով, որքանով այն գտնվում է կամքի իշխանության ներքո, որ այն ճշմարիտ կամ մեղսական է նպատակի նկատմամբ իր նպատակաուղղվածությամբ և որ դրա համար պարգևատրման կամ դատապարտման չափը կախված է ուրիշի նկատմամբ դրա արդարության կամ անարդարության չափից»⁸⁷:

Արդարությունը, նման կերպ, հանդիսանում է հարաբերական բարիք սակայն ոչ միայն և ոչ միայն բարիք ուրիշի նկատմամբ, որքան տվյալ հասարակության պատկերացումների արտահայտում նրա վերաբերյալ, թե ինչ է հանդիսանում բարիքը տվյալ ամբողջ հասարակության համար, և միայն հետագայում՝ տվյալ հասարակության յուրաքանչյուր կոնկրետ անդամի համար: Համապատասխանաբար, բարիքը ձեռք է բերում իրավունքում իր ընթացիք ձևերը, դառնում է (յուրօրինակ) հասարակական բարիք:

Այսպես, արդարության սուբեկտ, կարելի է պնդել, հանդիսանում է հասարակությունը, որը և հանդիսանում է իրավունքի սուբյեկտ: Միևնույն ժամանակ ճշգրտորեն նույն կերպ, բարիքի սուբյեկտ հանդիսանում է հասարակությունը: Բացի դրանից, իրավասուբյեկտիվությունը սկզբունքորեն հանգեցվում է մեծամասամբ, «բարիքի սուբյեկտին»: Եվ այդ իմաստով իրավունքը որպես սոցիալական բարիք

⁸⁶ Տե՛ս **Фома Аквинский**. Նշվ. աշխ., էջ 280-281.

⁸⁷ Նույն տեղը, էջ 281:

համատեքստում կարելի է դիտարկվել հետևյալ դրույթը, որքան շատ սուբյկտը իրավունքներ ունի տարբեր տեսակի բարիքների նկատմամբ և անկախ դրանց բնույթից, այնքան ավելին է նրա պարտականությունները և պատասխանատվությունը, ինչպես դրանց պահպանության, այնպես էլ ամբողջ հասարակության առջև, միևնույն ժամանակ այնքանով, որքանով հասարակությունը, եթե անմիջականորեն նրան չի օժտել այդ բարիքով, բոլոր դեպքերում թույլատրում է իրերի գոյության նման իրավիճակ:

Համապատասխանաբար իրավաբանական պատասխանատվության ենթարկման ժամանակ տույժերի «նյութականացումը» հանդիսանում է իրավունքի որպես «ֆիզիկական աշխարհում» բարիքի ձև նյութականացման արտացոլման տեսակներից մեկը: Այդ իմաստով, հավանաբար իրավունքը երբեք չի հասնում բացարձակ բարոյականության աստիճանին, որի նյութականացումը «ֆիզիկական աշխարհում» ունեն այլ արտահայտումներ՝ զգացմունքներ և ազդեցություններ զգացմունքների վրա: Իրավունքը սահմանափակվում է ոլորտներով, որտեղ գործում է գիտակցությունը, միևնույն ժամանակ մերժում իր անմիջական ազդեցությունում նրանց, ում չի դիտարկում (համապատասխան ենթատեքստերում) որպես «գիտակից էակ»:

Չնայած իրավունքի գիտակցության ոլորտով սահմանափակվածության պնդմանը հիմնականում արդարացի է, սակայն գործնականում դա լիարժեք ճշմարիտ չէ:

Այսպես, իրավունքի ժամանակակից սահմանափակվածությունը որպես բացարձակ «օգտակարի» և ռացիոնալի հասկացությունում ռելեֆային ցուցադրում է, օրինակ, այսպես կոչված՝ «իրավունքի տնտեսական տեսության» հայեցակարգը⁸⁸, որը անտեսում է իրավունքի որպես էսթետիկ պատկերացումների, բարոյական իրավունքի աճի տենդենցները, այսինքն բարիքի, որը ընկալվում է ոչ միայն որպես «օգտակար», այլ նաև որպես «գեղեցիկ»:

Իրավունքի տնտեսական տեսությունը շատ տարաված չէ որպես հայեցակարգ և ըստ էության չի մշակվել ինքնուրույն իրավաբանական գիտությունում: Միևնույն ժամանակ այնքանով, որքանով իրավունքի տնտեսական տեսությունը ոչ միայն գոյություն ունի որպես յուրօրինակ երևույթ իրավաբանական հետազոտություններում,

⁸⁸ Մանրամասն տե՛ս **Познер Р.** Экономический анализ права в двух томах. СПб., 2004, с. 49-50.

այլ հանդիսանում է առարկա, որը դասավանդվում է ինքնուրույնի որակով Եվրոպայի համալսարաններում, հատկապես ԳԴՀ-ում բացի դրանից, հաճախ հանդես է գալիս որպես հայեցակարգային հիմնավորում օրենսդրության զարգացման ժամանակ, ինչպես նաև արևմտյան երկրների իրավակիրառական գործնականում և արդարադատության համակարգերում, անհրաժեշտ է փոքր ինչ մանրամասն կանգ առնել դրա որոշ հիմնական դրույթների և մոտեցումների վրա:

Իրավունքի տնտեսական տեսության տարրական հիմնավորումը կարելի է գտնել, օրինակ, Խ.Ի. Շմիդտ-Տրենցի մոտ, ով կառուցում է համապատասխան հայեցակարգ Թ. Հոբսի, Զ. Լոկի, Ժ.-ժ. Ռուսոի ուսուցումներից. «Ի՞նչ դրույթներ են հանդիսանում որոշիչ: Հասարակությունում, որտեղ բացակայում է օրենքը, յուրաքանչյուրը տիրապետում է իրեն և իր հարազատներին ապահովելու երեք հնարավորություններով, արտադրել անհրաժեշտը սեփական ուժերով, ձեռք բերել անհրաժեշտը մյուսների մոտ պաշտպանել արտադրածը կամ թալանածը»⁸⁹: Եվ հետո. «Տնտեսապես շահավետ կլինե՞ր ներդնել բոոր առկա ռեսուրսները արտադրությունում: Այդ եզրակացությունը ակնհայտ է: Այդ իսկ պատճառով Հոբսը, ինչպես և սոցիալական պայմանագրի հետևորդները, Զոն Լոկը և Ժան-ժակ Ռուսոն, հղվում են մարդկանց կոլեկտիվային գիտակցությունից, որը ստիպում է նրանց գործել օպտիմալ արդյունքի ձեռք բերման համար»⁹⁰:

Համապատասխան կերպ հասարակական պայմանագիրը, Խ.Ի. Շմիդտ-Տրենցի հասկացությունում, «պետք է պարունակի երկու պարզ հիմնական կանոններ: Առաջին հերթին ներառում է սեփականության ինստիտուտը, այսինքն արդյունաբերական ապրանքների տիրապետման, սպառման, կիրառության իրավունքը, որը միաժամանակ նշանակում է նշված գործընթացներից երրորդ անձանց բացառումը: Նման հասարակական պայմանագրի կամ կոնսենսուսի երկրորդ հենարան հանդիսանում է պայմանագրային կանոնի ձևավորումը, որը թույլատրում է ապրանքների խախադ փոխանակություն: Դա ենթադրում է տվյալ իրավունքը երրորդ

⁸⁹ St'и Основы германского и международного экономического права: учеб. пособие / Х. Й. Шмитд-Тренц, Ю. Плате. М. Пашкеи др. СПб., 2007. С. 29.

⁹⁰ Նույն տեղը, էջ 29-30:

անձանց փոխանցան հնարավորության առկայությունը»⁹¹: Եվ արդյունքում, ըստ գերմանցի գիտնականի կարծիքի, «այսպիսով, մարդկությունը կարող է փոխանցվել կյանքի առավել բարձր մակարդակի աշխատանքի մասնագիտացման և բաժանման ուղիով: Իրավունքի տնտեսական մոտեցումը երաշխավորված է այն պայմանի դեպքում, որ գործընթացի բոլոր մասնակիցները պահպանում են նշված կանոնները»⁹²:

Իրավունքի տնտեսական տեսության տվյալ հայեցակարգում կարևոր բաղադրիչ հանդիսանում է, այսպես կոչված, «պետություն-խնամակալը». «Սկզբունքորեն պետություն-խնամակալը իրենից ներկայացնում է իդեալական և, բնականաբար, արդար գործարարների հասարակություն»⁹³: Ջոջումով նշվում է, որ «ոչ բոլոր մարդիկ են հետևում կանոններին և ոչ բոլորն են հանդիսանում բացարձակ և անկասկած արդար»⁹⁴, Խ.Ի. Շմիդտ-Տրենցը կանխադրում է հետևյալ դրույթը. «Օրենքները պետք է ուղեկցվեն տույժերով, հատկապես եթե ենթադրում ենք, որ մարդկային բնույթին բնորոշ է այնպիսի հատկություն, ինչպես անսկզբունքայնությունը և հարմարվողականությունը»⁹⁵: Սակայն դիտարկվող հայեցակարգի շրջանակներում ցուցվում է, որ «արդարադատությունը ինքնանպատակ չէ»⁹⁶, քանի որ «յուրաքանչյուր մարդու դրդապատճառը բավականին պարզ է. արդարադատությունը և ոստիկանությունը պետք է լինեն նրան օգտակար, քան լիարժեք անարխիան»⁹⁷:

Ինչպես երևում է, չնայած դիտարկվող հայեցակարգում առկա, չնայած թեկուզ ոչ բացահայտ արտահատված, լիարժեք ռացիոնալ հիմնավորված համապատասխան իրավակարգի հավակնությանը, դրա բարոյական հիմնավորման որոշ ասպեկտներից խուսափել բոլոր դեպքերում չի հաջողվում: Բոլոր դեպքերում հայեցակարգի էթիկ հիմքը հանդիսանում է լիարժեք սպառված *pacta sunt servanda* «պայմանագրերը պետք է կատարվեն» սկզբունքը, քանի որ նույնիսկ ֆիզիկական կողոպուտի արգելանքը նման «տեսանկյունով» հանգեցվում է միայն նրան, որ պայմանագրի կատարման

⁹¹ Նույն տեղը:

⁹² Նույն տեղը:

⁹³ Основы германского и международного экономического права: учеб. пособие / Х. Й. Шмитд-Тренц, Ю. Плате. М. Пашкеи др. СПб., 2007. С. 30.

⁹⁴ Նույն տեղը, էջ 30-31:

⁹⁵ Նույն տեղը:

⁹⁶ Նույն տեղը:

⁹⁷ Նույն տեղը, էջ 31:

սկզբունքը, լայն իմաստով, ենթադրում է նաև այն, որ, օրինակ, չի թույլատրվում պաշտոնական առգրավում», այստեղ կամքից անկախ ընկալվում է հայտնի ասացվածքը. «պայմանավորվածը փողից թանկ է» որպես իրավունքի տնտեսական հայեցակարգի «ալֆա և օմեգա»: Անհրաժեշտ է նաև հիշեցնել, որ այն ավանդաբար մեկնաբանում են հեհտևյալ կերպ. «Ասացվածքը սկիզբ է առնում հին ավադույթներից, պայմանավորվելով առքուվաճառքի մասին, հավատում էին բանավոր պայմանավորվածությանը, առանց ստորագրությունների դիմելու»⁹⁸: Եվ հետո. «Եթե պայմանավորվել եք ինչ-որ բանի վերաբերյալ, ապա անհրաժեշտ է արդար կատարել սեփական պարտավորությունները (քանի որ արդարությունը, արդար անունը փողից թանկ է)»⁹⁹:

Միևնույն ժամանակ, վերադառնելով դիտարկվող հայեցակարգին, ուշադրություն է գրավում նաև հետևյալ պահը, ինչպես արդեն ասվեց, հաշվետու լինելով սեփական անձի առջև, որ «ոչ բոլոր անձինք են հետևում կանոններին և ոչ բոլորն են հանդիսանում բացարձակ և անվերապահ արդար», Խ.-Ի. Շմիդտ-Տրենցը լրջորեն, ինչպես թվում է, մտահոգված է հարցով, «կարելի է արդյո՞ք հուսալ մարդու գիտակցության և նրա ցանկության վրա թեկուզ մասնակիորեն կրել պատասխանատվություն իրենց գործողությունների համար, իսկ պետական դատարան դիմել միայն հազվադեպ, չկանխատեսված և բարդ հանգամանքներում: Թե անհրաժեշտ է տրամադրել իրավունք հարնդհանուր, բոլորին և յուրաքանչյուրին հասանելի (անվճար) դատական պաշտպանությունում»¹⁰⁰: Եվ հետո, հարցադրելով. «Կարելի է արդյո՞ք դիտագրկել իրավունքը որպես անվճար ծառայություն»¹⁰¹ - բխում է պատասխանը. «Տեսականորեն դա հնարավոր է, գործնականում՝ շատ թանկ և կարող է արդյունքում հանգեցնել իրավական պետության քայքայմանը ներսից»¹⁰²:

Դեռ ձեռնպահ մնալով ներկայացված տնտեսական տեսության հայեցակարգի քննադատությունից դրա բարոյականության տեսանկյունից, որը, հենց իր կողմից մերժվում է և՛ որպես հիմնավորման տարր, և՛ որպես արժեք՝ անհրաժեշտ է ընդգծել

⁹⁸ Նույն տեղը:

⁹⁹ Տե՛ս **Познер Р.** Экономический анализ права в двух томах. СПб., 2004. С. 42-43.

¹⁰⁰ Основы германского и международного экономического права. С.32.

¹⁰¹ Նույն տեղը:

¹⁰² Նույն տեղը:

երկու պահերի, որոնք մեծ կասկածի տակ են առնում վերջինիս:

Առաջինը, դա տարրական տրամաբանական սխալ է, որը կատարվել է ներկայացված հայեցակարգի հեղինակների կողմից, իսկ հատկապես այն, որ «սեփական գործողությունների համար պատասխանատվություն կրելու ցանկությունը» որևէ կերպ կապված չէ դատարան դիմելու անհրաժեշտության հետ, քանի որ դատարանում, ակնհայտ է, դիմում են նրանց նկատմամբ, ով չի ցանկանում պատասխանատվություն կրել իրենց գործողությունների համար, որով և հայցվորին պատվճառվել է վնաս, որով և պայմանավորվել է դատարան դիմելը:

Այլ խոսքերով, ըստ էության, դատարան հասցեավորված է նա, ով չի ցանկանում է կրել պատասխանատվություն իրենց գործողությունների համար, և որևէ կերպ ոչ հակառակ:

Երկրորդը, տնտեսական օպտիմումը, որի ձեռք բերումը ենթադրվում է նաև որպես նպատակ, և որպես իրավակարգի գործման արդյունք, հենվում է իրավունքի տնտեսական տեսության հայեցակարգի առաջարկի և դրա պայմանագրի ազատության բազային սկզբունքի վրա, վաղուց մերժվել է տարբեր հասարակությունների և պետությունների, ներառելով Գերմանիան, տնտեսական զարգացման փորձով: Դեռ չդիմելով բացարձակ տնտեսական հաշվարկներին, գաղափարներին և փաստերին՝ սկզբում անհրաժեշտ է սահմանափակվել հասարակական հարաբերություններում և մասնավորապես տնտեսությունում պայմանագրի ազատության սկզբունքի գործադրման տարրական և ընդհանուր հայտնի հետևանքներով:

Հայտնի է, որ հիմնադրույթում պայմանագրի ազատության սկզբունքը որպես այդպիսին ի սկզբանե ենթադրում է չորս բաղադրիչներ. 1) պայմանագիր կնքելու ազատություն, 2) ըստ պայմանագրի հակագործակալ ընտրելու ազատություն, 3) պայմանագրի բովանդակության հաստատման ազատություն, 4) պայմանագիրը կասեցնելու ազատություն:

Սակայն փորձից հայտնի է նաև այն, թե գործնականում ինչ ձևեր է ձեռք բերում պայմանագրի ազատության սկզբունքը, ինչպես նաև դրա իրականացման համապատասխան սոցիալական և տնտեսական հետևանքները:

Իրավունքի համար «բնական» դարձած սոցիալական ինստիտուտի իրերի իրավիճակին հակառակ, արդեն վերևում նշված Խ.-Ի. Շմիդտ-Տրենցը, իր կողմից առաջարկված իրավունքի տնտեսական տեսության հայեցակարգի հետ կապված, լրջորեն հարց է առաջադրում. «Կարելի է արդյո՞ք դիտարկել իրավունքը որպես անվճար ծառայություն»¹⁰³, - և պատասխանում. «Տեսականորեն դա հնարավոր է, գործնականում՝ շատ թանկ և աղյուծում կարող է հանգեցնել իրավական պետության քայքայմանը ներսից»¹⁰⁴: Այլ խոսքերով, անկասկած, փոքր ինչ պարզեցնելով, կարելի է ասել, որ, համապատասխանաբար, արդարադատությունը որպես սոցիալական ինստիտուտ իր դերում հանգեցվում է ավելի շատ հարուստների «սպասարկմանը»՝ ակնհայտորեն, ոչ վերջին հերթին աղքատների հաշվին, որը սակայն ոչ թե որպես այդպիսին խեղաթյուրում է արդարադատության արժեքը և իմաստը, այլ նաև ըստ էության ոչնչացնում այն ընդհանրապես բնականոն ընկալման մեջ:

Սակայն դա այսբերգի միայն գագաթն է: Սկզբունքային խնդիրը, որը ծառայած է վերջին հարցի և դրան առաջարկված պատասխանի հետևում, որը ընկալում է «բոլորի դեմ բոլորի պատերազմը» և ուժեղի իրավունքը որպես աքիոմա, որպես հասարակական հարաբերություններում իրավական կարգավորումից դուրս «նորմա», կայանում է մարդու բնույթի և որպես բորայական էակ, և որպես իրավաբանական էական թերագնահատման մեջ:

Այլ խոսքերով, սոցիալական հարաբերությունների պարզեցումը, որը անհրաժեշտ է սոցիալական կառավարման այս կամ այն մեթոդների ազդեցության տարրական արդյունավետության համար, ինքն իրեն կարող է հանդիսանալ հասարակական զարգացման և դրա առաջըթացի նորմալ պահանջների հետ հակադրմամբ ընթացող, ինչը բնորոշ է ժամանակակից հասարակության և պետությունների մեծամասնությանը: Դա բացարձակ ակնհայտ է վերը շարադրված իրավունքի տնտեսական տեսության գերմանական հայեցակարգի նկատմամբ, դա մասնակիորեն կարելի է վերագրել նաև Ռ. Պոզների հիշատակված հետազոտությանը, ինչպես նաև մի շարք ուրիշներին:

Անգլո-ամերիկյան մոտեցումներում «իրավունքի տնտեսական տեսությունը», առավել հստակորեն իրավունքի տնտեսական վերլուծության հայեցակարգը չի կրում

¹⁰³ Основы германского и международного экономического права. С. 32.

¹⁰⁴ Նույն տեղը:

այդքան արմատական բնույթ, ինչպես վերը շարադրված գերմանական մոտեցումներից որևէ մեկը¹⁰⁵:

Դրա հետ կապված հետաքրքրական է քրեական օրենսդրության առաջընթաց զարգաման ևս մեկ տեսանկյուն, իսկ առավել ճիշտ քրեական օրենսդրության զարգացման ձևի ընտրությունը, դրա որպես հասարակական բարիքի վերաբերյալ պատկերացումների ձևի գնահատման տեսանկյունից:

Այսպես, օրինակ, դիտարկելով քրեական օրենսդրության կատարելագործման, դրա տեսական մոդելավորան խնդիրները, գիտնականները նկատում են, մասնավորապես, հետևյալը. Քրեական օրենսգրքի (ՔՕ) ընդանուր բնույթի բացահայտման ժամանակ, ամենից առաջ, քննարկման է ենթակա հետևյալ այլընտրանքը, պետք է արդյոք նման օրենսգիրքը լինի, ինչպես ասում են, «նվազ, սակայն դաժան», ասինքն ներառի միայն բավականին բարձր աստիճանի հասարակական վտանգավորության արարքներ և նախատեսի դրանց համար համապատասխանաբար ադեցության խիստ միջոցներ, կամ, հակառակը, ապագա օրենսգիրքը չպետք է սահմանափակվի միայն այդ շրջանակով, այլ կարող է ներառել նաև ոչ այդքան բարձր աստիճանի հասարակական վտանգավորության կազմեր: Եվ հետո. առաջին հայացքով, որքան գրավիչ է առաջին մոդելը՝ ՔՕ միայն ամենալուրջ արարքների ներառումը, քանի որ այն բարձր աստիճանով համապատասխանում է քրեական ճնշման սահմանափակման սկզբունքին, դրա ընդունումը կնշանակի, որ. ա) ՔՕ նախատեսված պատժի միջոցները պետք է լինեն բավականին խիստ, ազատազրկման մինիմումը պետք է նշանակվի բավականին բարձր սահմանագծից, իսկ ազատազրկման հետ չկապված միջոցներին կհատկացվեն բավականին համեստ տեղ, բ) նման դեպքում բավականին սահմանափակված պետք է ներկայացվի պատժից ազատան համակարգը, իսկ ինչ վերաբերվում է քրեական պատասխանատվությունից անհատական ազատման հնարավորությանը, ապա դրա համար ընդհանրապես տեղ չի մնա, գ) բավականին բարձր հասարակական վտանգավորության աստիճանի չհասնող արարքները նրա համար, որ չներառվեն նվազ, սական խիստ ՔՕ կհայտնվեն ադմինիստրատիվ արդարադատության ոլորտ, որի արդյունավետությունը դեռ ցածր է,

¹⁰⁵ Մանրամասն տե՛ս **Познер Р.** Экономический анализ права. В двух томах. СПб, 2004.

քան քրեական դատավարությանը: Միննույն ժամանակ «միջին ծանրության» կամ պակաս վտանգավոր հանցագործությունների հետ պայքարը պետք է լինի բավականին արդյունավետ»¹⁰⁶:

Հասարակական գիտակցությամբ արդարությունը հանդիսանում է յուրօրինակ բարոյական պատկերացում, որը միննույն ժամանակ ներառում է տվյալ հանգամանքերում տվյալ հասարակության նպատակ ենթադրող, և նպատակ սպասարկող ընտրությունը՝ բարոյական բարիքի էությունը: Համապատասխաաբար, իրավունքը տվյալ դեպքում որպես արդարության ձև, միաժամանակ հանդիսանում է նաև բարոյականության ձևերից մեկը, և այդ իմաստով, նորից բարիք, սակայն որևէ կերպ չի հանդիսանում դրա, ինչպես ընդունված է ասել, «բարոյական մինիմումի» արտահայտում, իրավունքում առաջին հերթին արտահայտվում է պատասխանատվության սկզբունքը տվյալ սուբյեկտի գործողություններում, որը վերջինիցս պահանջում է տվյալ, համապատասխան հասարակությունը, այդ թվում նաև յուրօրինակ որակով, օրինակ, արդարության վերաբերյալ ընդհանուր պատկերացումների հակադրություն, և մյուս կողմից, առաքինություն և այլ բարոյական հասկացություններ՝ (ընդհանուր) ընդունված հասարակական կյանքի տվյալ կոնկրետ պայմաններում:

Մյուս կողմից, անհրաժեշտ է նշել նաև հետևյալը: Նրա վերաբերյալ դրությունը, որ որքան շատ է սուբյեկտի իրավունքները բարիքի նկատմամբ, այնքան շատ են նրա պարտականությունները և պարտավորությունները, շարադրված վերևում, չի կարելի ընդունել բացարձակ: Այլ խոսքերով, փորձը, մեծամասամբ վկայում է հակառակի վերաբերյալ, որքան շատ իրավունքներ ունի սուբյեկտը՝ այնքան շատ է մյուսների մոտ իր նկատմամբ պարտականությունները և պարտավորությունները¹⁰⁷: Հիմնականում դա այդպես է: Սակայն «բարիքի տիրապետողի» նկատմամբ պարտականությունների և պարտավորությունների հիմնավորումը իր բարիքի ծավալին համամասնական իրականում էական աստիճանով առկա է բարոյականության ոլորտում,

¹⁰⁶ Քրեաիրավական պատասխանատվության և պատժի վերաբերյալ ժամանակակից մոտեցումները տե՛ս **Аветисян Сержик** Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016.

¹⁰⁷ Տե՛ս **Ершов В.В., Ашмарина Е.М., Корнев В.Н.** Экономическое право и экономическая теория //Государство и право. 2015, № 1, с. 57-58.

հասարակությունը թույլատրում է իր անդամների միջև բարիքի անհավասարաչափ բաշխում, քանի որ դրա համար գոյություն ունի որոշակի բարոյական հիմք՝ ասենք, ինչպես հասարակական բարոյականության տարրը: Հիմնական էթիկ խնդիրը այստեղ հանգեցվում է նրան, որ իրավական կարգավիճակը, իսկ հատկապես տարբերությունը իրավական կարգավիճակում, ժամանակի ընթացքում կորցնում է կապը յուրաքանչյուր կոնկրետ մարդու (կամ իրավունքի այլ սուբյեկտի) հետ, սակայն հանդիսանում է արստրակցում, որը կիրառվում է կոնկրետ հանգամանքների նկատմամբ անկախ կոնկրետ անձից և նրա մարդկային և այլ հատկանիշներից, այլ իրերի ընդհանուր իրավիճակի ուժով: Այլ գործոններ, որոնք պայմանավորում են այս կամ այն, սակայն իրավունքի և պարտականությունների ոչ հավասար արժեքային և հավասարաչափ բաշխումը այս կամ այն հասարակությունում, հանդիսանում են հասարակությունում անձի՝ գլխավորապես կենսագործունեության տարբեր ոլորտներում անկախությանը վերաբերվող կան պատկերացումները: Այսպես, նույնիսկ ժամանակակից ժողովրդավարական պետություններում պահպանվում է «մեծության վիրավորման» վերաբերյալ նորմը՝ լինի դա պատգամավորական անձեռնմխելիությունը կամ պաշտոնային պարտականությունները իրականացնելիս պաշտոնավոր անձանց նկատմամբ հանցագործության համար բարձրեցված տույժերը, և այլն, մյուս կողմից, նույն կերպ, սակայն գոյություն ունի բարիքի փաստացի վերաբաշխում հասարակության անդամների միջև, հիմնականում այսպես կոչված «սոցիալական պաշտպանության» ոլորտներում, բացի դրանից պետությունների մեծամասնությունը իրենց իրավական համակարգերում պահպանում են ինչպես ազգայնականության, այնպես էլ օտարման վերաբերյալ նորմաները, դրանով իսկ պահպանելով բարիքների փաստացի վերանայման իրավունքը՝ այս կամ այն ծավալով, այս կամ այն հանգամանքներում և այլն:

Այլ խոսքերով, այս կամ այն, սակայն որպես կանոն, ընդհանուրին (ամբողջին) հավակնություն ունեցող հասարակական բարիքի վերաբերյալ պատկերացումները սահանում են արդարության տեղը դրանց բաշխման և կիրառության մեջ, ինչպես նաև դրանց համապատասխանող իրավական ձևերը:

Արդարության սուբյեկտ հանդիսանում է հասարակությունը, սակայն բարիքի

սուբյեկտը, հանդիսանում է հասարակությունը:

Եվ այստեղ արդեն տեղին է նորից հիշել Արիստոտելին, ով խոսում է «թվաբանական համամասնության» և «երկրաչափական համամասնության» վերաբերյալ, որի արդարության վերաբերյալ պատկերացումների իրականացմանը կիրառական էությունը ևս հաջողությամբ զարգացվել է Թոմաս Աքվինացու կողմից, իսկ հատկապես. «արդարությունը վերաբերվում է որոշակի արտաքին գործողություններին, իսկ հատկապես, բաշխմանը և փոխանակությանը»¹⁰⁸, «բաշխիչ արդարությունը տրամադրում է առարկաները մասնավեր անձանց այնքանով, որքանով, այն ինչը պատկանում է ամբողջին, պատկանում է նաև դրա հատվածներին: Եվ որքան կարևոր նշանակություն ունեն ամբողջի համար [այս կամ այն] հատվածները, այնքան շատ, իրականում, բաշխում է նրանց վերաբերվում: Նույն կերպ, բաշխիչ արդարության վերաբերյալ, որքան նշանակալից են [տվյալ] քաղաքական համայքում [այս կամ այն] անձինք, այնքան ընդհանուր [արդյունքի] մեծ [հատված] է նրանց պատկանում»¹⁰⁹: Եվ հետո. «Արդարության հիմնական ձևը հանդիսանում է հավասարությունը, որում բաշխիչ և հաղորդակցական համամասնությունը ձեռք են բերվում [միմիայնց հետ] համաձայնությունում: Սակայն բաշխիչ արդարությունում հավասարությունը իրականացվում է երկրաչափական համամասնությամբ, այն դեպքում, երբ հաղորդակցական արդարությունում հավասարությունը իրականացվում է թվաբանական համամասնությունում»¹¹⁰: Եվ նույն կերպ, «գործողությունում՝ և լինելով [ինչ-որ/որևէ մեկի] գործողությանը, [այս կամ այն] անձի կարգավիճակին ենթակա սեղծվում է գործնական, քանակական տարբերություն: Օրինակ, գոյություն ունի մեծ անարդարություն նրանում, եթե ինչ-որ մեկը մահափորձ է կատարում կառավարության վրա, քան մահափորձ է կատարում մասնավոր անձի նկատմամբ: Եվ այդ իսկ պատճառով բաշխիչ արդարությունում մենք [միշտ] դիտարկում ենք որպես այդպիսին անձանց կարգավիճակը, իսկ հաղորդակցական արդարությունում անձանց կարգավիճակը դիտարկվում է միայն այնքանով, որքանով այդ կարգավիճակը

¹⁰⁸ **Thomas Aquinas**, St. [Summat theological. English. Selections.] On law, morality, and politics / Thomas Aquinas, translated by Richard **J. Regan**, edited, with introduction, notes, and glossary by **William P. Baumgarth and Richard J. Ijegan**. 2nd ed. indianapolis, Cambridge, 2002. P. 127.

¹⁰⁹ Նույն տեղը, էջ 125:

¹¹⁰ Նույն տեղը, էջ 126:

առաջացնում է [կոնկրետ] գործնական տարբերություններ»¹¹¹:

Միևնույն ժամանակ Թովմա Աքվինացու արդարությունում և՛ բաշխիչ, և՛ հաղորդակցական արդարությունը ունեն միևնույն առարկան՝ արտաքին գործողությունների նկատմամբ. «Գործողությունները վերաբերվում են արտաքին առարկաների կիրառությանը՝ լինեն դրանք առարկաներ, անձինք կամ նույնիսկ գործունեություն [որպես այդպիսին]: Գործողությունը վերաբերվում է առարկաների կիրառությանը, օրինակ, այն դեպքում, երբ մեկը բռնագրավում կամ վերականգնում է այլ անձի սեփականությունը: Գործողությունները վերաբերվում են անձանց, օրինակ, այն դեպքում, երբ ինչ-որ մեկը վարվում է անարդարացի մարդկային էակի ցանկացած անձի նկատմամբ (օրինակ, նրան հարվածելով կամ վիրավորելով) կամ արտահայտվում է հարգանք [տվյալ] անձի նկատմամբ: Գործողությունը վերաբերվում է գործունեության կիրառությանը, օրինակ, այն դեպքում, երբ ինչ-որ մեկը օրինաչափորեն պահանջում է գործողություններ մյուսից կամ մյուսին ծառայություն է մատուցում: Այդ իսկ պատճառով, եթե բաշխման և հաղորդակցության արդարության առարկայի որակով ընկալենք առարկաները, որոնք կիրառվում են արտաքին գործողության մեջ, ապա [կպարզվի, որ] արդարության երկու տարատեսակները ունեն միևնույն առարկան»¹¹², «Սակայն, եթե մենք ընկալենք արդարության երկու տարատեսակությունների առարկան որպես գործողություններ, որոնցում մենք օգտագործում ենք անձանց, առարկաններ կամ գործունեություն, այդ դեպքում յուրաքանչյուր [արդարության տարատեսակության] առարկաները տարբեր կլինեն, քանի որ բաշխիչ արդարությունը կառավարում է ընդհանուրի [արդյունքի] բաշխումը, իսկ հաղորդակցական արդարությունը կառավարում է փոխանակությունները, որոնք մենք կարող ենք դիտարկել երկու անձանց միջև»¹¹³:

Ի վերջո, տվյալ դեպքում ուշադրության արժանի է ևս մեկ ասպեկտ, որը նշվել է Թովմա Աքվինացու կողմից՝ գործողության բնույթի վերաբերյալ, որոնց վերաբերվում է հաղորդակցական արդարությինը. «Այդ գործողություններից որոշները հանդիսանում են ստիպողական, մյուսները՝ ինքնակամ: Գործողությունները հանդիսանում են

¹¹¹ Նույն տեղը:

¹¹² Նույն տեղը, էջ 127:

¹¹³ Նույն տեղը:

ստիպողական այն դեպքում, եթե ինչ-որ մեկը օգտագործում է ունեցվածքը, կամ անձին, կամ մյուսի գործունեությունը նրա կամքին դեմ: Իրականում դա հաճախ գաղտնի է տեղի ունենում, խաբեության ուղիով, և, երբեմն, բացահայտորեն՝ բռնության միջոցով»¹¹⁴: «Մենք խոսում ենք ինքնակամ փոխանակման վերաբերյալ, երբ որևէ՝ մեկը ինքնակամ փոխանցում է իր սեփականությունը մյուսին»¹¹⁵: Սակայն, բոլոր այս գործողությունները, լինեն ինքնա կամ, կամ ստիպողական, ունեն միևնույն բնույթը՝ միջոցների ձեռքբերում [դրանց] հավասար փոխատուցմամբ»¹¹⁶:

Այսպիսով, կարելի է ասել, որ իրավունքը իրականացնում (և իրականացվում) է հասարակական բարիքների արժանի (այսինքն «արդարացի») բաշխմամբ:

Օբյեկտիվային իրավունքը հանդիսանում է հասարակական բարիքի բաշխման ընդհանուր ձև («բանաձև»):

Սուբյեկտիվային իրավունքը հանդիսանում է հասարակական բարիքի արդարացի («արժանի») բաշխման (կոնկրետ) ձև:

Այս տեսանկյունից իրավունքը հանդիսանում է ոչ թե ուղղակի բարիքի բաշխման ձև, այլ նաև միաժամանակ որպես այդպիսին՝ բարիք, ընդ որում հանդես է գալիս և որպես յուրօրինակ բարիք, և որպես հասարակական բարիքի (արդարացի) բաշխման ձևակերպված ակտ:

Այն, ինչում կայանում է արդարությունը, սահմանվում է տվյալ համայքի ռեսուսով և կյանքի ենթատեքստով, ինչպես նաև նրա ընդհանուր արժեքների համակարգով: Այս տեսանկյունից հասարակական պատկերացումներում արդարության կոնկրետ՝ այս կամ այն, «բովանդակությունը» մի շարք հարաբերություններում դինամիկ է:

Եվ իրավունքի պատկերացումներում որպես բարիքի ձև «գեղեցիկի» և «օգտակարի», «նպատակի» և «միջոցի» հակադրության պարադոքսի ավարտական լուծման մեջ, այսինքն այստեղ նախնական առաջադրված հարցում մեծամասամբ օրինակ հանդիսանում է «Պլատոնի անձավի» հայեցակարգը: Կարճ անհրաժեշտ է կանգ առնել դրա վրա:

«Պատկերացրեք, որ մարդիկ գտվում են անձավի նման ստորգետնյա

¹¹⁴ Նույն տեղը, էջ 127-128:

¹¹⁵ Նույն տեղը, էջ 128:

¹¹⁶ Նույն տեղը, էջ 129:

բնակավայրում, որտեղ դրա ամբողջ երկարությամբ լայն լուսանցք է ձգվում: Փոքր տարիքից նրանց ոտքերի և պարանոցի վրա կապաններ են, այնպես, որ մարդիկ չեն շարժվում տեղից և տեսնում են միայն այն, ինչ անմիջապես իրենց աչքերի առջև է, քանի որ գլուխը շրջել չեն կարողանում այդ կապանների հետևանքով: Մարդիկ մեջքով են շրջված լույսին, որը բխում է հեռավոր վերևում վառվող կրակից, իսկ կրակի և նեղ միջանցքի միջև անցնում է վերին ճանապարհը, սահմանափակված ցածր պատով, այն միջնապատի նման, որի հետևում աճաբարարը տեղակայում է իր օգնականներին, երբ վերևում ցուցադրում է տիկնիկներին: ...Այդ պատի հետևում այլ մարդիկ տարբեր սպասք են կրում, այն պահելով այնպես, որ դա երևում է պատի վրա, տանում են նաև արձանիկներ և կենդանի էակների տարբեր պատկերներ, որոնք պատրասված են քարից և փայտից: Միևնույն ժամանակ կրողներից ոմանք խոսում են, մյուսները լռում:

Ամենից առաջ արդյո՞ք դու մտածում ես, որ գտնվելով այդպիսի իրավիճակում, մարդիկ ինչ-որ բան են տեսնում, բացի իր կամ մյուսների ստվերներից, որը կրակի կողմից արտապատկերվում է իրենց առջև քարանձավի պատի վրա:

Նման գերիները ամբողջովին և լիարիժեքորեն ճշմարտության տեղ կընդունեին իրենց կողքով տարվող առարկաների ստվերները: ... Երբ նրանցից որևէ մեկից հեռացվեն կապանները, ստիպեն նրան կանգնել, շրջել գլուխը, քայլել, վերև նայել՝ լույսի կողմ, նրա համար ցավալի կլինի հիշել այդ ամենը, նա ունակ չի լինի վառ լուսավորման ժամանակ դիտել այն առարկաներին, որոնց ստվերները նա տեսել է նախկինում: Այստեղ անհրաժեշտ է սովորույթը, եթե նրան վիճակված է տեսնել այն ամենը, ինչ այնտեղ, վերևում է:

Վերհիշելով իր նախկին բնակատեղին, այնտեղի խորհուրդը և ըստ ազատագրկման ընկերներին՝ արդյո՞ք չի համարի իր կարգավիճակի փոփոխությունը երանելի և արդյո՞ք չի խղճա նա իր ընկերներին:

Վեր բարձրացումը և վերևում գտնվող առարկաների դիտումը՝ դա հոգու բարձրացումն է իմացականի ոլորտ: Ահա ինչ եմ ես տեսնում, այն ինչում իմացականն է, բարիքի գաղափարը՝ դա սահմանն է, և այն դժվարությամբ է տարբերակվում, սակայն այն տարբերակման դեպքում եզրակացություն է բխում, որ հատկապես դա՝ ամեն ճշմարիտի և գեղեցիկի պատճառն է: Տեսանլիի ոլորտում այն ծնում է լույսը և

դրա տիրակալին, իսկ իմացականի ոլորտում այն ինքն է տիրակալ, որից կախված է ճշմարիտը և գիտակցականը, և այն պետք է դիտի նա, ով ցանկանում է գիտակցված գործել ինչպես մասնավոր, այնպես էլ հասարակական կյանքում:

Լուսավորվածությունը՝ այն չէ, ինչ վերջինիս վերաբերյալ պնդում են որոշ անձինք, որ մարդու հոգում գիտելիքներ չկան և նրանք այն այնտեղ ներածում են, նրա նման ինչպես կույրին կներածեին դիտարկման համար աչքեր:

Յուրաքանչյուրի հոգում առկա է այնպիսի ունակություն, որը յուրաքանչյուրին օգնում է սովորել: Եվ ինչպես աչքին հնարավոր չէ մթությունից շրջել դեպի լույս բացի միայն ամբողջ մարմնով, նույն կերպ անհրաժեշտ է ամբողջ հոգով շրջադարձվել ամբողջ ձևավորումից, այդ դեպքում մարդու իմացական ունակությունը կարող է դիմանալ գոյի դիտագրկմանը և նկշրա, ինչը վերջինումս վառ է, իսկ դա, ինչպես մենք ենք պնդում հանդիսանում է բարիքը: Հատկապես աստեղ կարող է հանդես գալ փոփոխելու արվեստը, ինչ կերպ և իրականում հեշտ է փոփոխել մարդուն: Դա չի նշանակում նրանում ներածել տեսնելու ունակությունը՝ այն արդեն նրա մոտ առկա է, սակայն սխալական կողմնորոշված, և նա նայում է ոչ այնտեղ, ուր անհրաժեշտ է: Ահա այստեղ անհրաժեշտ է ջանքեր ներդնել:

Միթե չես նկատել նրանց մոտ, ում չնայած անվանում ես վատ մարդ, սակայն խելոք, ինչպեհիսի խորաթափանց է նրանց հոգին և ինչպես նրանք ամբողջովին տեսնում են այն, ինչ իրենց է անհրաժեշտ: Նշանակում է նրանց տեսողությունը վատը չէ, սակայն այն ստիպված ծառայում է նրանց արատավորությանը և, որքան սրատես են նրանք, այնքան առավել շատ չարիք են կատարում:

Իսկ վերը շարադրվածից բնականաբար և անխուսափելիորեն բխում է հետևյալը, պետությանը կառավարման համար հարմար չեն ճշմարիտում չլուսաբանված և անտեղյակ անձինք, ինչպես նաև նրանք, ում ամբողջ կյանքում տրված է զբաղվել ինքնակատարելագործմամբ:

Նույն կերպ օրենքը նպատակադրում է ոչ թե բնակչության որևէ շերտի բարեկեցությունը, այլ ամբողջ պետության բարիքը: Մեկ համոզմամբ, մեկ ուժով ապահովում է բոլոր քաղաքացիների համախմբվածությունը, այնպես անելով, որ նրանք միմիայնց փոխադարձաբար օգտակար լինեն այն աստիճանով, որքանով

նրանք ընդհանրապես կարող են լինել օգտակար ամբողջ հասարակության համար: Ականավոր մարդկանց ներառում է պետության մեջ ոչ նրա համար, որ տրամադրի նրանց հնարավորություն շեղվել ով ուր ցանկանում է, այլ որպեսզի օգտվի նրանցից պետության ամրապնդման համար»¹¹⁷: Վերջինի անմիջական հաստատումը կարելի է գտնել, օրինակ, իրավունքի պատմության «Վիշնու- սմիրտի» հնդկական արձաններից մեկում, հին հնդկական կանոնների և իրավական կանոնակարգերի ժողովածու, որը սահմանում է, մնացյալի շարքում, թագավորի պարտականությունը, իսկ հատկապես.

«Այժմ թագավորի պարտականությունն է. ենթակաների պաշտպանությունը, յուրաքանչյուրին իր դհարմայի կատարման ապահովումը նրա վարնին և աշարամին համապատասխան: Թող նշանակի հուսալիներին [կառավարիչներին] հանքում, հարկերի հավաքման, գետի անցման վայրերում, փղանոցներում, բարեպաշտներին՝ բարեպաշտ, ճարպիկներին՝ շահույթի հետ կապված, քաջերին՝ ռազմական, անխիղճներին՝ անխիղճ գործերի համար, ներքիններին՝ հարեմներում: Ենթակաների, չարերի կամ բարիների, բոլոր գործերից թագավորը ստանում է վեցերորդ հատվածը: Թող հարգի արեպաշտներին, իսկ չարերին՝ պատժի: Չկա թագավորների դհարմա, որը կարողանա համեմատվել պայքարում ինքնագոհության հետ: Թող [թագավորը] խուսափի որսորդությամբ, զառախաղով, կանանցով, գինով շատ տարվածությունից և վիրավորանքներ թույլ չտա բառերով և գործողությամբ: Թող օտարի ունեցվածքին վնաս չհասցնի: Թող առատաձեռն չլինի անարժանների նկատմամբ: Խնամակալ չունեցող անչափահասների և կանանց ունեցվածքը թող պաշտպանի թագավորը: Գողերի գողոնը հայտնաբերելով թող [թագավորը] ամբողջովին վերադարձնի դրա տիրոջը անկախ ցեղից, իսկ այն, ինչ չկարողանա հայտնաբերել, թող հատուցի սեփական գանձարնից: Թող ինքը իմաստուն բրահմանների հետ դատի վեճերը: Թող թագավորը դատաանի անդամներ նշանակի ծագմամբ, գործերով հայտնիներին, հավասար արդարացի թշնամիների և ընկերների նկատմամբ՝ նրանց, ովքեր վիճաբանողներին չեն կարող գրավել իրենց կողմ՝ գրգռելով նրանց կիրքը, զայրույթը, վախը, ազահությունը»¹¹⁸ և այլն:

Ինչպես վերը շարադրված Պլատոնի հայեցակարգի, այնպես էլ իրավունքի հին

¹¹⁷ Տե՛ս **Платон**. Государство. Кн. VII / Платон. Сочинения. В 4 т. Т. 3. М., 1994. С. 295-301.

¹¹⁸ Տե՛ս Вишну-смирти / пер. с санскр., предисл., коммент. и прил. **Н. А. Кормевой**. М., 2007. С. 80-83.

Սոցիալականը՝ հասարակականը չէ սոցիալիստական բովանդակությամբ, արտահայտությամբ և նշանակությամբ: Հասարակությունը չի կարող ներկայացվել տեսությունում միայն սոցիոլոգիայի կողմից: Վերջինս չի հանդիսանում գիտություն հասարակության վերաբերյալ, քանի որ դրա ուսումնասիրության օբյեկտ հանդիսանում է սոցիալականությունը որպես սոցիալական խմբերի և մարդկանց համայնքների ամենակենսական, անմիջական և չբավարարված պահանջների բավարարման գործընթաց: Սակայն սոցիոլոգիական ընկալման միջոցով իրավունքը ձեռք է բերում կոնկրետություն և գործնական իրականացում: Միևնույն ժամանակ նշենք, որ անհրաժեշտ է տարբերակել իրավունքի սոցիալական բովանդակությունը և սոցիալական իրավունքը: Առաջինը, որպես կանոն, կիրառվում է բառիս լայն (հասարակական) և նեղ (սոցիալական) իմաստներով: Այսպես, Օ.Է. Լեյստը նշում էր, որ իրավունքի սոցիալական բովանդակությունը «կայանում է հասարակության իրավական կառուցվածքի սահմանման, տարբեր խավերի արտոնությունների կամ հպատակման կամ օրենքի առջև ընդհանուր հավասարության հաստատման մեջ, սեփականության տարբեր ամրագրված ձևերում, ընտանեկան, տնտեսական,

¹⁶⁵ Основные концепции права и государства в современной России //Государство и право. 2003. № 5. С.19.

¹⁶⁶ Մանրամասն տե՛ս **Мальцев Г. В.** Социальные основания права. М., 2007.

կորպորատիվ, առևտրային, արտադրական, կրոնական, քաղաքական և այլ հասարակական հարաբերությունների պահպանության և կարգավորման մեջ»¹⁶⁷: Իրավունքի սոցիալական բովանդակությունը կարող է արտահայտվել սահմանադրման և սոցիալական իրավունքի նորմերի կիրառության միջոցով: Սոցիալական իրավունքը, դրա բովանդակությունը գտել և գտնում են իրենց արտացոլումը տարբեր հեղինակների հրատակություններում:

Այսպես, օրինակ, ռուս գիտնականների աշխատանքներում ևս հայտնաբերում ենք սոցիալական իրավունքի խնդրի հետազոտություններ դրա տարբեր բովանդակություններում, իսկ հետևաբար, և նշանակություններում: Այսպես, Ա. Վ. Պոլյակովը գրում է. «Սոցիալական իրավունքը, ինչպես և պետականը, կարող է լինել կենտրոնացված (համապարփակ, հանրային) և ապակենտրոնացված (պարտիկուլյար, մասնավոր), պաշտոնական և ոչ պաշտոնական իրավունք... Սոցիալական իրավունքը կարող է ունենալ տարբեր արտաքին նշանային ձևեր (իրավունքի նորմաների տեքստային աղբյուրներ), օրինակ, առասպելի, սովորության, պայմանագրի, դոկտրինայի, սուրբ գրի, նորմատիվային ակտի կանոնի, հրահանգի և այլնի ձև»¹⁶⁸: Այստեղ, հավանաբար, սոցիալական իրավունքը դիտարկվում է պետական «պատկանելիությունից», պետական ամրագրման և իրավակիրառության ձևերից դուրս:

2001թ. Ռոստով-Դոնում պաշտպանվել է Ա. Գ. Իվանովի կողմից թեկնածուականատենախոսություն «Սոցիալական իրավունք, վստիչական-իրավական կարգավորման ձևերը և էությունը սոցիալական պաշտպանության համակարգում ըստ սոցիալական փիլիսոփայություն մասնագիտության»: Նա դիտարկում է սոցիալական իրավունքը որպես սինթետիկ հասկացություն, որը բնութագրում է հասարակական հարաբերությունների բազմաթիվ ոլորտներ, սակայն չունի իրաբանական հոչակագրի կարգավիճակ և կազմում է հասարակության քաղաքացիական կյանքի էությունը: Սոցիալական իրավունքի օրենքները, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունների բավականին լայն սպեկտոր, «ըստ իրենց բնույթի իրենցում պարունակում են սոցիալական ուղղվածության և հումանիստական

¹⁶⁷ Տե՛ս **Лейст О. Э.** Сущность права. Проблемы теории и философии права. М., 2008, С. 20.

¹⁶⁸ Տե՛ս **Поляков А. Ж.** Общая теория права: Курс лекции. СПб., 2001. С. 342.

արժեքների պոտենցիալ»: Հեղինակի ատենախոսության նորարարությունը ամենից առաջ ներկայացնում է «սոցիալական իրավունք հասկացությունը որպես քաղաքացիական հասարակության էական տարրի հիմնավորումը, որը իրենով արտահայտում է սոցիալական պետության էությունը դրա հասարակական կյանքի ընդհանուր, համընդհանուր, սոցիալական և մասնավոր ձևերի կողմնորոշումներում այնպիսի սոցիալական կողմնորոշիչների և արժեքների նկատմամբ, որոնց անկյունաքարում գտնվում է կոնկրետ մարդը և նրա կաիրքները որպես վերին արժեք, որը իրենով արտահայտում է հասարակության և պետության քաղաքակրթվածության և զարգացվածության մակարդակը»¹⁶⁹: Դրանով իսկ սոցիալական իրավունքը բառիս լայն իմաստով արտացոլում է հասարակությունում առկա իրավահարաբերությունների ամբողջ համախումբը: Իսկ նեղ իմաստով՝ դա իրավունքի ոլորտ է, որը կարգավորում է հարաբերությունները սոցիալական ոլորտում: «Նման հարաբերություններ հանդիսանում են հարաբերությունները, որոնք կապված են կյանքի մակարդակի և բնակչության եկամուտների, աշխատանքի պայմանների, վարձատրման և խթանման, զբաղվածության պայմանների, արտադրությունում անձնակազմի զարգացան, հավելավճարների և ապահովագրության համակարգերի և այլնի հետ, ինչպես նաև սոցիալ- մշակույթային կոմպլեքսի ոլորտի հետ»⁵¹:

Բանավեճի մեջ չմտնելով Ա. Գ. Իվանովի հետ նրա ատենախոսական հետազոտության առանձին խնդիրների վերաբերյալ՝ նշենք միայն այն, ինչը գիտական հետաքրքրություն է ներկայացնում մեր վերլուծության համար՝ դա սոցիալիզմի, սոցիալի բովանդակությունն է: Բերված նյութի հիման վրա կարելի է առաջարկել հետևյալ տեսական գաղափարները խառնաշփոթից, ինչպես նաև կոնկրետ հասկացության վերլուծության մետամորֆոզի տարածումից խուսափելու համար բառիս լայն և նեղ իմաստներով, որոնք հաճախ ուղղակի խճճում են խնդիրը, նրա փոխարեն, որ ներկայացնեն այն առավել պարզ և բովանդակային:

Մենք առաջարկում ենք առանձնացնել իրավունքը երկու հիմնական չափումներում. հասարակական և սոցիալական: Հասարակական իրավունքը՝ իրավական նորմերի համակարգ, համախումբ է, որը կարգավորում է հիմնարար

¹⁶⁹ Ст'я **Иванова А. Г.** Социальное право: формы и сущность административно-правового регулирования в системе социальной защиты: Автореф. дисс... канд. филос. наук. Ростов н/Д. 2001. С. 11.

հասարակական հարաբերությունները և մարդկային գործունեության տեսակները դրանց բաղկացուցիչների ամբողջական համախմբում: Քանի որ հասարակությունը բարդ, բազմապլանային և բազմակարադրականի երևույթ է, ապա հայտնվելով իրավական կենցաղի և տարածության դաշտում, այն պլյուրալիզացվում է ըստ բազմաթիվ հիմքերի, չափորոշիչների, որոնցից մեկը հանդիսանում է հասարակական կյանքի ոլորտը՝ ներկայացված մարդկային սուբյեկտների հարաբերությունների և գործունեության որոշակի միասնությամբ: Հասարակության սոցիալական ոլորտը դրանով իսկ հանդիսանում է հասարակական ոլորտներից մեկը: Իրավական տարածությունում դրանք ձեռք են բերում սոցիալական բովանդակություն բառիս բուն իմաստով, որը կարելի է նշել սոցիալական իրավունքով: Այսպիսով, չեզոքացվում է իրավունքի և դրա նման հասկացությունների լայն և նեղ ձևակերպությունների խնդիրները: Երկրորդը, տվյալ մասնատումը հնարավորություն է տալիս չնույնականացնել հասարակական և սոցիալական երևույթները, պրոցեսները: Հասարակականը նույնական չէ սոցիալականի, քանի որ վերջինս հանդիսանում է հասարակականի ոլորտներից մեկը: Սոցիալականը իր հերթին, ինչպես և ամբողջ մարդկայինը, տիրապետում է հասարակականի ընդհանուր հատկանիշներով, որակներով, սակայն ոչ միայն դրան նույնական չէ, այլ նաև ամբողջովին չի արտացոլում հասարակական որակները, քանի որ այստեղ աշխատում է ամբողջի (հասարակության) և այդ ամբողջի հատվածի (սոցիալականի) դիալեկտիկան¹⁷⁰:

Քանի որ մարդը, մարդկային ինստիտուտները հանդիսանում են հասարակական և սոցիալական իրավունքի սուբյեկտներ, ապա ծագում է տվյալ տարբերությունների առանձնացում, դասակարգում և իրավական բովանդակության անհրաժեշտություն: Չխորանալով Գ. Կ. Վարդանյանցի կողմից մշակված իրավունքի սոցիոլոգիական տեսության որոշ մանրամասնությունների վերլուծությունում՝ նշենք, որ նրա կողմից առանձնացված մարդու էներգիայի հատկանշանները՝ ուժ, ռեսուրսներ, կրեատիվ և գիտելիքներ, որոնք սոցիալականության վիճակում դառնում են անձի սոցիալական զանգվածի տարրեր, հանդիսանում է պոզիտիվ տեսության դրույթներ, որոնք ունեն նաև գործնական բովանդակություն և նշանակություն: Ուշադրության է արժանի նաև

¹⁷⁰ Ст' у Поляков А.В. Коммуникативная концепция права (генезис и теоретико-правовое обоснование). Дисс. ... д.ю.к. в виде научного доклада. Спб., 2002.

հեղինակի հետևյալ թեզը, «իրավաբանական իրավունքը հանդիսանում է աբստրակտ մոդել, սոցիալական իրավունքը՝ սոցիալական իրականությունում իրական գոյություն ունեցող հասարակության նորմատիվային համակարգ, որոնց հարաբերակցությունից և համապատասխանությունից կախված է սոցիալական իրավունքը, իրավունքի անհրաժեշտությունը կամ օրինականությունը»⁵²: Իրավունքի սոցիալական նորմատիվությունը կամ ձևակացությունը (ֆորմալիզացիան) ձեռք է բերվում և իրականացվում երեք հիմնական եղանակներով, սոցիալական հարկադրությամբ, սոցիալական ստիպմամբ և սոցիալական համաձայնեցմամբ: «Իրավունքի սոցիալությունը տրվածություն չէ, այլ իրավական գոյության հատուկ վիճակ, որի ժամանակ իրավունքի գոյությանը զուգահեռ ծագում է նաև գոյություն իրավունքում, որի ձեռք բերումը՝ իրավական կարգավորման հիմնական խնդիրներից մեկն է: Ցուցանիշ... իրավունքի իրական սոցիալության ընդունված է իրավունքի արդյունավետ լինելը»¹⁷¹:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է չմոռանալ մարդուն, չմղել նրան երկրորդ և այլ պլաններ: Եվ այստեղ բանը աբստրակտ մեկնավանվող հումանիզմի սկզբունքում չէ, այլ իրավական հարաբերություններում, մարդու իրական դիրքի, նրա կողմից արժեքների ընկալման, իսկ հետևաբար, նշանակում է, իրավունքի, իրավական նորմաների նշանակության իրականացման մեջ:

Ներկայացված գիտելիքը իր բազմաձևությունում հնարավորություն է տալիս կատարել հետևյալ տեսական «քայլը»՝ եզրագծել իրավունքի սոցիալական նշանակության խնդիրը, որը «պատկերվում» է հետխորհրդային շրջանի իրավագետ գիտնականների հրատարակություններում: Բաժանենք տվյալ խնդրի վերլուծությունը երկու բաղադրիչների (իհարկե հարաբերականորեն, քանի որ դրանք փոխկապակցված են), գիտա-տեխնիկական բնույթի հրատարակումներում և իրավական ամսագրերում և ըստ պետության և իրավունքի ծանրակշիռ դասագրքերում հրատարակումներ:

Ակնհայտորեն դրանց համար ընդհանուրը կայանում է նրանում, որ հաճախ իրավունքի սոցիալական նշանակությունը նույնականացվում են իրավունքի

¹⁷¹ Նույն տեղը, էջ 61:

գործառույթների հետ: Իրավական երևույթների միջև կապը, արտահայտված տվյալ հասկացություններով, ակնհայտ է, սակայն այն չի տալիս բավարար տեսական հիմքեր դրանց չտարանջատման համար: Այսպես, Մ. Ի. Բայտինը, համակողմանի վերլուծելով ժամանակակից նորմատիվ իրավահասկացությունը, առանձնացնում և ընդգծում է իրավունքի գործառույթների և իրավունքի ազդեցության հասկացությունները և նշում դրանց համեմատականությունը, այլ ոչ նույնականությունը: «Իրավունքի գործառույթը՝ հասարակական հարաբերությունների վրա դրա ազդեցության առավել էական ուղղությունները և կողմերն են, որոնցում բացահայտվում են համամարդկային և դասակարգային բնույթը, ինչպես իրավունքի սոցիալական նշանակությունը»¹⁷²: Տվյալ դրույթը անհրաժեշտ է փոքր ինչ հսակեցնել, շտկել: Առաջինը, հասարակական հարաբերությունների վրա ազդում է ոչ թե իրավունքը, այլ մարդկային սուբյեկտները, իրավական իմաստով տիրապետում իրավասուբյեկտիվությամբ: Երկրորդը, ինչպես արդեն նշվել է, այսօր իրավունքի դասակարգային բնույթի հետ անհրաժեշտ չէ շտապել, քանի որ հետխորհրդային հասարակություններում դասակարգերը հստակորեն չեն սահմանվել: Երրորդը, իրավունքի սոցիալական նշանակությունը գտնում է իր «տեղը» «հասարակական հարաբերությունների վրա ազդեցության էական ուղղություններում և կողմերում», սակայն այդ իրավիճակը կոնկրետացված չէ թեկուզ ինչ-որ իմաստով, բովանդակությամբ: Անվիճելի է, իրավունքի հիմնական գործառույթը՝ կարգավորիչ, միևնույն ժամանակ առկա է նաև դրա սոցիալական նշանակության, կոչվածության խնդիր: Գ. Վ. Մալցևը արդարացի նշում է. «Ըստ իր բնույթի իրավունքը նորմատիվային կարգավորիչ է, դրա սոցիալական նշանակությունը արտահայտվում է կենսական պրոցեսների կարգավորման մեջ, այսինքն կարգավորվածության գիտակցված ստեղծում, դրա պահպանում և մի շարք որոշակի, քաղաքակիրթ հասարակության կողմից ընդունված նպատակների պաշտպանություն: Կարգը և իավունքը կապված են մեկ էությամբ»¹⁷³: Սոցիալական կարգավորումը հեղինակի կողմից լայնորեն է ընկալվում, և այն միշտ չէ հանգեցվում նորմատիվային կարգավորմանը: Սակայն, եթե այն «հայտնվում» է սոցիալ-նորմատիվային իրավական

¹⁷² Տե՛ս **Байтин М.И.** Сушность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). М., 2005, с. 167-168.

¹⁷³ Տե՛ս **Мальцев Г. В.** Социальные основания права. М., 2007. С. 4.

կարգավորման ոլորտում, ապա նորմաների նշանակությունը էականորեն աճում է, քանի որ դրանք կոչված են խթանել մարդկանց գործողությունները կոնկրետ ուղղությամբ և միաժամանակ սահմանափակել նրանց վարքագծի, հարաբերությունների այլ ձևերում: Դա հնարավոր է իրականացնել միայն գիտակցական պատճառաբանման վիճակում, սուբյեկտների մոտ իրավագիտակցության առկայությամբ, որը անխուսափելիորեն կոչված է զարգացման, լիցքավորվել ներ տեղեկությամբ ինչպես իրավական նորմաների, այնպես էլ սոցիալական միջավայրի վերաբերյալ, որի մեջ ներառվում է նաև սուբյեկտը: Այդ իսկ պատճառով «իրավունքում կարգավորող պրոցեսների իմաստը և նշանակությունը արտահայտում են մարդկային համայքում որոշակի կապերի կազմակերպման անհրաժեշտություն, այլ կերպ, հասարակական զարգացման անհրաժեշտություն: Իր պատմական զարգացման որ փուլում էլ որ գտնվի իրավունքը, դրա տեսանկյունը միշտ եղել է, կա և կլինի կարգի հաստատման անհրաժեշտության, սոցիալական կարիքի, պահանջի արտահայտման տեսանկյուն: Դա... հաստատուն է իրավունքի պատմական ճակատագրում»¹⁷⁴:

Անհրաժեշտությունը բացահայտում է մեկ երևույթների դետերմինացման մեխանիզմների ազդեցությունը մյուսների վրա: Այն վերցվում է իր հակասությունների՝ պատահականության, ազատության և այլնի հետ կապի մեջ: Այդ իսկ պատճառով բացահայտել կողմերի սուբյեկտների գործողությունների այդ բաղկացուցիչների բովանդակությունը շատ բարդ է և, եթե դրանք ամրագրված են իրավական նորմայում, ապա, հետևաբար, սուբյեկտը ստանում է գիտակցված ինքնակազմակերպման և հասարակական կազմակերպման պրոցեսում հզոր խթան՝ գիտելիք, գործողությունների գոյաբանություն, որը ունի հսկայական նշանակություն անհատական-իրավաչափ և հասարակական կյանքի կարգավորման մեջ: Միևնույն ժամանակ մարդկային սուբյեկտների սոցիալական շահերի իրականացման նկատմամբ իրավունքի նշանակության միակողմանի տեղեկությունները իրավաչափ չէ, և այդ թվում այն պատճառով, որ «իրավաբանը, ով ընդգծում է սոցիալական շահերի սահմանադրական նշանակությունը իրավունքի ձևավորման համար, դրանով իսկ

¹⁷⁴ Տե՛ս Мальцев Г. В. Նշվ. աշխ., էջ. 336-337.

հանձնում է վերջինիս քաղաքականության և գաղափարախոսության իշխանությանը»¹⁷⁵: Մարդկանց, նրանց ինստիտուտների, միավորումների տարբեր շահերը ապահովվում և պահպանվում են իրավունքի կողմից սուբյեկտիվ իրավունքների և կողմերի՝ իրավահարաբերությունների մասնակիցների իրավաբանական պարտականությունների մեխանիզմի միջոցով»: Իրավահարաբերությունների կողմեր կարող են հանդիսանալ ոչ միայն անձինք, այլ նաև մարդկային ինստիտուտները: Այդ իսկ պատճառով սուբյեկտիվ իրավունքի սոցիալական նշանակությունը մարդկայնորեն-անհատական և ինստիտուտային է և արտահայտվում է սուբյեկտների գործողությունների և անհրաժեշտ իրավակարգի իրավական կարգավորման տարբեր եղանակներում և մեխանիզմներում: Դրանով իսկ իրավունքի սոցիալական նշանակության ուղեծրում ներառվում է իրավական կարգավորման նպատակի որակով իրավակարգի խնդիրը: Եթե իրավական նորմաների իրականացմամբ մարդկային սուբյեկտների կողմից ձեռք է բերվում անհրաժեշտ կարգը, ապա կարելի է գրանցել իրավունքով, դրա իրավական նորմաներով ձեռք բերված վիճակ, արտացոլված իրավունքի սոցիալական նշանակության հարաբերություններում, դրանց ազդեցություններում: Սակայն դրա համար և մինչև դա նորման պետք է լինի նշանակալից, գիտակցված ընկալվող սուբյեկտների վարքագծի իրավաչափ մեխանիզմի և անհրաժեշտի, էականի որակով: «Իրավական նորմերը իրականությունը հանդիսանում է պատշաճ բովանդակությանը գոյի ձև հաղորդումը: Նման ձևի արժանի է միայն սոցիալական նշանակության բովանդակությունը: Նորման չի կարող հանդիսանալ իրավունք, ձեռք բերել իրականության որակ իր բարոյական, քաղաքական և այլ սոցիալական նշանակությանը չհարաբերակցվող բնույթում»¹⁷⁶:

Պարտադիրության սոցիալական նշանակությունից կախված է նորմայի տեղը իրավունքի համակարգում, դրա իրավաբանական ուժը: Բ. Գ. էբզենը իրավացի է, երբ գրում է. «Անկախ սոցիալական, քաղաքական և այլ գործառույթներից, հավասարազոր նաև Սահմանադրության համակարգում զբաղեցրած տեղից՝ սկսած նախաբանից և վերջացրած ավարտական հոդվածներով, բոլոր դրանք (սահմանադրական նորմաները) տիրապետում են կարգավորող նշանակությամբ և կրում են գործուն

¹⁷⁵ Նույն տեղը, էջ 338:

¹⁷⁶Տե՛ս **Мальцев Г. В.** Նշվ. աշխ., էջ 605:

բնույթ»¹⁷⁷: Դրանք տիրապետում են վերին իրավաբանական ուժով և այդ իսկ պատճառով սոցիալապես առանձնահատուկ նշանակալից են:

Իրավունքի սոցիալական նշանակության և բովանդակության բնութագրման ժամանակ կարևոր է ոչ միայն գիտենալ և իրականացնել վարքագծի կոնկրետ կանոններ, այլ նաև ունենալ պատկերացումներ նորմաների՝ պայմանների վերաբերյալ, որոնք կարգավորում են գործողությունների արդյունքները, կանխատեսում դրանց սպասվող արդյունքները և այլն: Տվյալ նորմաները ֆիքսում են սուբյեկտի գործողության նշանակությունը և արդյունքը: Դրանով իսկ կառուցվում է իրավունքի նորմաների որոշակի «շղթա», որոնք ոչ միայն տրամաբանորեն սահմանում են սուբյեկտների վարքագծային պարտավորային կանոնները, այլ նաև դրանց պայմանները, ինչպես մինչև այդ գործողությունները, այլնպես էլ դրանից հետո, վարքագծի արդյունքում:

Գ.Վ. Մալցևի մենագրության բովանդակության արժանիքներին անհրաժեշտ է դասել իրավական կարգավորման պրոցեսի վրա ոչ միայն իրավունքի, այլ նաև իրավական կազմակերպությունների, ինստիտուտների ազդեցությունների համակողմանի իմացությունը և խորը-բովանդակային վերլուծությունը: Այսպես նա նշում է. «Նշակագրերը, գաղափարական թեզերը, ծրագրային հաստատումները բարձրացնում և վեհացնում են օրենքը, թույլ չեն տալիս դրան վերածվել տրված գործողությունների չոր թվարկման, ձանձրալի հրահանգների: Դրանք ընդգծում են իրավական կարգավորման սոցիալական իմաստը և նշանակությունը, օգնում հասարակությունում իրավաբանական հարաբերություններին տալ անհրաժեշտ գիտակցական ուղղությունները: Դրանց շնորհիվ օրենքը դառնում է իր դարաշրջանի փաստաթուղթ, արտացոլում դրա ոգին ամբողջ ուժով և հակասությամբ»¹⁷⁸:

Այսպիսով, վերոնշված տեսաբանների ներկայացված հայացքները հնարավորություն են տալիս կատարել մի շարք սկզբունքային եզրակացություններ, որոնք վերաբերվում են ատենախոսության հետազոտության առարկային, իսկ հատկապես, ա) չի կարելի սահմանափակել իրավունքի սոցիալական նշանակության

¹⁷⁷ Տե՛ս **Эбзеев Б. Г.** Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации. М., 2005. С. 119; Նույնի Конституция, власти свобода в России. Опыт синтетического исследования. М., 2014, с. 202-203.

¹⁷⁸ Տե՛ս **Мальцев Г. В.** Նշվ. աշխ., էջ 690:

(իրավունքի նորմաների) խնդիրը միայն իրավունքի գործառույթի հարցով, չնայած վերջինս իր մարդկային իրականացման մեջ ունի սոցիալական նշանակություն, հասարակությունում իրավունքի կոչում, բ) իրավունքի սոցիալական նշանակությունը արտահայտվում է անհատական և ինստիտուտային պրոցեսների կարգավորումներում, իրավակարգի գիտակցված իրավական կազմակերպման, աջակցման, պահպանման և պաշտպանության մեջ, գ) իրավունքը գոյաբանորեն, արժեքաբանորեն անհրաժեշտ է հասարակության համար: Դրա այս և այլ հատկություններ արտացոլվում են սոցիոլոգիական և անհատական նշանակություններում, իրավագիտակցությունում, իրավասուբյեկտիվությունում, դ) մարդկային հետաքրքրությունների բազմաձևությունը ապահովվում և պահպանվում է իրավունքով սուբյեկտիվ իրավունքների և իրավահարաբերությունների կողմերի՝ մասնակիցների իրավական պարտականությունների մեխանիզմների միջոցով, որը «հանգեցնում» է իրավակարգի՝ իրավունքի սոցիալական նշանակության կարևոր ատրիբուտի ծագմանը, պահպանմանը և զարգացմանը, ե) իրավունքի սոցիալական նշանակությունը սահմանվում է ոչ միայն գործող իրավական պատշաճ նորմաների բովանդակությամբ և իրականացմամբ, այլ նաև նորմաներով-պայմաններով, այսինքն առկա նորմերով: Դրանց դիալեկտիկան՝ իրավունքի սոցիալական նշանակության և կոչման կարևոր բաղադրիչ է, զ) իրավունքի սոցիալական նշանակությունը սահմանվում է ոչ միայն իրավունքի նորմաների բովանդակությամբ և գործնական իրականացմամբ, այլ նաև տարբեր ոչ իրավական, գաղափարական, հոգևոր և այլ փաստաթղթերի բովանդակությամբ, որոնք ուժեղացնում են իրավական կարգավորման սոցիալական նշանակությունը և ուղղվածությունը և այլն:

Եթե կարճ դիմենք ըստ պետության և իրավունքի տեսության ժամանակակից դասագրքերի բովանդակությանը տվյալ հետազոտության առարկայի վերաբերյալ, ապա անհրաժեշտ է առանձնացնել դրույթները, խնդիրները, ասպեկտները:

Առաջինը, տվյալ աշխատանքների բովանդակությունը բացարձակ չի նվազեցնում դրանց գիտա-տեսական նշանակությունը, քանի որ դրանք, որպես կանոն, իրականացված են իրավունքի առաջատար տեսաբանների կողմից և գլխավորը՝ դասագրքերում, ուսումնական ձեռնարկներում գիտելիքի տվյալ շերտը պարտադիր

առկա է, հանդիսանում է ներառված վերլուծության կամ կոնկրետ խնդրի ներկայացման մեջ:

Երկրորդը, իրավունքի էությունը և բովանդակությունը դիտարկվում է բավականին ընդարձակ, հանգամանալից դրա սահմանումների, գծերի, հասկությունների, գործառույթների և սոցիալական նշանակության միջոցով արտահայտված, չնայած վերջինս երբեմն առանձնահատուկ չի առանձնացվում: Այդ դրությանը ի հաստատում բերենք մի շարք օրինակներ: Ա. Բ. Վենգերովը գրում է. «Իրավունքի տեսության ժամանակակից մակարդակը հնարավորություն է տալիս սահմանել իրավունքը որպես մեծ սոցիալական արժեք ունեցող կարգավորող համակարգ, որը պաշտոնապես հաստատված և ամրագրված նորմաների (վարքագծի կանոնների) օգնությամբ, որոնք արտահայտված են նորմատիվային ակտերում, դատական նախադեպերում, այլ ձևերում և ապահովված պետական հարկադրման նարավորությամբ, ազդում են հասարակական հարաբերությունների վրա դրանց կարգավորման, կայունացման կամ սոցիալապես անհրաժեշտ զարգացման նպատակով»¹⁷⁹: Այստեղ ամրագրվում են նշված բաղադրիչները, որոնք համախմբում կազմում են հասարակական հարաբերությունների կարգավորվածությունը, ամրագրումը, պաշտպանությունը, իսկ նպատակը որոշվում է դրանց անհրաժեշտությամբ, հասարակական օրինաչափությամբ, որը հիմնականում կազմում է իրավունքի սոցիալական (հասարակական) նշանակությունը: Այլ դասագրքում շեշտադրությունը շեղված է իրավական նորմատիվության ներկայացման վրա. «Իրավունքը հանդիսանում է պետությունից բխող ընդհանուր պարտադիր, ձևականորեն որոշված նորմաների համախումբ, որոնք արտահայտում են ազատության, արդարության, մարդասիրության, բարոյականության, մարդու իրավունքների գաղափարները և կոչված են կարգավորել մարդկանց և նրանց կոլեկտիվների վարքագիծը հասարակության կայուն գործառույթի և զարգացման նպատակներով»¹⁸⁰: Միևնույն ժամանակ իրավունքի գործառույթային և տելելոգիկ նշանակությունը ևս արտահայտված է: Այլ ուսումնական ձեռնարկում իրավունքի

¹⁷⁹ Տե՛ս **Венгеров А. Б.** Теория государства и права. М., 2004. С. 324.

¹⁸⁰ Տե՛ս **Эбзеев Б. Г.** Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации. М., 2013. С. 119.

սոցիալական նշանակությունը ամրագրված է դրա սահմանման մեջ. «Ամենաընդհանուր պլանով իրավունքը իր սոցիալական նշանակությամբ ունի կարևոր, անհրաժեշտ հարաբերությունների ամրագրումը, հասարակության կյանքից կոնկրետ բացասական երևույթների չեզոքացումը, կոնկրետ հարաբերությունների և նոր, առավել առաջընթաց հասարակական հարաբերությունների զարգացման համար նորմալ պայմանների ապահովումը»¹⁸¹: Կարելի է բերել նաև իրավունքի այլ սահմանումներ, սակայն հիմնականում եզրակացությունը միանման կլինի, իրենց բոլոր արտահայտումներում, այս կամ այն կերպ, անմիջականորեն կամ միջնորդված, սոցիալական (հասարակական) նշանակության խնդիրը ներկայացված է:

Վերոշարադրյալի հիման վրա հնարավոր է տեսականորեն մոտենալ «իրավունքի սոցիալական նշանակության» կատեգորիայի բովանդակության վերլուծությունը:

Այս առումով, տեսականորեն առավել ծանրակշիռ և արդյունավետ տվյալ խնդիրը առաջադրել և փորձ է կատարել լուծել Ռուսաստանի Մոսկովյան համալսարանի հեղինակների կողմից, հրատարակելով ըստ պետության և իրավունքի տեսության ուսումնական ձեռնարկ Վ.Պ. Մալախովի և Վ.Ն. Կազակովի խմբագրությամբ: Այս աշխատանքի հեղինակները արդարացիորեն նշում են, որ «իրավունքի սոցիալական նշանակություն» կատեգորիայի կիրառության առավել անհրաժեշտություն առկա է պետության, բարոյականության, գաղափարախոսության սոցիալական նշանակության հետ վերջինիս համեմատական վերլուծության ժամանակ: Դա հնարավորություն է տալիս հայտնաբերել իրավունքի ևս մեկ իմաստի կարևոր նշանակությունը, օբյեկտիվային նախատեսվածությունը, դրա առանձնահատուկ հարմարմարված, որակապես ինքնուրույն ծառայողական դերը, որը յուրահատուկ չէ այլ հասարակական կարգավորիչին: Տվյալ մոտեցման էությունը հանգեցվում է հետևյալին. «Իրավունքի սոցիալական նշանակությունը կայանում է ամենից առաջ արտադրության, բաշխման և սպառման հետ կապված հարաբերությունների կարգավորման, շահերիին համապատասխանող հասարակական կազմակերպման մեջ... ամբողջ հասարակության կամ դրա որոշակի հատվածի, ինչպես նաև իշխանությունում կանգնած քաղաքական ուժերին շահավետ հասարակական հարաբերությունների

¹⁸¹ Տե՛ս **Шагинева Р.В.** Актуальные проблемы права. Учебное пособие. М., 2014, с. 38-39.

սուբյեկտների կապման ձևերի հաստատման և աջակցման մեջ... Իրավունքի ինքնուրույն, իշխանության ուժերի շահերին համապատասխանող սոցիալական խնդիրների լուծելու կոչվածությունը իրենից ներկայացնում է «իրավունքի սոցիալական նշանակության» կարևոր սահմանադրական պահ¹⁸²:

Բացի դրանից իրավունքի նշանակությունը ծագում և ձևավորվում է ոչ միայն հասարակական զարգացման իրական պահանջներից, այլ նաև շարունակում է այդ պահանջները՝ ամրագրելով դրանք իրավական ակտերում: Այսպիսով, իրավունքի սոցիալական նշանակությունը ստանում է իր իրավաբանական ձևակերպում, ամրագրում և դրանով իսկ դառնում է իրավունքի նորմ: Այդ ամրագրման մեջ կարելի է հայտնաբերել ոչ միայն իրավունքի համընդհանուր սոցիալական նշանակությունը: Իրավունքի սոցիալական նշանակությունում ինտեգրվում են դրա նպատակները և խնդիրները, որոնք բեկվում, կոնկրետ արտահայտվում են հասարակական, պետական և անձնական կյանքի որոշակի ոլորտներում, ինչը հնարավորություն է տալիս հեղինակներին դիտարկել իրավունքի նշանակությունը բառիս լայն և նեղ իմաստներով: Նեղ իմաստում այն հանդիսանում է սոցիալական խնդիրների լուծում իրավունքի միջոցով, ինչպիսիք են գիտության, մշակույթի, առողջապահության, կենսաթոշակային ապահովման, սոցիալական ապահովագրության և այլնի զարգացման վրա ազդեցությունը: Դրանով հեղինակները առանձնանում են հասարակության սոցիալական ոլորտը ինքնուրույն, առարկայորեն սահմանված, որի վերաբերյալ նախկինում նշվել է ատենախոսության տեքստում:

Ի վերջո, հեղինակների կողմից առաջադրվել է իրավունքի սոցիալական նշանակության իրականացման ասպեկտների տարանջատման խնդիր, որը կայանում է հետևյալում. հասարակական հարաբերությունների զարգացման կողմնորոշման հնարավորություն, հասարակական հարաբերությունների զարգացման պայմանների ապահովման հնարավորություն, հարաբերությունների նոր տեսակներ ստեղծելու իրավունքի հնարավորություն (ունակություն):

Իրավունքի սոցիալական նշանակությունը սահմանվում է մարդկային կենսական պահանջներին և կարիքներին դրա նորմերի համապատասխանությամբ, քանի որ այն

¹⁸² Теория государство и права / Под ред. **В. П. Малахова, В. Н. Казакова.** М., 2002. С. 58.

արտահայտում է կոնկրետ երկրի քաղաքացիների կամքը: Իրավունքը պետք է լինի դինամիկ, շարժուն: Սակայն այդ հարաշարժությունում, լինելով օպերատիվ, չպետք է լինի շտապողական, արագացված-չմտածված, երբ առանձին նորմատիվ-իրավական ակտեր փոփոխվում են մեկ, երկու ամիս անց իրենց ընդունումից, իրավաբանական ամրագրումից հետո:

Սոցիալական պլանում իրավունքը հաճախ արտահայտում և ամրագրում է հասարակությունում քաղաքական ուժերի իշխանական կամքը և շահերը: Սակայն այդ ուժերը հանդիսանում են աննշան հատվածը, պետության և ահասարկության էլիտան:

Եթե իշխանությունը գործնականում իրականացնեի իրավական նորմերը միայն իրենց նպատակներով և շահերով, ապա իրավունքի որևէ սոցիալական իմացության վերաբերյալ խոսք լինել չի կարող: Նրանք պարտավոր են, առաջինը, իրավաբանորեն ամրագրել հասարակական-նշանակալից արժեքները և մարդկանց շահերը և, երկրորդ, հետևողականորեն և նպատակաուղղված դրանք իրականացնել հասարակության բոլոր շերտերի, խավերի շահերից ելնելով: Միայն այս դեպքում հնարավոր և անհրաժեշտ է խոսել իրավունքի սոցիալական նշանակության, դրա իրավականության և օրինականության, արժեքավորության և արդյունավետության որոշակի աստիճանի մասին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է ձևակերպել իրավունքի սոցիալական նշանակության, դրա մարդկային համատեքստում սոցիալ-իրավական չափման խնդրի առավել հիմնավորված, համակողմանի և համակարգային իմացության համար եզրակացություններ, դրույթներ, հանձնարարականներ, ուղղություններ և այդ հիմքի վրա գործնականում արդյունավետ իրականացնել տարբեր իրավաբանական ուժի նորմատիվ-իրավական ակտեր:

1. Քանի որ հասարակական հարաբերությունները բարդ են, բազմապլան և տարատեսակ, ապա դրանք իրենց արտացոլումն են ստանում նաև իրավական նորմերում: Սոցիալական հարաբերությունները իրենց բովանդակությունում ամրագրում են մարդուն կենտրոնացված բնույթի սուբյեկտների փոխկապվածության համալիր, որոնք տեսականորեն անմիջականորեն «պատկերում» են դրանց անմիջական կյանքի փաստերը, անհատական և կոլեկտիվային կարիքները և շահերը:

2. Յուրաքանչյուր սոցիալական հարաբերություն և սոցիալական ոլորտ հիմնականում անմիջականորեն չափվում է մարդկային հարաբերություններով և գործունեության տեսակներով: Այս բազային, էլակետային եզրակացությունը հանդիսանում է իրավական և սոցիալական խնդիրների վերլուծության հիմք:

3. Իրավունքի սոցիալական էությունն արտահայտվում է վարքի համապարտադիր կանոններում, որոնք արտահայտում են իրավական նորմերի սոցիալական ասպեկտը, նրա կառուցվածքն ու գործառնությունը սոցիալական փոխկապակցությունների ու հարաբերությունների ընդհանուր համատեքստում: Այս առումով, իրավունքի նորմը ոչ միայն օրենսդրի նորմատիվ-իրավական բնույթի դատողությունն է, այլ նրա իրականացրած սոցիալական քաղաքականությունը:

4. Իրականում, իրավունքը որպես սոցիալական բարդ երևույթ, որպես հասարակության նորմատիվ կարգավորիչ, ներկայացված է և՛ օրենսդրի նորմերում, և՛ իրավահարաբերությունների ողջ բազմազանության մեջ: Իրավունքը միաժամանակ սոցիալական երևույթ է և պետական կամքի արտահայտում, նյութական երևույթ է և բարոյական ու հասարակական արժեքների ու բարիքների ամբողջություն, իդեալ է և իրականություն, պատմական երևույթ և նորմատիվ կարգ, ներքին կամային ակտերի և

արտաքինին ենթարկվելու ակտերի, ազատության ակտերի ու հարկադրանքի ակտերի համալիր:

5. Հետխորհրդային շրջանի իրավագիտությունում գերակայում են պլյուրալիստական մեթոդաբանական դիրքորոշումները՝ իրավունքի էության և սոցիալական նշանակության մասին: Սկզբունքորեն փոփոխվել է իմացականի շարժումը՝ անհատականից դեպի հասարակություն և պետություն, այլ ոչ հակառակը: Իրավունքը դառնում է հասարակական հարաբերությունների կարգավորվածության և կայունության մարդասիրական, հավասարակշիռ, նորմատիվային կարգ, որը ուժեղացնում է վերջինիս սոցիալական նշանակությունը: Այս շրջանում հիմքեր կան շտկումներ կատարել «սոցիալական» կատեգորիայի բովանդակությունում և հիմնավորել սոցիալական իրավունքի որպես իրավունքի ժամանակակից արդիականացված ոլորտի առանձնացման անհրաժեշտությունը:

Սոցիալական իրավունքը արտացոլում, ամրագրում և կիրառում է իրավունքի սոցիալական բովանդակությունը՝ դրա սոցիալական և մարդկային չափումներով և նշանակությամբ: Իրավունքի այդ ոլորտը առավել անմիջականորեն ամրագրում և իրականացնում է գործնականում մարդու վարքագծի նորմերը, կարիքները, շահերը:

6. Պետության և իրավունքի տեսությունում իրավունքի սոցիալական նշանակությունը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով, ա) չի կարելի սահմանափակել իրավունքի (իրավունքի նորմերի) սոցիալական նշանակության խնդիրը միայն իրավունքի գործառույթների հարցերով, չնայած վերջիններս իրենց մարդկային չափման մեջ տիրապետում են սոցիալական նշանակությամբ, հասարակությունում իրավունքի դերով, բ) իրավունքի սոցիալական նշանակությունը արտահայտվում է անհատական և ինստիտուտային պրոցեսների կարգավորումներում, իրավական կազմակերպության ստեղծման, իրավակարգի աջակցման, պահպանության և պաշտպանության մեջ, գ) իրավունքը արժեքաբանորեն, օբյեկտիվ անհրաժեշտություն է ոչ միայն օրինականության և իրավակարգի ապահովման, այլև հասարակության գործառնությունները և անձի անվտանգությունը ու բարեկեցիկ կյանքը ապահովելու առումով: Դրա այս և այլ հատկանիշներ արտացոլվում են սոցիալական և անհատական նշանակություններում, իրավագիտակցությունում, իրավասուբյեկտիվութ-

յունում, դ) մարդկային շահերի բազմաձևությունը ապահովվում և պաշտպանվում է իրավունքով սուբյեկտիվային իրավունքների մեխանիզմների և կողմերի՝ իրավահարաբերությունների մասնակիցների իրավաբանական պարտականությունների միջոցով, որը «հանգեցնում» է իրավակարգի՝ իրավունքի սոցիալական նշանակության կարևոր բաղադրիչի ծագմանը, պահպանությանը և զարգացմանը, ե) իրավունքի սոցիալական նշանակությունը սահմանվում է ոչ միայն գործող իրավական նորմերի բովանդակությամբ և իրականացմամբ, այլ նաև նորմերով՝ պայմաններով, այսինքն գոյության նորմերով: Դրանց դիալեկտիկան՝ իրավունքի սոցիալական նշանակության և կոչման կարևոր բաղկացուցիչ է, գ) իրավունքի սոցիալական նշանակությունը սահմանվում է ոչ միայն իրավունքի նորմերի բովանդակությամբ և գործնական իրականացմամբ, այլ նաև տարբեր ոչ իրավական, գաղափարական, հոգևոր և այլ փաստաթղթերի բովանդակությամբ, որոնք ուժեղացնում են իրավական կարգավորման սոցիալական նշանակությունը և ուղղվածությունը:

7. Իրավունքը միաժամանակ այն բանի հենքն է, ինչը պետք է կատարի սոցիոմում ապրող մարդը, և կանոնների ամբողջություն է, որոնք կարգավորում են մարդկանց միջև հարաբերությունները: Իրավական նորմն այստեղ հանդես է գալիս ձևի տարր և չի կարող առանձնացվել իրավական հիմքից, այսինքն իրավաբանական համակարգի հիմքից ու նպատակից:

8. Եթե իրավունքը սահմանում ենք որպես սոցիալական երևույթ, ապա մարդը լինելով հասարակական էակ, ապրելով հասարակության մեջ, ներքաշված է լինում անխուսափելի հարաբերությունների համակարգի մեջ, որոնք արմատներով հասնում են մինչև իրերի բուն էությունը: Նույնիսկ մարդկանց համատեղ կյանքի նախնական ձևերը ենթադրում են համայնքի յուրաքանչյուր անդամի անձի հաստատման ինստիտուտի առկայություն և մյուսների կողմից դրա ճանաչում: Ելնելով դրանից, իրավունքը կարող է հավակնել սոցիալական գիտությունների հետ ինտեգրացիայի, ինչը ստիպում է վերանայել իրավունքի սոցիալական բնույթի մասին հարցը և հիմնավորել իրավունքի ընկալումը, որը հիմնված է սոցիալ-գիտական տեսության և իրավաբանական իրավահասկացության վրա:

9. Սոցիալական ընկալման շրջանակներում իրավունքը ձեռք է բերում իր սոցիալ-

իրավական բովանդակությունը, որը նրան բնորոշ և հատուկ է միայն արդարացիի, այդ նախնական սահմանային ու տարրական ընկալմամբ, որը ներմուծում է ոչ միայն տարրական կարգադրություններ, որոնք արգելում են վնաս հասցնել որևէ մեկին կամ յուրաքանչյուրին հատուցել պատշաճը, այլև ենթադրում է նաև հակասական շահերի միջև հավասարակշռություն հաստատելու անհրաժեշտության մասին առավել խորը գաղափար՝ մարդկային հասարակության առաջընթացն ու նրան աջակցություն ապահովող կարգի ամրապնդման նպատակով:

10. Իրավունքը իմացաբանական առումով՝ սոցիալական արդարության, ազատության, ձևական (իրավաբանական) հավասարության նորմատիվ-պաշտոնական արտահայտությունն է: Իրավունքը գոյաբանական առումով՝ սոցիալական բարիք է, հասարակության և նրա բազմաշերտ օրինական շահերի պաշտպանության արդյունավետ և համապարփակ միջոց է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1) Նորմատիվ-իրավական ակտեր և պաշտոնական փաստաթղթեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն: Երևան, 2015:
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Երևան, 2014, 91 էջ:

2) Մասնագիտական գրականություն

1. **Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ.** Տրամաբանություն: Երևան, 2015, 272 էջ:
2. **Դանիելյան Գ.Բ., Այվազյան Վ.Ա., Մանասյան Ա.Ա.** Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն): Երևան, 2015, 240 էջ:
3. **Եսայան Ա.** Պետության և իրավունքի տեսություն: Երևան, 2012, 284 էջ:
4. **Ներսեսյան Վ.Ս.** Իրավունքի և պետության տեսություն: Երևան, 2001, 300 էջ:
5. **Ներսեսյանց Վ.Ս.** Ցիվիլիզմի մանիֆեստը: Երևան, 2000, 83 էջ:
6. Պետության և իրավունքի տեսություն: Գիտ. խմբ. **Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան:** Երևան, 2004, 692 էջ:
7. **Ստեփանյան Հովհաննես** Իրավունքի գոյաբանություն: Երևան, 2012, 224 էջ:
8. **Վաղարշյան Ա.Գ.** Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություններ: Երևան, 2011, 448 էջ:
9. **Аветисян С.С.** Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016, 792 с.
10. Актуальные проблемы теории государства и права. под. ред. **Баранова М.В., Купцова О.Б.** М., 2012, 368 с.
11. Актуальные проблемы теории государства и права. под. ред. **Бострыкина А.И.,** М., 2014, 471 с.
12. **Алексеев С.С.** Восхождение к праву. М., 2001- Норма. 752 с.
13. **Алексеев С.С.** Общая теория права. В 2 томах. М., 1981 - 1982. Высшая школа.
14. **Алексеев С.С.** Общие теория права. М., 2006, 576 с.

15. **Алексеев С.С.** Право на пороге нового тысячелетия. М., 2000. Статут. 256 с.
16. **Алексеев С.С.** Право: азбука - теория - философия. Опыт комплексного исследования. М., 1999. Норма. 712 с.
17. **Алекси Р.** Понятие и действительность права. М., 2011, 192 с.
18. **Байтин М.И.** Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, 2005. 544 с.
19. **Бачинин В.А.** История философии и социологии права. СПб., 2001, 335 с.
20. **Бачинин В.А.** Энциклопедия философии и социологии права. СПб., 2006, 1093 с.
21. **Бержель Ж.-Л.** Общая теория права. М., 2000. Нота Бене. 576 с.
22. **Берман Г.** Западная традиция права: эпоха формирования. М.-1997. Прогресс. 624с.
23. **Васильев А.М.** Правовые категории. Методологические аспекты разработки системы категорий теории права. М., 1986. Мысль. 264 с.
24. **Венгеров А.Б.** Теория государства и права. М., 2012. Норма. 405 с.
25. **Гаджиев Г.А.** Онтология права. М., 2013. 320 с.
26. **Гревцов Ю.И., Козлихин И.Ю.** Энциклопедия права. СПб., 2008, 772 с.
27. **Денис Ллойд.** Идея права. М., 2002, 416 с.
28. **Дробышевский С.А.** История политических и правовых учений. Основные классические идеи. М., 2013, 476 с.
29. **Дробышевский С.А.** Политическая организация общества и право как явления социальной эволюции. М., 2015, 272 с.
30. **Дюги Л.** Конституционное право. М., 2013, 427 с.
31. **Зорькин В.Д.** Цивилизация права и развитие России. М., 2015, 320 с.
32. **Иеринг Р.Ф.** Избранные труды. Том 1. СПб., 2006, 618 с.
33. **Иеринг Р.Ф.** Избранные труды. Том 2. СПб., 2006, 547 с.
34. История политических и правовых учений. Учебник. 4-е изд. Под ред. **В.С. Нерсисянца.** М., 2004, 944 с.
35. **Кашкин С.Ю., Четверников А.О.** Основы интеграционного права. М., 2014, 224с.
36. **Керимов Д.А.** Методология права. М., 2005. Аванта +. 560 с.

37. **Керимов Д.А.** Философские проблемы права. М., 1972. Мысль. 472 с.
38. **Ковалев А.А.** Международная защита прав человека. М., 2013, 591 с.
39. **Корнев А.В.** Социология права. М., 2014, 336 с.
40. **Корнеев А.В.** Государство и право в контексте консервативной и либеральной идеологии: опыт ретроспективного анализа. М., 2013. 320 с.
41. **Лазарев В.В.** Общая теория государства и права. М., 2006, 360 с.
42. **Лазарев В.В.** Теория государства и права (актуальные проблемы). М., 2002, 236с.
43. **Лазарев В.В., Липень С.В., Сомдов А.Х.** Проблемы общей теории jus. М., 2012. 656 с.
44. **Лапаева В. В.** Социология права. М., 2008, 336 с.
45. **Лейст О.Э.** Сущность права. Проблемы теории и философии права. М., 2008, 452 с.
46. **Лукашева Е.А.** Человек, право, цивилизации: нормативно-ценостное измерение. М., 2009, 384 с.
47. **Лукиянова Е.Г.** Теория права и государства. М., 2011. 208 с.
48. **Малахов В.П.** Общая теория права и государства. М., 2013. 144 с.
49. **Малахов В.П.** Право в контексте форм общественного сознания. Принцип правопонимания. М., 2015, 159 с.
50. **Малахов В.П.** Философия права. М., 2001. Инфра М. 118 с.
51. **Мальцев Г.В** Социальные основания права. М., 2007. 800 с.
52. **Мальцев Г.В.** Культурные традиции права. М., 2013. 608 с.
53. **Мальцев Г.В.** Нравственные основания права. М., 2008, 552 с.
54. **Мальцев Г.В.** Понимание права. Подходы и проблемы. М., 1999. Норма. 419 с.
55. **Марченко М.Н.** Правовое государство и гражданское общество. М., 2015, 648 с.
56. **Марченко М.Н.** Тенденции развития права в современном мире. М., 2015, 376 с.
57. **Матузов Н.И., Ушакова Н.В.** Возможность и действительность в Российской правовой системе. М., 2013. 272 с.
58. **Мицкевич А. В.** Источники права. М., 1988, 112 с.
59. **Нерсесянц В.С.** Гегелевская философия права. М., 1974, 286 с.

60. **Нерсесянц В.С.** Общая теория права и государства. М., 2015. Норма. 552 с.
61. **Нерсесянц В.С.** Современное право. Теория и методология. М., 2012. 304 с.
62. **Нерсесянц В.С.** Философия права Гегеля. М., 1998, 352 с.
63. **Нерсесянц В.С.** Философия права. М., 2015, Норма. 848 с.
64. Общая теория государства и права / Под ред. **М.Н. Марченко**. Том 2. М., 1998. Зерцало. 640 с.
65. **Ориу Морис** Основы публичного права. М., 2013, 574 с.
66. **Пернацкий В.И.** Философия политики и права. М., 2013, 224 с.
67. **Познер Р.** Экономический анализ права. Том 1, СПб., 2004, 524 с.
68. **Поляков А.В.** Общая теория права. СПб., 2004. 864 с.
69. **Поляков А.В., Тимошина Е.В.** Общая теория права. СПб., 2005. 472 с.
70. Правовые модели и реальность. Отв. ред. **Ю.А. Тихомиров, Е.Е. Рафалюк, Н.И. Хлуденева**. М., 2014, 280 с.
71. Проблемы общей теории права и государства / Под ред. **В.С. Нерсесянца**. М., 2006. Норма. 832 с.
72. Проблемы теории государства и права / Под ред. **А.В. Малько**. М., 2012. 592 с.
73. Проблемы теории государства и права / Под ред. **М.Н. Марченко**. М., 2015, Проспект. 504 с.
74. **Протасов В.Н., Прастов В.Н.** Лекции по общей теории права и теории государства. М., 2010, 752 с.
75. **Радько Т.Н.** Теория функций права. М., 2014, 272 с.
76. **Рассалов М. М.** Актуальные проблемы теории государства и права. М., 2010, 447с.
77. **Скурко Е.В.** Очерки теории права. М., 2013, 152 с.
78. **Скурко Е.В.** Философия права и правовая жизнь. М., 2011. 176 с.
79. **Смбат Спарпет.** Судебник. Ереван, 1958, 256с.
80. Социология права. Курс лекций. Том 1. Под. ред. профессор **М.Н. Марченко**. М., 2015, 368 с.
81. Социология права. Курс лекций. Том 2. Отв. ред. профессор **М.Н. Марченко**. М.,

2014, 344 с.

82. Стандарты научности и *juridicus* в свете философии права. Отв. ред. **В.Г. Графский**. М., 2011, 224 с.
83. **Сырых В.М.** История и методология юридической науки. М., 2012, 464 с.
84. **Сырых В.М.** Социология права. М., 2001, 480 с.
85. **Сырых В.М.** Теория государства и права. М., 2012. Былина. 512 с.
86. Теория познания. М., 2013, 468 с.
87. **Туманов В.А.** Избранное.... М., 2013, 736 с.
88. Философия и методология науки. М., 2014. Аспект Пресс. 551 с.
89. Философия права. Учебник. Под ред. **О.Г. Данильяна**. М., 2015. 416 с.
90. Философский энциклопедический словарь. М., 2014, 782 с.
91. **Фома Аквинский**. Сумма Теологии. Киев. 2006. Часть 1 и Часть 2.
92. **Честнов И.Л.** Постклассическая теория права. М., 2012. 650 с.
93. **Шагиева Р.В.** Актуальные проблемы права. Учебное пособие. М., 2014, 192 с.
94. **Шамаров В.М.** Актуальные проблемы современной российской теории права. М., 2015, 192 с.
95. **Шлекин С.И.** Проблема права. Философско-методологический аспект. М., 2013. 280с.
96. **Эбзеев Б.Г.** Конституция, власти свобода в России. Опыт синтетического исследования. М., 2014, 336 с.
97. **Эбзеев Б.Г.** Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации. 2-е изд. М., 2013. 656 с.
98. **Яковлев А.М.** Социальная структура общества и право. М., 2015, 368 с.

3) Գիտական հոդվածներ

1. Актуальные проблемы права России и СНГ. - "Государство и право", 2004, N 12, с. 111-116.
2. **Байтин М.И.** О современном нормативном понимании права. // Журнал российского права. № 1. 1999. С. 5-14.
3. **Байтин М.И.** Право и правовая система // вопросы теории государства и права.

Вып 2(11). Саратов, 2000. - С. 16-27.

12. **Графский В.Г.** Интегральная (общая, синтезированная) юриспруденция как теоретическое и практическое задание. - В. Кн. Наш трудный путь к праву. Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсесянца. М., 2006, с. 140-165.
13. **Графский В.Г.** Общая теория права П. Сорокина: на пути к интегральному (синтезированному) правосознанию // Государство и право. 2001. № 1. С. 5.
14. **Гревцов Ю.И.** Социология права. Статус. Предмет. Метод. / Правоведение. 1996. С. 34-40.
15. **Ершов В.В. и др.** Экономическое право и экономическая теория // Государство и право. 2015, № 1, 57-70 с.
16. **Керимов Д.А.** Социология и правоведение // Государство и право. 1999. № 8. С.84-89.
17. **Кудрявцев В.Н.** О правопонимании и законности. // Государство и право. № 3. 1994. С. 12-24.
18. **Лазарев В.В.** Истоки интегративного понимания права. - В кн. Наш трудный путь к праву. Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсесянца. М., 2006, с. 122-139.
19. **Лазарев В.В.** Поиск права. - «Журнал российского права», №7, 2004, 3-14.
20. **Лапаев В.В.** Российская юриспруденция в поисках нового типа правопонимания. В. Кн.: Наш трудный путь к праву. Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсесянца. М., 2006, с. 35-61.
21. **Липень С.В.** Развитие общей теории права как процесс конкретизации научного знания. - Государство и право. 2009. №10. С. 74-79.
22. **Малько А.В.** «Правовая жизнь» как важнейшая категория юриспруденции // Журнал российского права. 2000. № 2. С- 50 - 60.
23. **Малько А.В.** Категория «правовая жизнь»: проблемы становления // Государство и право. 2001. № 5. С. 12-19.
24. **Малько А.В.** Современная российская правовая политика и правовая жизнь

//Правовая политика и правовая жизнь: Академический и вузовский юридический научный журнал. Саратов, 2000. С. 22- 24.

25. **Мартышин О.В.** Совместимы ли основные типии понимания права? - Государство и право. 2003. № 6 С. 13-21.
26. **Марченко М.Н.** Проблемы правопонимания в связи с исследованием источников права. - В. кн. Наш трудный путь к праву. Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсисянца. М., 2005, с. 29-44.
57. **Поляков А.В.** Онтологическая концепция права: опыт осмысления // Право и политика. 2000. № 6. С. 12 -19.
58. **Поляков А.В.** Петербургская школа философии права и задачи современного правоведения // Правоведение. 2000. № 2. С. 23 - 30.
59. **Поляков А.В.** Теория государства и права на рубеже веков: проблемы и перспективы // Правоведение. 2000. № 3. С. 4 - 10.
60. **Толстик В.А.** От плюрализма правопонимания к борьбе за содержания права. // Государство и право. 2009. № 11. С.85-89.
61. **Чиркин В.Е.** Общечеловеческие ценности, философия права и позитивное право //Право и политика. 2000. № 8. С. 4 - 12.

4) Առնախոսություններ և սեղմագրեր

1. **Гусейнов А.И.** Право как феномен культуры. Автореферат дисс... д.ю.н. М., 2007, 35 с.
2. **Иванов А.Г.** Социальное право: формы и сущность административно-правового регулирования в системе социальной защиты:Автореф. дисс. ... канд. филос. наук. Ростов н/Д. 2001, 23 с.
3. **Петелина И.В.** Теоретические проблемы российской правовой системы: Автореферат дисс.... к.ю.н. Саратов, 1996. 32 с.
4. **Поляков А.В.** Коммуникативная концепция права (генезис и теоретико-правовое обоснование). Дисс.... д.ю.н. в виде научного доклада. СПб., 2002. 94 с.
5. **Шундигов К.В.** Цели и средства в праве (общетеоретический аспект): Автореферат дисс.... к.ю.н. Саратов, 1999. 32 с.